Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3093
1908 № 2449

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՍՏԵԱՆԻ

№ 23

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ОБЩЕСТВОЗНАНИЯ
Академии Наук
СССР

ԴԱՍԱԳԻՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ԵՒՐՈՊԱ

Գ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍ

ԿԱԶՄԵՑ
ԼԵՒՈՆ ԲԱԲԱՅԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռօտինեանցի
1907

91(075)
Б-12

91(075)
Բ-12
-5 ОСТ 2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՍՏԵԱՆԻ

№ 23

БИБЛИОТЕКА
ИН СТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԴԱՍԱԳԻՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ԵՒՐՈՊԱ

Գ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍ

ԿԱԶՄԵՑ

ԼԵՒՈՆ ԲԱԲԱՅԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի
1907

26 FEB 2013

ԵՂՈՒՐԱՒՄ Է

ՑԱՐԳԵԼԻ ՏԻԿԻՆ

ԳԱՅԻԱՆԷ ԱԹԱՐԷԳԵԱՆԻՆ

Երախտագիտութեան խորին զգացմունքով

ԿԱԶՄՈՂԸ

61055-67

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Լոյս ենք ընծայում մեր դասագրքի Գ. հատորը՝ Եւրոպայի ընդհանուր աշխարհագրութեան քաղաքական մասը, որ կազմում է մեր դպրոցների Գ. դասարանի կամ վեցերորդ դասընթացը։

Այս հատորն էլ, ինչպէս եւ Բ. հատորը կազմել ենք, այսինքն օգտուել ենք ռուսական եւ գերմանական յայտնի դասագրքերից, մի քանի մասեր փոխադրելով, միւս մասերն էլ ինքնուրոյն կերպով գրելով։ Բ. հատորը լաւ ընդունելութիւն գտաւ մեր դպրոցներում, որի շարունակութիւնը կազմում է այս հատորը։ Միաժամանակ տպագրութեան յանձնեցինք եւ այս դասագրքի առաջին՝ ԲՆԱԿԱՆ մասը, որի լոյս տեսնելը մինչեւ այժմ ձգձգել է մեզանից անկախ պատճառներով, որը, սակայն մօտ ապագայում պատրաստ կլինի, որովհետեւ կարեւոր կլիշէները արդէն ստացած են։

Լ. Բաբայեան

ԵՒՐՈՊԱ

ԵՒՐՈՊԱՅԻ ԴԻՐՔՆ ՈՒ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

Եւրոպան, որ իր մեծութեամբ չորրորդ մայր ցամաքն է, գրեթէ ամբողջապէս գտնւում է հիւսիսային կիսագնդում և աւելի մօտ է հիւսիսային բեւեռին քան հասարակածին կամ էկվատորին։ Բայի Եւրոպայից հիւսիսային կիսագնդում գտնւում են նաև Ասիան և Հիւսիսային Ամերիկան։ Եւրոպայի ամենահիւսիսային ծայրը Նորդկապ հրուանդանն է, որ ընկնում է 71° հիւսիսային լայնութեան տակ, ամենահարաւայինը՝ Տարիֆա հրուանդանը (36° հիւս. լայն. տակ), ամենաարեւմտեանը՝ Հաղոկա հրուանդանը (8° արեւելեան երկարութեան տակ) և ամենաարեւելեանը՝ Կարեան խորշը (85° արեւել. երկ. տակ)։ Ասիայի նման Եւրոպան էլ աւելի իր երկարութեամբ է տարածուած, քան իր լայնութեամբ։ Եւրոպայի ամբողջ մակերեւոյթի տարածութիւնը հաւասար է 180,000 քառ. մղոնի։ Եւրոպան միակ մայր ցամաքն է, որ գրեթէ իր ամբողջ տարածութեամբ գտնւում է հիւսիսային բարեխառն գօտու մէջ։ Բացառութիւն է կազմում նրա հիւսիսային մի փոքրիկ մասը, որ ընկնում է Հիւսիսային Ցուրտ կամ Սառուցեալ գօտու մէջ։ Հէնց այդ է գլխաւոր պատճառը, որ այդ գօտին Եւրոպայի աղգաբնակութեան կեանքի և զարգացման համար հանդիսացել է իբրև ամենայարմարը։

Եւրոպան, որ միւս մայր ցամաքների համեմատութեամբ ամենից շատ կտրատւած մայր ցամաքն է, երեք կողմից շրջապատուած է Ասիա, Ամերիկա և Աֆրիկա մայր ցամաքներով, իսկ միայն արևելեան կողմից անմիջապէս կպած է Ասիային։ Եւրոպան իր դիրքի շնորհիւ հեշտութեամբ հաղորդակցութեան մէջ է մտել իրեն շրջապատող մայր ցամաքների հետ, դարձել է մարդկութեան մտաւոր զարգացման և քաղաքակրթութեան կենդրոնը, որի ազդեցութիւնը հետզհետէ տարածւել է աշխարհի միւս մասերի վրայ։ Նա ներկայացնում է մարդկութեան լուսաւորութեան ամենազլխաւոր կենտրոնը և այնտեղ են ապրում աշխարհիս ամենաքաղաքակրթւած ազգերը։

ԵՒՐՈՊԱՅԻ ԱՓԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Իր ափերի գծագրութեան տեսակէտից Եւրոպան մի բաղմաղան մայր ցամաք է ներկայացնում։ Ատլանտեան և Հիւսիսային Ցուրտ կամ Սառուցեալ ովկիանոսները իրանց մասերով շատ են կտրատում Եւրոպայի ափերը և կազմում բազմաթիւ թերակղզիներ, կղզիներ, հրուանդաններ և այլն։

Եւրոպայի տարածութեան $^1/_3$-ը թերակղզիներ են, իսկ $^1/_{13}$-ը կղզիներ։ Թերակղզիներից նշանաւոր են (Կանին, Կոլա, Սկանդինաւեան (Եւրոպայի ամենամեծ թերակղզին), Ֆինլանդական, Իւթլանդիա, Նորմանդիա, Բրետան, Պիրենեան, Ապենինեան, Բալկանեան և Ղրիմ կամ Տաւրիկեան), իսկ կղզիներից՝ որոնք մեծ մասամբ ցամաքային են, (Նոր-Երկիր, Վայգաչ, Կալգուև, Շպիցբերգէն, Իսլանդիա, Մեծ-Բրիտանիա, Իրլանդիա, Ֆիոնիա, Զելանդիա, Բալեարեան խումբ, Կորսիկա, Սարդինիա, Մալտա, Կրետէ կամ Կանդիա, Էվբէա և Արշիպելագի կղզիներ)։

Երկու ովկիանոսների մասերը կտրատելով Եւրոպայի ափերը, զանազան կողմերից մտնում են մայր ցամաքի ներսը և առաջացնում են բազմաթիւ ծովեր, ծոցեր, խորշեր, նեղուցներ, ջրանցքներ և այլն, որոնք իրանց կողմից զգալի կերպով մեղմացնում են մայր ցամաքի կլիման, բարեխառն դարձնելով նրան։ Այդ ջրերի ափերում Եւրոպան ունի շատ յարմար նաւահանգիստներ, որոնք Եւրոպայի ազգաբնակութեան բազմատեսակ յարաբերութիւններն աշխարհիս միւս մասերի հետ հեշտացնում են։

ԵՒՐՈՊԱՅԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Եւրոպայի մակերևոյթի կազմութիւնը բազմաղան է, մանաւանդ նրա արևմտեան և հարաւային մասերում։ Նա չունի ոչ այնպիսի ընդարձակ և բարձր սարահարթներ, ինչպէս Ասիան և Աֆրիկան, ոչ այնպիսի երկար և բարձր լեռնաշղթաներ, ինչպէս Ամերիկան և ոչ էլ այնպիսի բազմապիսի հարթութիւններ, ինչպէս Աւստրալիան կամ Ովկիանիան։ Եւրոպայի ամենաբարձր լեռնաշղթաները մեծ մասամբ տարածւում են արևմուտքից դէպի արևելք։ Նրա լեռնաշղթաներից ամենաբարձրն է Ալպեան լեռնաշղթան, որի նշանաւոր գագաթն է Մոնբլան։ Վերջինս Եւրոպայի ամենաբարձր գագաթն է, որի բարձրութիւնը ծովի մակերևոյթից մօտ 5 վերստ է։ Միւս լեռնաշղթաներից նշանաւոր են Ապենինեան, Պիրենեան, Բալկանեան, Դինարեան, Կարպատեան, Ֆրանսիական, Գերմանական, Սկանդինաւիական, Ուրալեան և այլն լեռնաշղթաները։ Ուրալեան լեռնաշղթայով Եւրոպան արևելեան կողմում բաժանւում է Ասիայից։ Այդ լեռնաշղթայի հարաւային ծայրի և Կասպից ծովի կամ Վրկանայ լճի մէջ գտնւում է այն ցածր ու հարթ երկիրը, որ յայտնի է

«Ժողովրդների դուռ» անունով, որովհետև մի ժամանակ այդ երկրով են Ասիայից Եւրոպա գաղթել մի շարք ժողովուրդներ, որոնք համարւում են ժամանակակից Եւրոպայի մի քանի ազգերի նախնիքները։

Ուրալեան լեռնաշղթայի արևմտեան կողմում տարածւում է Եւրոպական Ռուսաստանի ընդարձակ հարթութիւնը, որ բռնում է Եւրոպայի ամբողջ տարածութեան գրեթէ արևելեան մասը։ Այդ հարթութիւնը տարածւում է Հիւսիսային Սառուցեալ օվկիանոսից մինչև Կովկասեան լեռները։

Եւրոպայի այդ լեռնաշղթաները ձգւելով ու տարածւելով նրա մակերեսոյթի զանազան մասերի վրայ և իրանց մէջ պարփակում են մի քանի աչքի ընկնող ցածր հարթութիւններ, որոնցից նշանաւոր են. Լոմբարտական, Գերմանական, Ռուսական և այլն հարթութիւնները։

Այդ հարթութիւններն և բազմազան հովիտները, որոնք գտնւում են Եւրոպայի մակերեսոյթի վրայ տարածւող լեռնաշղթաների մէջ, միմեանց հետ սերտ յարաբերութեան մէջ են գտնւում, որովհետև այդ լեռնաշղթաները բարձր չեն, ունին յարմար անցքեր, որոնց շնորհիւ Եւրոպայի բնակիչները կարողանում են իրար հետ հեշտ կերպով հաղորդակցութիւն ունենալ։

ԵՒՐՈՊԱՅԻ ՈՌՈԳՈՒՄԸ

Ռոզման կողմից Եւրոպան նախանձելի դրութեան մէջ է գտնւում։ Նա իր բազմատեսակ ջրերով ամենահարուստ մայր ցամաքներից մէկն է։ Եւրոպան ունի բաւականաչափ գետեր և լճեր, որոնք լաւ ոռոգում են նրա գրեթէ ամբողջ մակերեսոյթը։ Սակայն այդ գետերը Եւրոպայի մակերեսոյթի կազմութեան շնորհիւ միւս մայր ցամաքների գետերի նման

այնքան էլ մեծ չեն։ Այդ գետերը ոչ թէ որոշ, այլ զանազան ուղղութեամբ են հոսում և մեծ մասամբ նաւարկելի են։ Նաւարկելի գետերի առատութեամբ Եւրոպան առաջին մայր ցամաքն է։ Դրանք յաճախ միացած են բնական և արհեստական ջրանցքներով, որոնք Եւրոպայի բնակիչների հաղորդակցութիւնը միմեանց հետ հեշտացնում և մայր ցամաքի ներքին առևտրի զարգացմանը շատ են նպաստում։ Գետերի մեծ հոսանքները մեծ մասամբ զարգանում են Եւրոպայի արևելեան հարթ կէսում և միջին Եւրոպայում, այն ինչ այդ տեսակետից հարաւային երեք թերակղզիների գետերը չնչին նշանակութիւն ունին։ Եւրոպայի գետերը գլխաւորապէս ըսկիզբն են առնում Ալպեան և միջին եւրոպական լեռնաշղթաներից։ Իրանց հոսանքի և ջրառատութեան տեսակէտից Եւրոպայի գետերը կարելի է բաժանել երկու՝ միմեանցից տարբեր տեսակների։ Այն ինչ արևելեան՝ ցածր Եւրոպայի գետերը դանդաղ են հոսում և տարւայ բոլոր եղանակներին ջրառատ չեն լինում, ընդհակառակը արևմտեան Եւրոպայի գետերը արագ են հոսում և ձիւնապատ լեռներից բղխելով, գրեթէ միշտ ջրառատ են։

Եւրոպան լճերով էլ հարուստ է։ Նրա լճերը գլխաւորապէս գտնւում են Բալտիկ ծովի երկու կողմերում՝ Շվեդիայում, Ռուսաստանում, Իրլանդիա կղզու վրայ, Շվէյցարիայում և այլն։

Եւրոպայի գետերից նշանաւոր են. Պէչորա, Մեզէն, Հիւսիսային Դվինա, Օնեգա և Տանա, որոնք թափւում են Հիւսիսային Ցուրտ կամ Սառուցեալ օվկիանոսը. Դալ, Թորնէօ, Նեւա, Նորովա. Արևմտեան Դվինա, Նեման, Վիսլա և Օդեր, որոնք թափւում են Բալտիկ ծովը։ Հիւսիսային կամ Գերմանական ծովը թափւում են Էլբա, Վեզէր, Էմս, Հռենոս, Շելդա և այլն։ Լամանշի ջրանցքը թափւում է Սենա գետը։ Բիսկայեան կամ Գասկոնի ծոցը Լուարա և Գարոննա։ Ատլանտեան օվկիանոսը՝ Մինիօ, Դուրօ, Տախօ, Գվադիանա և

Դվադալկվիվիր։ Միջերկրական ծովը՝ Էբրո, Ռոնա, Պո կամ Պադուս և Տիբեր։ Սև կամ Պոնտական և Ազովի ծովերը՝ Դանուպ, Դնեստր, Դնեպր, Դոն, Կուբան և այլն։ Կասպից ծովը՝ Թերեկ, Վոլգա և Ուրալ գետերը։

ԵՎՐՈՊԱՅԻ ԿԼԻՄԱՆ

Եվրոպան ընդհանրապէս շատ նպաստաւոր կլիմա ունի։ Կլիմայական պայմանների տեսակէտից էլ Եվրոպան գերադասելի է միւս մայր ցամաքներից։ Որովհետև Եվրոպայի տարածութեան ամենամեծ մասը գտնուում է հիւսիսային բարեխառն գօտու ամենացուրտ մասում, դրա համար էլ նրա կլիման բարեխառն և առողջարար է։ Այնտեղ չէ կարելի պատահել կլիմայական այն ծայրահեղ տարբերութիւններին, որպիսին սովորական են Ասիայում։ Եվրոպայի կլիման աւելի տաք է, քան այն միւս մայր ցամաքներինը, որոնք նրա հետ միևնոյն լայնութեան տակ են գտնուում։ Այդ երևոյթն էլ կախուած է մայր ցամաքը ներս մտնող ծովերից, տիրապետող քամիներից, Գոլֆշտրոմի տաք հոսանքից, Եվրոպայի մակերևոյթի կազմութիւնից և Աֆրիկայի հարևանութիւնից։ Արևմտեան և հարաւային կողմերից մայր ցամաքը ներս մտնող ծովերը մեղմացնում են Եվրոպայի ամառուայ և ձմեռուայ եղանակների տարբերութիւնը, դարձնում են ամառը բարեխառն, իսկ ձմեռը տաք։ Առյանտեան ովկիանոսից վերոյիշեալ երկու կողմերով փչում է Եվրոպայի կլիման բաւական մեղմացնող մի քամի։ Բացի դրանից արևմտեան Եվրոպայի ափերով՝ Մեկսիկայի ծոցից փչում է Գոլֆշտրոմի տաք հոսանքը, որ բաւականաչափ մեղմացնում է մայր ցամաքի կլիմայի խստութիւնը։ Դրա համար էլ այդ տաք հոսանքը կոչւում է նաև «Եվրոպայի վառարան»։ Եվրոպայի արևմտեան ափով փչող

հողմերը առաջացնում են յաճախակի անձրևներ, որոնք նոյնպէս մայր ցամաքի կլիմայի մեղմանալուն բաւականաչափ նպաստում են։ Ընդհակառակը կլիմայական տարբեր պայմաններ են տիրում արևելեան Եվրոպայում, որովհետև այնտեղ տիրապետող հողմերը (հիւսիս-արևելեան և արևելեան հողմերը) գլխաւորապէս փչում են Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսից կամ Ասիայի ջրազուրկ անապատներից, որոնք սաստկացնում են ձմեռը և աւելի ևս չորացնում ամառը։

Եվրոպայի հարաւ-արևմտեան մասը, որ միշտ ենթակայ է հարեան Աֆրիկայի անապատներից փչող Սօլանո և Շիրոկկո տաք հողմերին, Եվրոպայում ամենատաք կլիմա ունեցող մասն է։ Հէնց այդ միևնոյն անապատների հարևանութիւնն է գլխաւոր պատճառը, որ հարաւային Եվրոպայում ամառը անձրևներ գրեթէ չեն գալիս։ Որովհետև Եվրոպայի բոլոր մասերն էլ միատեսակ կլիմա չունին, դրա համար էլ այդ մայր ցամաքը կլիմայական պայմանների տեսակէտից բաժանուում է չորս միմեանցից տարբեր մասերի։ ա.) Ռուսական ցածր հարթութեան ձմեռն ու ամառը խիստ տարբերուում են միմեանցից իրանց տաքութեան աստիճանով։ բ.) հարաւային Եվրոպայի թերակղզիներում ամառը չոր, անձրևազուրկ, իսկ ձմեռը տաք և խոնաւ է, գ.) արևմտեան Եվրոպայի կենտրոնական մասի կլիման բռնում է Արևելեան և արևմտեան Եվրոպայի կլիմաների միջին տեղը և դ.) արևմտեան ափային երկրների, մանաւանդ Բրիտանական կղզիների կլիման չնչին տարբերութիւն է ցոյց տալիս ամառուայ և ձմեռուայ տաքութեան մէջ և անձրևներ շատ է բերում։

Սակայն Եվրոպայի կլիման բաժանում են նաև երեք գլխաւոր մասերի արևմտեան-Եվրոպական, Միջերկրական և արևելեան Եվրոպական կլիմաներ։

Արևմտեան եվրոպական կլիման՝ սառուցեալ սառնամանիք

ձմեռը, տաք և անձրևային ամառ՝ Միջերկրական կլիման տաք ու չոր ամառ և մեղմ ձմեռ, իսկ արևելեանը՝ խիստ ձմեռ և տաք ամառ։

ԵՒՐՈՊԱՅԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Եւրոպան իր բարեխառն կլիմայի շնորհիւ շունի այն հրաշալի բոյսերը, որոնք յատուկ են միւս մայր ցամաքներին։ Միւս կողմից էլ Եւրոպայում չկան այնպիսի ընդարձակ տարածութիւններ, որոնք բոյսերից բոլորովին զուրկ լինին։ Եւրոպայի հողը իր հարուստ ոռոգման շնորհիւ կանոնաւոր կերպով մշակւում և արտադրում է մի շարք կուլտուրական ու օգտակար բոյսեր։ Իր բոյսերի առանձնայատկութեան շնորհիւ Եւրոպան սովորաբար բաժանում են հինգ միմեանցից տարբեր բուսական շրջանների. ա) Եւրոպայի հիւսիսային ափերը, որ կազմում են *դոնդրանների* շրջանը։ Այդ շրջանի բոյսերը իրանց քանակով շատ աղքատ են, իսկ եղածներն էլ շատ մանր, որովհետև կլիման այնտեղ շատ ցուրտ է։ Այդ շրջանի բոյսերն են մամուռ, ոլորենի, քոս և մի քանի ուրիշ բանջարեղէններ. բ.) *կոնաբեղենների անտառների* շրջան, որտեղ ամառը բաւական կարճատև և տաքութիւնը չափազանց քիչ է լինում. այդ շրջանում թէև մի քանի տեսակ ծառեր կան, սակայն դրանք կարճ ժամանակի ընթացքումն ենվերջացնում իրանց զարգացման շրջանը։ Այդտեղ մենք ամենուրեք պատահում ենք մշտական կանաչ եղևնի և կաղնի ծառերին. այդ շրջանումն է սկսում և երկրագործութիւնը, որտեղ գլխաւորապէս բանում է գարի և վարսակ. գ.) *Տերևոտ ծառերի* շրջանը, որ սկսւում է երկրորդ շրջանի ծայրից և շարունակւում է մինչև Եւրոպայի երեք հարաւային թերակղզիները։ Եւրոպայի այդ մասում տիրող տաք երկարատև ժամանակի և յաճախակի տեղացող անձրևների շնորհիւ զարգանում են տերևոտ ծառերը, որոնք իրանց տերևներից միայն ձմեռն են զրկւում։ Այդ շրջանի ծառերից նշանաւոր են. կաղնի, թմբի, հացի, տխկի, խնձորի տանձի, շագանակի, և այլն ծառերը. հացահատիկներից՝ ցորեն, գարի, հաճար. բանում է նաև խաղող, դեղձ և այլն. դ.) *Անապատների* շրջանը կազմում է Ռուսական հարթութեան հարաւարևելեան մասը և Ունգարիայի մի որոշ տարածութիւնը, որտեղ կանաչ տերևոտ ծառերը բացակայում են, որովհետև ամառը բաւարար չափով կլիման խոնաւ չէ, իսկ ձմեռն էլ չափազանց խիստ է։ Սակայն այդ շրջանում հացահատիկները, (ցորեն, եգիպտացորեն) և պտղատու ծառերը (խնձորենի, խաղող, դեղձ, նարինջ և այլն) առատ են դ.) *Մշտական կանաչ* ծառերի և հարաւային պտուղների շրջանը բռնում է Պերինեան թերակղզու հարաւային մասը, Ապենինեան և Բալկանեան թերակղզիները և Միջերկրական ծովի բոլոր կղզիները։ Ռուսական այդ շրջանը ունի տաք ձմեռ, որ շատ է նպաստում մշտական կանաչ տերևոտ ծառերի զարգացման, օրինակ ազնիւ դափնի, մրտենի, խցակաղնի, օլեանդր, մշտապալար նոճի, աֆրիկական ագաւին և կղզի։ Իսպանիայի, Իտալիայի և Յունաստանի հարաւային մասերում նոյն իսկ պատահում ենք արևադարձային բոյսերի, օրինակ բանան, արմաւենի և այլն։ Այնտեղ բացի ցորենից, եգիպտացորենից, բրնձից, խաղողից և ձիթապտղից աճում են նաև նարինջ, լիմոն. թուզ, թուզի, նուշ, շարաբեղէգն, բամբակ և այլն։

ԵՒՐՈՊԱՅԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Եւրոպայի կենդանական աշխարհը մեծ մասամբ նման է հարևան Ասիայի ֆաունային։ Բայց որովհետև Եւրոպան խիտ աղդաբնակութիւն ունի և հողը գրեթէ ամեն տեղ մշակ-

ւած է, դրա համար էլ Եւրոպայում անհամեմատ աւելի քիչ վայրենի կենդանիներ կան, քան Ասիայում։ Դրա փոխարէն Եւրոպան հարուստ է իր ընտանի օգտակար կենդանիներով։ Եւրոպայի ազգաբնակութիւնը երկար ժամանակի ընթացքում կարողացել է ազնուացնել ընտանիների ամենալաւ տեսակները։ Այդ տեսակէտից Եւրոպայի օրինակին հետևել է միւս մայր ցամաքներից գլխաւորապէս Ամերիկան։ Վայրենի կենդանիներով աչքի են ընկնում Եւրոպայի միայն այն երկրները, որոնք շատ նոսր ազգաբնակութիւն ունին։ Սկզբում այդ վայրենի կենդանիների տեսակները և թիւը շատ մեծ է եղել Եւրոպայում, սակայն դրանք ժամանակի ընթացքում ոչնչացրել են բնակիչների շնորհիւ։ Եւրոպայի վայրենի կենդանիներից մինչև այսօր մնացել են միայն գայլերը, արջերը, եղջերուի մի տեսակը, վայրի այծն և այլն։ Եւրոպայի թռչունները միւս մայր ցամաքների թռչուններից թէև ընդհանրապէս մանր են, բայց աւելի լաւ են երգում։ Ծովային կենդանիների թիւը բաւական մեծ է. դրանցից յայտնի են բրաձուկ, ծովացուլ, և այլն։ Ընտանի կենդանիներից նշանաւոր են ձի, կով, ոչխար, այծ, խոզ և այլն։

ԵՒՐՈՊԱՅԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Եւրոպան միւս մայր ցամաքների համեմատութեամբ ամենախիտ ազգաբնակութիւն ունեցող մայր ցամաքն է։ Նա ունի մօտ 390 միլիոն բնակիչ, հետևապէս այնտեղ իւրաքանչիւր քառակուսի մղոնի վրայ ապրում են մօտ 40 հոգի։ Սակայն Եւրոպայի բոլոր մասերը չունին խիտ ազգաբնակութիւն։ Հարաւ-արևմտեան Եւրոպան հիւսիս-արևելեան Եւրոպայից աւելի խիտ ազգաբնակութիւն ունի։

Եւրոպայի գրեթէ բոլոր ազգերը պատկանում են Մի-

ջերկրական կամ Կովկասեան (սպիտակ) ցեղին. բացառութիւն են կազմում միայն Ֆիններն (Ֆինլանդիայում), ունգարները կամ մաճառները (Ունգարիայում, Թիւրքերը կամ տաները կամ մաճառները (Ունգարիայում, Թիւրքերը կամ տաճիկները (Բալկանեան թերակղզու վրայ) և Թաթարները (հարաւ-արևելեան Ռուսաստանում), որոնք պատկանում են մոնղոլեան ցեղին։ Սակայն այս վերջին ցեղը ժամանակի ընթացքում խառնուելով միջերկրական ցեղին պատկանող ազգերի հետ, կորցրել է իր առանձնայատուկ տիպը։

Ըստ իրանց լեզուի Եւրոպայի ազգերը բաժանւում են երեք խմբերի. Սլաւոնական, Գերմանական, և Ռոմանական ազգեր։ Սլաւոնական ազգերը (135 միլ.) գլխաւորապէս ապրում են Եւրոպայի արևելեան մասում, որ տարածւում է մինչև Էլբա գետը և Բալկանեան թերակղզու վրայ։ Սլաւոնական ազգերն էլ բաժանւում են երեք խմբերի. արևելեան սլաւոններ (ռուսներ, ռութէններ և այլն), հարաւային սլաւոններ (Աւստրիայի սլաւենները, խրուաթները, սերբերը, չերնոգորացիները, բոսնիացիք, բուլղարները և այլն) արևմտեան սլաւոններ (գերմանական սլաւոնները, վենդերը, լեհայիները, չեխերը և՛ սլուակները)։

Գերմանական ազգերը (130 միլ.) ապրում են սլաւոնական ազգերից դէպի արևմուտք մինչև Հռենոս գետը, Իւթլանդիա և Սկանդինաւեա թերակղզիների և Մեծ Բրիտանիա և Իրլանդիա կղզիների վրայ։ Գերմանական ազգերը հետևեալներն են. շվեդներ և նորվեգները (Սկանդինաւիա թերակղզու վրայ), դանիացիները (Իւթլանդիա թերակղզու վրայ), հոլլանդացիները (Հոլլանդիայում), Գերմանացիները (Գերմանական և Բալտիկ ծովերի ափերից դէպի հարաւ մինչև Ալպեան լեռնաշղթայի այն կողմը) և անգլիացիները (Մեծ Բրիտանիա թերակղզու վրայ)։

Ռոմանական ազգերը (115 միլ.) ապրում են Գերմանական ազգերից դէպի արևմուտք և Ապենինեան ու Պիրինեան

թերակղզիների վրայ։ Այդ ազգերին պատկանում են *փորթուգալացիներն և իսպանացիները* (Պիրենեան թերակղզու վրայ), *իտալացիները* (Ապենինեան թերակղզու վրայ), *ֆրանսիացիներն և վալլոնները* (Ալպերից դէպի արևմուտք) և *ռումինացիները* (ստորին Դանուպեան հարթութեան վրայ)։

Եւրոպայի գրեթէ ամբողջ ազգաբնակութիւնը կրօնով քրիստոնեա է։ 390 միլիոն բնակիչներից քրիստոնեա չեն միայն *հրէաները* (8 միլիոն), *մահմեդականները* (7 միլ.) և *կալմիկները* (Վոլգայի ափերին), *զնչունները* և *ուրիշները* (2 միլ.)։ Քրիստոնեաներից *սլաւոնական* ազգերը դաւանութեամբ ուղղափառ են, *գերմանական* ազգերը՝ *բողոքական* և *ռոմանական* ազգերը՝ *կաթոլիկներ*, բացի *ռումինացիներից*։

Եւրոպայի 26 *պետութիւններից* 23 միապետութիւններ են, 4-ը հանրապետութիւն, 2-ը միացեալ պետութիւններ (Աւստրիա և Ունգարիա և Ռուսաստան ու Ֆինլանդիա), 3-ը սասսալական պետութիւններ (Բուլգարիա, Մոնակո և Անդորրա)։ Դրանցից Գերմանիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Աւստրո-Ունգարիան և Ռուսաստանը կոչւում են մեծ պետութիւններ, իսկ մնացած պետութիւններն երկրորդական կամ երրորդական նշանակութիւն ունին։

Եւրոպա մայր դամաքը իր նպաստաւոր կլիմայի, մակերևոյթի կազմութեան և դիրքի շնորհիւ պատմական ժամանակներից ի վեր առաջին տեղն է գրաւել միւս մայր ցամաքների վերաբերմամբ և այդ տեղն էլ մինչև այսօր էլ պահպանում է ներկայացնելով համաշխարհային պատմութեան, առևտրի և հաղորդակցութեան գլխաւոր կենդրոնը։

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

61055-67

Ա. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵՒՐՈՊԱ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՒ ԱԶԳԵՐԸ

Հարաւային Եւրոպա ասելով հասկանում ենք մայր ցամաքի հարաւային այն երեք մեծ թերակղզիները, որոնք գտնւում են Միջերկրական ծովի ափին։ Դրանք են Բալկանեան (Ռումինիայով), Ապենինեան և Պիրենեան թերակղզիները, որոնց տարածութիւնը կազմում է ամբողջ մայր ցամաքի տարածութեան գրեթէ $^1/_4$ մասը, իսկ ազգաբնակութիւնը մօտ $^1/_6$-ը։ Հարաւային Եւրոպայի տարածութեան և ազգաբնակութեան մէջ համաչափութիւն չկայ նրա համար, որովհետև Պիրենեան և Բալկանեան թերակղզիները համեմատաբար աւելի նոսր ազգաբնակութիւն ունին։

Եւրոպայի հարաւային երեք թերակղզիներից մէկն է Բալկանեան թերակղզին, որի տարածութիւնն է 8000 քառ. մղոն և ունի 18 միլիոն բնակիչ։ Այդ թերակղզին միւս երկու թերակղզիներից տարբերւում է նրանով, որ շրջապատող ծովով աւելի շատ է կտրատւած և աւելի շատ յարմար ծոցեր ու նաւահանգիստներ ունի։ Աշխարհիս և ոչ մի երկիրը շրջապատող ծովով այնքան շատ չէ կտրատւած, ինչպէս Բալկանեան թերակղզու հաւաւային մասը, որ կոչւում է Պելոպոննէս կամ Մորէա։ Այս թերակղզու արևելեան ափը աւելի շատ է կտրատւած, քան արևմտեանը, որ աւելի ժայ-

Հայ. ՍՍՌ Գիտ. Գրադարան Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм. ССР им. А. Мясникяна Ա. Մյասնիկյանի անվան

ռոտ, ճահճային և դժուարամատչելի է։ Դրա համար էլ թերակղզու արևելեան ափը ունի մի շարք յարմար նաւահանգիստներ։

Միջերկրական ծովի մասերը, որոնք երեք կողմից շրջապատում են Բալկանեան թերակղզին, ձևացնում են մի մի քանի՝ աւելի մանր թերակղզիներ, որոնցից նշանաւոր են. Գալլիպոլի, Քալքետոնի, Մորէա և այլն թերակղզիները։ Թերակղզու հարաւային մասի ափերի մօտ գտնւում են մի շարք կղզիներ. օր. Էվբէա, Սրշիպէլագի խումբը, Կրէտէ կամ Կանդիա, Յոնիական խումբը, որից յայտնի են Կորֆու, Կեֆալոնիա, Զանթէ և այլն։

Բալկանեան թերակղզու մակերեւոյթի կազմութիւնը բազմազան է, որը երբէք նման չէ Եւրոպայի և ոչ մէկ թերակղզու։ Նրա վրայ գտնւող լեռնաշղթաները տարածւում են կամ հիւսիս-արևմուտքից դէպի հարաւ-արևելք կամ արևմտքից դէպի արևելք։ Հաւանական է ենթադրել, որ մի ժամանակ Բալկանեան թերակղզու հարաւային մասը՝ ներկայ Յունաստանը միացած է եղել Փոքր-Ասիա կամ Անատոլիա թերակղզու հետ, բայց յետոյ վուլկանական ոյժերի շնորհիւ այդ երկու թերակղզիներն իրար հետ միացնող մասը խորասուզւել է ջրի տակ և կազմւել է այժմեայ Եգէյեան ծովը։ Այս վերջին ծովի մէջ գտնւող մի շարք մեծ ու փոքր կղզիները հէնց այդ խորասուզւած ցամաքի մնացորդներն են։ Բալկանեան թերակղզու վրայ տարածւող լեռնաշղթաներից նշանաւոր են Դինարեան անտառազուրկ լեռնաշղթան, Սեւ լեռներ կամ Ղարադաղ, Բոսնիական և Սերբիական լեռնաշղթաները, որոնց հովիտներով հոսում են Բոսնա, Դրինա և Մորաւա գետերը, Բալկանեան լեռնաշղթան, որի ճիւղերից սկիզբն են առնում Մարիցա, Ստրիմոն և Վարդար գետերը։ Յետոյ նշանաւոր են Օլիմպոս և Պինդոս լեռները։

Բալկանեան թերակղզու վրայ տարածւող լեռները երկրի մակերեւոյթը բաժանում են բազմաթիւ՝ միմեանցից բոլորովին անջատւած մասերի, որոնք բնակիչների հաղորդակցութիւնը միմեանց հետ դժուարացնում են։ Դրա համար բնական է, որ Բալկանեան թերակղզին չունի մեծ, ջրառատ և նաւարկելի գետեր։ Բացառութիւն է կազմում միայն Դանուպ գետը։

Բալկանեան թերակղզու կլիման Եւրոպայի հարաւային միւս թերակղզիներից աւելի ցուրտ է։ Ըստ իր կլիմայի այդ թերակղզին բաժանւում է հիւսիսային և հարաւային մասերի։ Հիւսիսային մասի կլիման աւելի ցուրտ և ցամաքային է, քան հարաւային մասինը։ Այնտեղ լինում է ցուրտ ձմեռ, շոր ամառ և անձրևային աշուն։ Հարաւային մասը, ընդհակառակը ունի շատ տաք ամառ և մեղմ ձմեռ։

Բալկանեան թերակղզու ծառերից նշանաւոր են. կաղնի, փեկոնի, խցանակաղնի, մրտենի, նոճի, դափնի և այլն ծառերը. հացահատիկներից նշանաւոր է ցորեն, եգիպտացորեն, ծառերից՝ խնձորենին, տանձենին, կեռասենին, դեղձ, նարինջ, խաղող, ձիթապտուղ, լիմոն, ֆիւնիկեան արմաւենին և այլն։

Բալկանեան թերակղզու ազգաբնակութիւնը բազմազան է։ Այդ ազգաբնակութիւնը բաղկացած է զանազան ժողովրդներից, որոնցից ոմանք Եւրոպայի նախնական բնակիչներն են, ոմանք էլ մեզանից մի քանի դար առաջ են գաղթել այդ թերակղզին։ Ազգաբնակութեան գլխաւոր տարրը պատկանում է սլաւոնական ցեղին՝ որից նշանաւոր են սերբերը (ապրում են թերակղզու հիւսիս-արևմտեան մասում), բուլղարները (Բալկանի երկու կողմերում), ռումինացիները (Դանուպի հարթութեան վրայ՝ բուլղարներից դէպի հիւսիս), յոյները (բուլղարներից և սերբերից դէպի հարաւ, Եգէյեան ծովի ափերում և կղզիների վրայ), աշքանացիները (թերակղզու ամենահին ժողովուրդը, որոնք նոյնպէս բուլղարներից և սերբերից դէպի հարաւ են ապրում) թիւրքերը կամ տա-

ճիկները (որոնք ապրում են թերակղզու զանազան մասերում, գլխաւորապէս Ռումելիայի և Բուլղարիայի քաղաքներում)։ Բացի վերոյիշեալ ազգերից Բալկանեան թերակղզու վրայ ապրում են նաև բաւականաչափ հայեր, թաթարներ, գնչուներ, հրէաներ, չերքէզներ և այլն։ Բալկանեան թերակղզու աղգաբնակութեան մեծ մասը կրօնով քրիստոնեայ է, իսկ փոքր մասը մահմեդական (թիւրքերը, թաթարները, ալբանացիները, չերքեզները և այլն)։

Բալկանեան թերակղզու ժողովրդների վրայ երկար ժամանակ ծանրացել էր թիւրքական լուծը։ 15-րդ դարում թիւրքերը նուաճեցին Բալկանեան թերակղզին և վերոյիշեալ ժողովրդներին ձգեցին իրանց տիրապետութեան ներքոյ։ Սակայն 19-րդ դարի ընթացքում թերակղզու ժողովրդներից շատերը կռիւ մղելով տաճիկների դէմ, քաղաքական անկախութիւն ստացան և հիմնեցին իրանց համար անկախ ու ինքնուրոյն պետութիւններ։ Թիւրքերը թերակղզու վրայ իրանց զօրութեան և փառքի գագաթնակէտին էին հասել Սուլէյման (1520—1566) սուլթանի ժամանակ, երբ թիւրքերին հպատակում էր ոչ միայն Բալկանեան թերակղզու մեծ մասը, այլ և Ունգարիան, Ռումինիան և Սև ծովի ափային մի քանի երկրները։ 17-րդ դարում թիւրքերը հետզհետէ զրկւում են իրանց նուաճած երկրներից, որ և շարունակւում է մինչև այսօր։ Ամենից առաջ թիւրքերը քշեցին Ունգարիայից, յետոյ՝ ռուսները նուաճեցին Դոնի գետաբերանից մինչև Պրուդ հասնող երկիրը. 19-րդ դարու առաջին կիսում յոյները քաղաքական անկախութիւն ստացան։ Ռուս-Տաճկական պատերազմից (1877—78) յետոյ թիւրքերը կորցրին Ռումինիան, Սերբիան և Ղաբադաղը, Բուլղարիան վասսալական պետութիւն դարձաւ Բոսնիան և Հերցոգովինան ընկան աւստրիական կառավարութեան ներքոյ, իսկ Կրետէ կամ Կանդիա կղզին էլ 1898 թուին ինքնավար երկիր դարձաւ։

Ներկայումս Բալկանեան թերակղզին բաղկացած է հետեւեալ պետութիւններից. Ռումինիայի թագաւորութիւն, Զնը-նօգորիայի իշխանութիւն, Յունաստանի թագաւորութիւն, Բուլղարիայի վասսալական իշխանութիւն, Թիւրքիայի եւրոպական մասը, և Սերբիայի թագաւորութիւն։

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ռումինիայի թագաւորութիւնը, որի տարածութիւնը 2400 քառ. մղոն է, գտնւում է Բալկանեան թերակղզու հիւսիս-արևելեան կողմում։ Ռումինիան, որ ամբողջապէս ողողւում է Դանուպ գետով և նրա մի քանի վտակներով, բաղկացած է երեք գլխաւոր մասերից՝ Մոլդավիա, Վալախիա և Դոբրուշա։ Մոլդավիան կազմում է Ռումինիայի հիւսիսային մասը և գտնւում է Տրանսիլվանիայի սարահարթի արևելեան կողմում մինչև Պրուտ գետը։ Վալախիան Ռումինիայի հարաւային մասն է կազմում և բռնում է ստորին—Դանուպեան հարթութիւնը մինչև Դանուպ գետը, իսկ Դոբրուշան կազմում է Ռումինիայի հարաւ-արևելեան մասը և հասնում է մինչև Սև կամ Պոնտական ծովը։

Ռումինիայի մակերևոյթի կազմութիւնը այնքան էլ լեռնոտ չէ, ինչպէս Բալկանեան թերակղզու միւս երկրները։ Եղած լեռները ծածկւած են անտառներով, որոնք աղգաբնակութեան մեծամեծ օգուտներ են տալիս։ Նրա կլիման ցամաքային է, ունի տաք ամառ և դաժան ձմեռ։ Ռումինիայի տարածութեան $^1/_3$ մասը շատ պտղաբեր է և խնամքով մշակւում է, տալով բաւականաչափ ցորեն և ուրիշ հացահատիկներ, որոնք արտահանւում են նաև ուրիշ երկրներ։ Յայտնի են նաև ռումինական գինին, ծխախոտը, ոչխարները, այծերը և հանքային հարստութիւնները (նաւթ, աղ և այլն)։

Երկրի արդիւնագործութիւնը բաւական զարգացած չէ։ Գործարանական ապրանքների մեծ մասը ներմուծւում է Եւրոպայի մի քանի երկրներից, որոնց փոխարէն հում նիւթեր են արտահանում։ Ռումինիայի վաճառականութիւնն էլ այնքան նախանձելի չէ, որովհետև հաղորդակցութեան համար յարմար ճանապարհներ չկան։

Ռումինիայի գլխաւոր բնակիչները ռումինացիները կամ վալախներն են, որոնք պատկանում են ռոմանական ցեղին և ուղղափառ դաւանութեան։ Բացի նրանցից այնտեղ ապրում են հրէաներ (250 000), հայեր, յոյներ, բուլգարներ, գնչուներ և այլն։ Ռումինիայի ազգաբնակութիւնը (6 միլիոն) գլխաւորապէս պարապում է հողագործութեամբ և անասնապահութեամբ։ 1881-թուից ի վեր Ռումինիան սահմանադրական մի թագաւորութիւն է։ Թագաւորի իրաւունքները սահմանափակում են սենատը և պատգամաւորական ժողովը։

Ռումինիայի քաղաքներից նշանաւոր են, *Բուխարէստ*, տէրութեան մայրաքաղաքը և թագաւորի աթոռանիստը։ Ունի 206,000 բնակիչ և համալսարան։ *Գալաց* և *Բրաիլով* առևտրական նշանաւոր քաղաքներ են։ *Նասսի*, որի բնակիչների գրեթէ կէսը հրէաներ են։ Հրէաների դրութիւնը ընդհանրապէս աննախանձելի է Ռումինիայում։

ՀԵՐՆՕԳՕՐԻԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Հերնօգօրիայի տարածութիւնն է 160 քառ. մղոն, որի վրայ ապրում են մօտ 260,000 բնակիչ։ Այս երկիրը մի լեռնոտ և դժուարամատչելի տարածութիւն է ներկայացնում, որի պատերազմասէր բնակիչները յայտնի են թիւրքերի կամ տաճիկների դէմ մղած մի քանի պատերազմներով։ Հեր-

նօգօրիան կրում է նաև հետևեալ անունները. *Սև-Լեռնաստան*, *Ղարադաղ* կամ *Մօնտենեգրօ*։

Երկիրը հողագործութեան համար շատ աննպաստ է. դրա համար էլ նրա բնակիչները գլխաւորապէս պարապում են անասնապահութեամբ և մեղուաբուծութեամբ։ Հերնօգօրիացիները պատկանում են սլաւօնական ցեղին, դաւանութեամբ ուղղափառներ են և սերբերին ցեղակից։

Իշխանութեան մայրաքաղաքն է *Ցետինէ*, իսկ նշանաւոր նաւահանգիստը *Անտիվարի*։

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Յունաստանը բռնում է Բալկանեան թերակղզու ամենահարաւային և ամենատաք մասը, որի ափերն ամենից շատ են կտրատուած շրջապատող ծովերով։ Նրա տարածութիւնն է 910 քառ. մղոն, որի վրայ ապրում են մօտ $2^1/_2$ միլիոն բնակիչ։ Յունաստանի սահմանները են հիւսիսային կողմից Մակեդոնիան, հիւսիս-արևմտեան կողմից Ալբանիան (հին Էպիրոսը, իսկ միւս կողմերով շրջապատուած է Յոնիական և Արշիպելագի ծովերով։ Յունաստանին են պատկանում նաև հետևեալ կղզիները. *Էվբէա* կամ *Նեգրոպոնտ*, *Կորֆու*, *Դեֆալոնիա*, *Զանթէ*, *Ցիկլաթիան* և *Սպարոտիան* կղզիների մի մասը։ Յունաստանը ընդհանրապէս մի լեռնոտ երկիր է, որի լեռները մեծ մասամբ ծածկուած են անտառներով։ Նրա տարածութեան մեծ մասը նպաստաւոր չէ հողագործութեան համար և տեղական հացահատիկները բաւականութիւն չեն տալիս բնակիչներին։ Յունաստանը օտար երկրներից ներմուծում է հացահատիկներ, բարաձուխ, կաշուեղէն, անասուններ և այլն, իսկ արտահանում է դէպի օտար երկրներ գինի, ծխախոտ, թուզ, մետաղներ և ձիթապտուղ։

Յունաստանի բնակիչները պարապում են հողագործութեամբ, առևտրով, արհեստներով, անասնապահութեամբ և մետաքսագործութեամբ։ Յունական ծովեզերքի բնակիչները պապարապում են նաւաշինութեամբ և ձկնորսութեամբ։ Սակայն ամենից շատ աչքի են ընկնում յոյները իբրև վաճառական ժողովուրդ, որին շատ է նպաստում նրանց հայրենիքի աշխարհագրական դիրքը։ Յունաստանի ամենանշանաւոր առևտրական նաւահանգիստները գտնւում են նրա արևելեան ափում, որն իբրև շատ և յարմար կտրատւած ցամաք, աշխարհիս առաջինն է։

Յունաստանի ներկայ բնակիչները համարւում են հնադարեան քաղաքակրթւած և կլասիկ յոյների սերունդը, որը մինչև այսօր կարողացել է պահպանել իր հռչակաւոր նախնիքների կուլտուրական ստեղծագործութեան միայն բազմազան յիշատակարանները։ Յունաստանը հին դարերում իր քաղաքական անկախութիւնը կորցնելուց յետոյ ընկաւ սկզբում Մակեդոնիայի և յետոյ Հռոմի իշխանութեան տակ։ Յոյների դրութիւնը աւելի անտանելի դարձաւ այն ժամանակ, երբ նրանց վրայ ծանրացաւ Թիւրքերի կամ օսմանցիների լուծը, որից ազատեցին միայն 19-րդ դարի երրորդ տասնամեակում և կազմեցին իրանց անկախ պետութիւնը։

Յունաստանը սահմանադրական միապետութիւն է, որի ներկայ Գէորգ թագաւորը դանիական թագաւորական տանից է։ Յունական պետութիւնը 1897 թուից ի վեր ունի լաւ կազմակերպւած զօրք և պատերազմական նաւատորմ։ Վարչական տեսակէտից Յունաստանը բաժանւում է 14 մասերի, սակայն նա իր դիրքով և մակերեսոյթի կազմութեամբ բաժանւում է հետևեալ մասերի, *Հիւսիսային*, *Միջին* և *Հարաւային* Յունաստան։

Հիւսիսային Յունաստանի գլխաւոր մասը կազմում է պտղաւէտ *Թեսալիան*, որի գլխաւոր քաղաքն է *Լարիսսա*։

Միջին Յունաստանում կամ Լիվադիայումն (հին Հելլադան) է գտնւում երկրի մայրաքաղաք և թագաւորի ամրոնանիստ *Աթէնքը*։ Այս քաղաքը գիտական տեսակէտից աշխարհիս ամենահետաքրքիր քաղաքներից մէկն է կազմում, որովհետև իր մէջ և շրջակայքում ամփոփում է հին յունական քաղաքակրթութեան բազմատեսակ յիշատակարանները։ Աթէնքն ունի 100,000 բնակիչ և համալսարան։ Աթէնքի նաւահանգիստն է *Պիրէյ*, որ երկրի առևտրի նշանաւոր կենդրոնն է։ *Հարաւային* Յունաստանում կամ *Մօրէայում* (հին Պելոպոննէս) նշանաւոր է *Պատրաս* նշանաւոր նաւահանգիստ-քաղաքը, որ երկաթուղիով միացած է Աթէնքի հետ։ Այդ քաղաքի բնակիչները պարապում են ձէթի, մետաքսի և անասունների առևտրով։ Յունաստանի հարաւային մասերումն է գտնւում և հնադարեան *Սպարտա* քաղաքը, որ այժմ բաւական աննշան է։

Յունաստանին պատկանող կղզիների վրա նշանաւոր քաղաքների թիւը քիչ է։ Նշանաւոր է *Կորֆու*, որ գտնւում է համանուն կղզու վրայ, ունի համալսարան և նշանաւոր նաւահանգիստ։ Երկրորդ յայտնի քաղաքն է *Հերմուպօլիս* (Հերմէսի քաղաք), որ գտնւում է Արշիպելագի մանր կղզիներից մէկի վրայ և առևտրական քաղաք է։

Թէ իսկական Յունաստանում և թէ նրան պատկանող կղզիների վրայ ապրում են և բաւականաչափ հայեր, որոնք մեծ մասամբ գաղթել են այնտեղ Թիւրքիայի հայաբնակ գանգան նահանգներից։

ԲՈՒԼԳԱՐԻԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Բուլգարիայի վասալական իշխանութիւնը գտնւում է Ռումինիայի, Սերբիայի և եւրոպական Թիւրքիայի մէջ։ Նրա ամբողջ տարածութիւնը 1160 քառ. մղոն է, որի վրայ ապ-

գում է 3 ³/₄ միլիոն բնակիչ։ Չնայելով որ Բուլղարիան շատ քարեր հող ունի, սակայն միայն նրա մի չնչին մասն է մշակւում։ Ջանասէր և աշխատասէր բուլղարները աւելի հակւած են դէպի արհեստները և դրանցով են մեծ մասամբ իրանց գոյութիւնը պաշտպանում։ Բուլղարիայի իշխանութիւնը հիմնւեց 1878 թւին՝ ռուս-տաճկական վերջին պատերազմից յետոյ։ Բուլղարիայի ազգաբնակութեան տիրող մասը կազմում են բուլղարները, որոնք պատկանում են ուղղափառ դաւանութեան և կառավարւում են մի իշխանով, որ ճանաչում է Թիւրքիայի սուլթանի գերիշխանութիւնը։ Բացի տիրապետող բնակիչներից, Բուլղարիայում ապրում են նաև բաւականաչափ հայեր, որոնք նրա զանազան քաղաքներում ունին իրանց սեպհական թաղերը, եկեղեցիները, դպրոցները, բարեգործական հիմնարկութիւնները և այլն։ Բուլղարիայի բնակիչների մեծ մասը պարապում է արհեստներով և անասնաբուծութեամբ։

Բուլղարիայի իշխանութեան մայրաքաղաքն և ամենամեծը Սոֆիան է, որ ունի համալսարան։ Առևտրական քաղաքներից նշանաւոր են Վառնա, Ռուսչուք, և Տըրնովօ, իսկ քերդաքաղաքներից՝ Շումլա։

Բուլղարիայի հարաւային մասը կոչւում է Արևելեան Ռումելիա, որ Բերլինի կոնգրէսի որոշման համեմատ պէտք է կառավարւէր մի առանձին քրիստոնեայ նահանգապետով, սակայն այդ իշխանութիւնը այժմ իրականապէս պատկանում է Բուլղարիայի իշխանին։ Այդ մասի գլխաւոր բնակիչները կազմում են բուլղարները և թիւրքերը։ Գլխաւոր քաղաքներն են Փիլիպպօպօլ՝ Մարիցա գետի ափին և Կազանլըգ, որի բնակիչները պարապում են իւղի առևտրով։ Վարդաշատ լինելու պատճառով Կազանլըգ քաղաքը կոչւում է Բալկանների թերակղզու «Գիւլիստանը»։ Նշանաւոր է նաև Բուրգաս նաւահանգիստը։

ՍԵՐԲԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Սերբիայի թագաւորութիւնը գտնւում է Դանուպ գետի, Բուլղարիայի և Բոսնիայի մէջ։ Նրա ամբողջ տարածութիւնն է 900 քառ. մղոն, որի վրայ ապրում են մօտ 2¹/₂ միլիոն բնակիչ։ Սերբիան ներկայացնում է մի լեռնոտ, բայց և միևնոյն ժամանակ պտղաբեր երկիր, որ գլխաւորապէս ոռոգւում է Մորավա գետով։ Նրա ոչ այնքան բարձր լեռները մեծ մասամբ ծածկւած են անտառներով, որոնց այնքներում գտնւում են ընդարձակ արօտատեղիներ։ Սերբիայի լեռները բաւական հարուստ են հանքերով, որոնք բնակիչների կողմից ցանկալի կերպով չեն շահագործւում։ Սերբիայի ազգաբնակութեան գլխաւոր տարրը կազմում են սերբերը, որոնք պատկանում են ուղղափառ դաւանութեան։ Բնակիչները պարապում են հողագործութեամբ, անասնապահութեամբ և վաճառականութեամբ։ Արտաքին առևտուրը բաւական զարգացած է։ Արտահանում են հացահատիկներ, իւղեր, կաշուեղէններ, գինի և ներմուծում են գործարանական ապրանքներ օտար երկրներից։

Սերբերը 15-րդ դարի կիսին ընկան թիւրքերի տիրապետութեան ներքոյ և քաղաքական անկախութիւն ձեռք բերին միայն 1815 թւին, չնայելով որ այդ անկախութիւնը սահմանափակ էր։ Նրանք իսկական անկախութիւն ստացան 1877 թւին, երբ Ռուսների հետ միասին կռւեցին թիւրքերի դէմ։ Այդ թւականին ընդարձակւեց Սերբիայի սահմանը հարաւային կողմից։ Ներկայումս Սերբիան ներկայացնում է սահմանադրական միապետութիւն և ունի ժողովրդական ներկայացուցչութիւն, Սկուպշչինա անունով։

Սերբիայի թագաւորութեան մայրաքաղաքն և ամենա-

թեան աթոռանիստն է Բելգրադ, որ գտնւում է Դանուբ գետի ափին և ունի բաւական գործարաններ։ Միւս քաղաքներից նշանաւոր է Նիշ։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹԻՒՐՔԻԱ

Եւրոպական Թիւրքիան կամ Տաճկաստանը, որի տարածութիւնն է 4000 քառ. մղոն, գտնւում է Բալկանեան թերակղզու միջին մասում՝ Բուլղարիայի, Յունաստանի, Հերցեգովինայի, Աւստրիայի և Սերբիայի մէջ։ Նրան է պատկանում նաև Եւրոպայի Սամոթրակիա, Տազօ, Ստաչիմենա և Կրետէ կամ Կանդիա կղզին, որ ունի իր առանձին կառավարութիւնը։ Եւրոպական Թիւրքիան ասիական և ափրիկական կալուածների հետ միասին բռնում է 80,000 քառ. մղոն տարածութիւն, որի վրայ ապրում են ընդամենը մօտ 25 միլիոն բնակիչ։

Եւրոպական Թիւրքիայի մակերեսյթի կազմութիւնը մեծ մասամբ լեռնոտ է։ Նա թէև արգաւանդ հող ունի, սակայն այդ երկրի միայն մի չնչին մասն է մշակւում, իսկ մեծ մասը արօտատեղիներ են, որոնց բնակիչները պարապում են անասնապահութեամբ։ Բայց Եւրոպական Թիւրքիայի բնակիչների մեծ մասը պարապում է վաճառականութեամբ, արհեստներով և գործագործութեամբ։ Վաճառականութիւնը գլխաւորապէս գտնւում է յոյների և հայերի ձեռքին։ Չնայելով որ Եւրոպական Թիւրքիան իր բնութեամբ Եւրոպայի ամենահարուստ երկրներից մէկն է, սակայն այդտեղի թիւրք տիրապետող բնակիչները չեն կարողանում այդ երկրի բնական հարստութիւնները ցանկալի կերպով մշակել և բարեկեցիկ կեանք վարել, շնորհիւ իրանց ծուլութեան, տգիտութեան և կառավարութեան ճնշումների։

Դաշտավայրերի բնակիչները գլխաւորապէս պարապում են հողագործութեամբ։ Եւրոպական Թիւրքիայի ազգաբնակութիւնը բաղկացած է բազմազան տարրերից՝ թիւրքերից, յոյներից, հայերից, սերբերից, բուլղարներից, ռումիններից, հրէաներից, չերքեզներից, գնչուներից և այլն։ Եւրոպական Թիւրքիայի հայերիթիւը, ըստ ւինչի, հասնում է 186,000-ի։

Եւրոպական Թիւրքիայի գործարանական արդիւնաբերութիւնը բոլորովին զարգացած չէ. պատրաստում են միայն գորգեր, կաշուեղէններ, վարդի իւղ և այլն։ Օտար երկրներ արտահանւող ապրանքներից նշանաւոր են. մետաքս, բամբակ, բուրդ, օֆիում և այլն, իսկ ներմուծւողներից՝ կտաւեղէններ, շաքար, հացահատիկներ, նաւթ և այլն։ Եւրոպական Թիւրքիայի գործարանական արդիւնագործութիւնը քիչ արդիւնք է տալիս. դրա համար էլ գործարանական ապրանքների մեծ մասը ներմուծւում են Թիւրքիա Ֆրանսիայից, Գերմանիայից, Անգլիայից և Եւրոպական ուրիշ երկրներից։ Թիւրքերի մէջ բաւական զարգացած է կաշեգործութիւնը, գորգագործութիւնը, մետաքսագործութիւնը և մեղուաբուծութիւնը։ Երկրի ներքին նահանգների առևտուրը գլխաւորապէս կենտրոնացած է հրէաների, յոյների և հայերի, իսկ արտաքինը ֆրանսիացիների, գերմանացիների և անգլիացիների ձեռքում։

Թիւրքիան կամ Տաճկաստանը բաղկացած է հետեւեալ գլխաւոր երկրներից 1) *Ասիական Թիւրքիա*, որի մէջ մտնում են Փոքր Ասիա, Ասորիք, Միջագետք, Թիւրքա-Հայաստան և արևմտեան Արաբիա, 2) Տրիպոլիս, Բարկա, Ֆէցցան և Եգիպտոս Աֆրիկայում և 3) Եւրոպական Թիւրքիա, որի մէջ մտնում է Բալկանեան թերակղզու՝ Թիւրքային պատկանող մասը։

Թիւրքիայի կառավարութեան եղանակը բացարձակ բռնակալական միապետութիւն է։ Միապետը կոչւում է *սուլթան*

կամ *փաթիշահ*, որի անմիջական օգնականը պետութեան մեծ վեզիրն է։ Վերջինիս ստորադրւում են թիւրքական բոլոր մինիստրները։ Երկրի հոգևոր գործերի ղեկավարութիւնը գտնւում է Շէյխ-իւլ-իսլամի ձեռքում։ Տէրութեան բարձր աստիճանաւորները կրում են «*փաշա*» տիտղոսը։

Եւրոպական Թիւրքիայի բնակիչները պատկանում են մահմեդական կրօնի *սիւնի* դաւանութեան։ Թիւրքիան յարմար և հեշտ կերպով կառավարելու համար բաժանուած է վիլայէթների կամ գեներալ նահանգապետութիւնների, որոնցից մի քանիսը Եւրոպական Թիւրքիայում կրում են իրանց հին պատմական անունները։

Եւրոպական Թիւրքիան բաղկացած է հետևեալ գլխաւոր մասերից.

ա.) *Հարաւային Թրակիա*, որ Եւրոպական Թիւրքիայի ամենահարուստ և բազմամարդ նահանգն է։ Գլխաւոր քաղաքն է *Կ. Պոլիս* կամ Ստամբուլ, որ գտնւում է մի եռանկիւնաձև թերակղզու վրայ՝ Բոսֆորի նեղուցի մուտքի մօտ։ Այս քաղաքը իր գիրքի շնորհիւ առևտրական տեսակէտից կարևոր նշանակութիւն ունի։ Կ. Պոլիսը ամբողջ Թիւրքիայի մայրաքաղաքն է, որտեղ նստում է սուլթանը։ Այս քաղաքը համարւում է թիւրքա-հայերի քաղաքական, մտաւոր և հոգևոր կենտրոնը։ Քաղաքն ունի 1,100,000 բնակիչ, որոնցից 150000 —հայեր են։ Կ. Պոլսումն է նստում թիւրքա-հայերի պատրիարքը, որ հայերի ներկայացուցիչն է համարւում թիւրքաց կառավարութեան առաջ։ Կ. Պոլիս քաղաքումն են գտնւում թիւրքա-հայկական նշանաւոր դպրոցները, բարեգործական մի քանի հիմնարկութիւնները, և այնտեղ են լոյս տեսնում մի քանի հայկական լրագրներ։ Մինչև 15-րդ դարուկէսը Կ. Պոլիսը կազմում էր Բիւզանդական կայսերութեան մայրաքաղաքը, որի պատմական յիշատակարաններից նշանաւոր է Սոֆիա եկեղեցին (այժմ Այիա-Սոֆիա մզկիթը)։ Կ. Պոլսի

անենանշանաւոր շինութիւններից յայտնի է Սերայը, որտեղ ապրում է պետութեան միապետ սուլթանը։ Երկրորդ քաղաքն է Ադրիանոպոլիս, որ յայտնի է իր վարդի իւղով, գորգերով և մետաքսի գործուածքներով։ Իբրև առևտրական և ամուր նաւահանգիստ նշանաւոր է է *Գալլիպոլի*, որտեղ կանգնում է թիւրքական նաւատորմը։

բ). *Ալբանիա*, որ մի լեռնոտ և դժուարամատչելի երկիր է։ Եւրոպական Թիւրքիայի այս մասի գլխաւոր բնակիչները կազմում են ալբանացիները, որոնք սկզբում ապրում էին հիւսիսային Ալբանիայի լեռներում, բայց 15-րդ դարում նուաճուեցին թիւրքերից, որոնք մահմեդական դարձրին նրանց։ Նրանց փոքրամասնութիւնը մինչև այսօր էլ քրիստոնեայ է մնացել և գլխաւորապէս պատկանում է կաթոլիկ դաւանութեան։ Ալբանացիները նահապետական կեանք են վարում և մեծ մասամբ պարապում են անասնապահութեամբ։ Երկրի գլխաւոր քաղաքներն են *Յանինա* և *Սկիւտարի*։

գ.) *Մակեդոնիա*, որ կազմում է Եւրոպական Թիւրքիայի երրորդ մասը և յայտնի է նաև *արևմտեան Ռումելիա* անունով։ Գլխաւոր քաղաքն է *Սալոնիկ*, որ Կ. Պոլսից յետոյ Թիւրքիայի երկրորդ նշանաւոր նաւահանգիստն է և առևտրի նշանաւոր կենտրոնը։

դ.) *Բոսնիա* և *Հերցոգովինա*, որոնք միացած են Աւստրո-Ունգարիայի հետ։ Թիւրքիայի սուլթանի գերիշխանութիւնը այդ երկրի վրայ անուանական է։ Գլխաւոր բնակիչները կազմում են *բոսնիացիները*, որոնք սերբական ծագում ունին։ Բնակիչների մի մասը մահմեդական է, իսկ միւս մասը ուղղափառ և կաթոլիկ։ Այդ երկու երկրներում ապրում են մօտ $1^1/_2$ միլիոն բնակիչ։ Գլխաւոր քաղաքներն են *Սարաեվո* և *Մոստար*։

Բերլինի դաշնադրութիւնից յետոյ (1878 թ.) այդ երկու երկրներն ընկել են Աւստրո-Ունգարիայի ձեռքը և նա է

կառավարում։ Այդ երկրները թիւրքական տիրապետութեան ներքոյ անտանելի դրութեան մէջ էին գտնուում, իսկ այժմ, 1878 թւից ի վեր դրանք Աւստրօ-Ունգարիայի կայսերութեան շնորհիւ ծաղկել և յառաջադիմել են։

ԱՊԵՆԻՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ

Ապենինեան թերակղզին, որ երկար կօշիկի ձևով մըտնում է Միջերկրական ծովը, Եւրոպայի հարաւային երեք մեծ թերակղզիներից մէկն է։ Հիւսիսային կողմից նրա սահմանը կազմում է Ալպեան լեռնաշղթան, իսկ միւս երեք կողմերից ողողուում է Միջերկրական ծովով։ Այդ թերակղզու տարածութիւնը (Իտալիային պատկանող կղզիների հետ միասին) 6000 քառ. մղոն է, որի վրայ ապրում են մօտ 32 միլիոն բնակիչ։ Ապենինեան թերակղզին բաժանուում է էականապէս երկու միմեանցից տարբեր մասերի՝ հիւսիսային ցամաքային մաս կամ Լոմբարդիայի հարթութիւն և հարաւային մաս կամ իսկական թերակղզին։ Թերակղզու երկրորդ մասն էլ իր կողմից հարաւային կողմում բաժանուում է *Կալաբրիա* և *Աբուլիա* մանր թերակղզիների, որոնք միմեանցից անջատուած են Տարենթօնի ծոցով։

Ապենինեան թերակղզու բոլոր ափերը հաւասարաչափ չեն կտրատուած։ Այդ տեսակէտից աւելի աչքի է ընկնում թերակղզու արևմտեան ափը, որ աւելի հարուստ է ծոցերով և յայտնի նաւահանգիստներով։ Սակայն հակառակ պատկեր է ներկայացնում թերակղզու արևելեան ափը, որ վերոյիշեալ տեսակէտից շատ աղքատ է։ Դրա համար էլ Ապենինեան թերակղզու արևմտեան ափումն են գտնուում ամենաշատ կղզիները, որոնցից նշանաւոր են Կորսիկա, Սարդինիա, Սիցիլիա, Էիբարեան խումբ և այլն։

Մակերևոյթի կազմութեամբ Ապենինեան թերակղզու երկու մասերը միմեանցից զգալի կերպով տարբերուում են։ Հիւսիսային մասի միջին տարածութիւնը կազմում է Լոմբարդական հարթութիւնը, որ ողողուում է Էշ և Պօ կամ Պատուս գետերով ու նրանց վտակներով և գտնուում է Ալպեան և Ապենինեան լեռնաշղթաների միջև։ Այդ գետերն և վտակները Լոմբարդիայի հարթութեան վրայ գոյացրել են մի քանի լճեր, որոնք շատ նկարչական տեսք ունին և շրջապատուած են կանաչ բլուրներով և ցածր սարերով։ Երբ հարթութեան վրայ գտնուող լեռների ձիւնը հալչում է, վերոյիշեալ գետերը յորդանում, դուրս են գալիս իրանց ափերից և ողողում են այդ հարթութիւնը։ Դրա առաջն առնելու համար շինուած են բազմաթիւ ջրանցքներ, որոնցով գետերի ջրերը հոսում են զանազան ուղղութեամբ։ Իր նպաստաւոր ողողման շնորհիւ Լոմբարդիայի հարթութիւնը ամբողջ Եւրոպայի ամենաբերրի երկիրներից մէկն է համարուում։ Կանոնաւոր մշակուում է երկրի հողը, որ առատօրէն հացահատիկներ է տալիս, օր.՝ ցորեն, բրինձ, եգիպտացորեն և այլն։ Առատ է նաև պտղատու ծառերի (չագանակի, թզենի, տանձենի) թիւը։ Լոմբարդիայի հարթութեան մի քանի մասերը, որոնք Ալպեան լեռնաշղթայով պաշտպանուած են հիւսիսային ցուրտ քամիների ազդեցութիւնից, տալիս են բաւականաչափ նարինջ, լիմոն և այլն։

Բոլորովին տարբեր մակերևոյթի կազմութիւն, կլիմա և ողողում ունի իսկական Ապենինեան թերակղզին, որ գրտնուում է Լոմբարդիայի հարթութիւնից դէպի հարաւ և որի վրայով տարածուում է Ապենինեան լեռնաշղթան։ Թերակղզին չորս անգամ աւելի երկար է լայնութիւնից։ Ապենինեան լեռնաշղթան աւելի մօտ է Ադրիատիքական ծովին. դրա համար էլ արևելեան մասում գետեր գրեթէ չկան, եթէ չհաշուենք նրա մանր վտակները, իսկ թերակղզու արևմտեան

մասում՝ ընդհակառակը։ Այդ գետերից նշանաւոր են Արնո և Տիբեր, որոնք սակաւաջուր են, որովհետև ձիւնապատ լեռներից չեն բղխում։ Ապենինեան թերակղզու ամբողջ երկարութեամբ տարածւում է համանուն լեռնաշղթան, որ հրաբղխային ծագում ունի. ապացոյց՝ Վեզուվի հրաբուղխը, որ նրա մասերից մէկն է։ Կազմում։ Բացի դրանից լեռնաշղթայի արևմտեան և հարաւ-արևմտեան կողմերում կան մի շարք գործող և հանգած հրաբուղխներ, որոնցից նշանաւոր են Ստրոմպոլի, Լիպարի և Վուլկանո (Լիպարեան կղզիների վրայ)։

Ապենինեան թերակղզու կլիման ընդհանրապէս տաք է, որովհետև Ալպեան և Ապենինեան լեռնաշղթաները թերակղզին պաշտպանում են ցուրտ հողմերի ազդեցութիւնից։ Ձմեռը ձիւն է գալիս, որ և իսկոյն սառչում է. իսկ թերակղզու հարաւային մասում ձիւն լինում է միայն լեռների վրայ. այնտեղ եղանակը շատ տաքանում է մանաւանդ այն ժամանակ, երբ Աֆրիկայից փչում է «շիրոկկո» տաք քամին։

Թերակղզու բուսականութիւնը բաւական ճոխ է. հացահատիկներից նշանաւոր են ցորենը, բրինձը և դարին, իսկ պտղատու ծառերից նարինջի, լիմոնի, խաղողի, նոնի, ձիթապտղի, դափնի, խցակաղնի, կակտուսի, արմաւի և ուրիշ ծառերը։

Ապենինեան թերակղզու և նրան պատկանող կղզիների (առանց Կորսիկայի) վրայ գտնւում է *Իտալիայի թագաւորութիւնը* և *Սան-Մարինո* փոքրիկ հանրապետութիւնը։

ԻՏԱԼԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Իտալիայի թագաւորութեան սահմանները կազմում են Աւստրո-Ունգարիան, Զուիցերեան, Ֆրանսիան և Միջերկրական ծովը։ Նրա ազգաբնակութեան գլխաւոր տարրը բաղ-

կացած է իտալացիներից, որոնք պատկանում են լատինական ցեղին և դաւանութեամբ կաթոլիկ են։ Ազգաբնակութեան խտութեան կողմից Իտալիայի թագաւորութիւնը միջին տեղն է բռնում։ Ամենախիտ ազգաբնակութիւն ունին Կալաբրիան և Լոմբարդիայի հարթութիւնը։

Ուսումը ընդհանուր և պարտադիր չէ Իտալիայում։ Նրա ազգաբնակութեան գրեթէ կէսը անգրագէտ է։ Ունի 21 համալսարան և զանազան բարձրագոյն ու միջնակարգ դպրոցներ։ Իտալիայի համալսարանների մի քանիսը շատ հին են և միջին-դարերում կրթական մեծ դեր են կատարել Եւրոպայի ազգաբնակութեան համար, օր. Բոլոնիայի և Սալերնոյի համալսարանները։ Իտալիայի համալսարանները ամեն տարի ահագին թւով ուսանողներ են գրաւում օտար երկիրներից, որոնց ուսանողների մեծ մասը պարապում է մի քանի գիտութիւնների (նկարչութիւն, երաժշտութիւն և այլն) ուսումնասիրութեամբ։

Իտալիայի բնակիչները գլխաւորապէս պարապում են հողագործութեամբ, անասնապահութեամբ, ձկնորսութեամբ, հանքագործութեամբ և առևտրով։ Իտալիայի ամբողջ տարածութեան գրեթէ կէսը ներկայացնում է դաշտեր, այգիներ, պարտէզներ, իսկ միւս կէսը անտառներ, արօտատեղիներ և լեռներ են։ Դժբաղդաբար այդ երկրի մշակելի հողի մեծ մասը պատկանում է մի խումբ խոշոր կալուածատէրերի, որոնք այդ հողերի մշակումը կապալով յանձնում են իտալական գիւղացիներին և վերջիններիս բաւական շահագործում են։ Հացաբոյսերից յայտնի են ցորեն, դարի, բրինձ և այլն։ Իտալիայում զարգացած է նաև շերամապահութիւնը և հարաւային պտուղների (լիմոն, նարինջ, ձիթապտուղ) մշակութիւնը։ Հանքագործութիւնը շատ թոյլ է զարգացած Իտալիայում. շահագործւում են մեծ մասամբ ծծումբի, մարմարի,

երկաթի և ագի հանքերը։ Իտալիան մետաքսագործութեամբ Եւրոպայի առաջին երկիրն է։

Զգալի կերպով զարգացած է Իտալիայի վաճառականութիւնը։ Դրան շատ նպաստում է Իտալիայի աշխարհագրական նպաստաւոր դիրքը։ Սուէզի ջրանցքի բացելուց յետոյ Իտալիան շատ է առաջադիմել իբրև առևտրական երկիր և դարձել է Եւրոպայի և Արևելքի մէջ եղած առևտրական միջնորդներից մէկը։ Իտալիան արտահանում է դէպի օտար երկիրներ մետաքս, գինի, ձու, ծծումբ, մարմար, հարաւային պտուղներ, յարդեայ գլխարկներ, երաժշտական և ապակեայ գործիքներ, իսկ ներմուծում է քարածուխ, հացահատիկներ, մեքենաներ և այլն։

33 միլիոն ազգաբնակութիւն ունեցող Իտալիան սահմանադրական միապետութիւն է։ Երկրի միապետի իրաւունքները սահմանափակում է իտալական պարլամենտը։

Հին դարում Իտալիան ներկայացնում էր Հռոմէական պետութիւնը, որ հասաւ իր քաղաքակրթութեան և զօրութեան գագաթնակէտին։ Միջին դարու սկզբներում Հռոմէական համաշխարհային միացեալ պետութիւնը բաժան բաժանեցաւ և վերոյիշեալ երկիրը օտար ազգերի համար կոուախնձոր դարձաւ, որի վրայ գերմանացիները մի քանի դար շարունակ տարածել էին իրանց քաղաքական ազդեցութիւնը։ Իտալիան իր քաղաքական միութիւնը ձեռք բերեց 19 դդ դարում։

Վարչական տեսակէտից Իտալիան բաժանւում է 69 նահանգների, որոնց գլխաւոր քաղաքներից նշանաւոր են։

Հիւսիսային Իտալիայում կամ Լոմբարդիայի հարթութեան վրայ նշանաւոր է Միլան քաղաքը (1/2 միլ. բնակիչ), որ յայտնի է իր մետաքսի առևտրով և սպիտակ մարմարից շինուած եկեղեցիով։ Այդ եկեղեցին համարւում է աշխարհիս ամենագեղեցիկ շինութիւններից մէկը (գոթական ճարտարա-

պետութիւն)։ *Թուրին*, Պօ կամ Պադուս գետի հովտում, Իտալիայի առևտրական և արդիւնաբերական նշանաւոր քաղաքներից մէկն է։ *Ալէքսանդրիա*, նշանաւոր ամրոց է։ *Կրեմոնա*, յայտնի է իր ջութակներով և վիոլոնչէլներով։ *Վենետիկ*, գտնւում է Ադրիական ծովի ափին։ Այս քաղաքը իր դիրքով աշխարհիս ամենանշանաւոր քաղաքներից մէկն է և շինուած է 117 մանր կղզիների վրայ, որոնք միմեանցից բաժանուած են ջրանցքներով։ Այդ ջրանցքները քաղաքի փողոցներն են, որոնց վրայով հաղորդակցութիւնը կատարւում է երկար սև նաւակներով (գոնդոլներով)։ Վենետիկում կառքերը և ձիերը հազուագիւտ բաներ են։ Նշանաւոր են Վենետիկի մարմարեայ պալատները, եկեղեցիները (ս. Մարկոսի եկեղեցին) և ուրիշ շինութիւնները, որոնք վկայում են քաղաքի պատմական պտակառելի անցեալը։ Վենետիկումն է գտնւում և Մխիթարեան միաբանութիւնը, որի հիմնադիրը համարւում է Մխիթար Սեբաստացին։ Այդ միաբանութիւնը, որ Հայոց հին գրականութեան համար խոշոր ծառայութիւն է մատուցել, գտնւում է ս. Ղազար կղզու վրայ։ Վենետիկը Իտալիայի առևտրական առաջին նաւահանգիստն է։

Իսկական թերակղզու քաղաքներից նշանաւոր են. *Գենուա կամ Ժենովա*, որ Իտալիայի ամենահին քաղաքներից մէկն է և աչքի է ընկնում իր փառահեղ պալատներով և հասարակական շինութիւններով։ Առևտրական տեսակէտից Գենուան Իտալիայի առաջին քաղաքն է, որ ունի բաւական նշանաւոր գործարաններ։ Գենուայի մօտն է գտնւում *Սպեցիա* պատերազմական նշանաւոր նաւահանգիստը, որտեղ կանգնում է Իտալական նաւատորմը։ *Փլորենցիա*, որ Թոսկանա նահանգի գլխաւոր քաղաքն է։ Նշանաւոր են նրա գեղարուեստական յայտնի յիշատակարանները, մեծ կրադարանները, համալսարանը։ 1865 – 1871 թ. Փլորենցիան կազմում էր և Իտալական թագաւորութեան մայրաքաղաքը, որ

ներկայումս գտնվում է Արնո գետի ափին։ Լիվորնո, առևտրական նավահանգիստ է։ Կարրարա, նշանավոր է իր մարմարեայ հանքերով։ Թոսկանա նահանգի հարավային կողմում գտնվում է Լացիում նահանգը, որի գլխավոր քաղաքն է Հռոմը (100,000 բն.)։ Սա Իտալիայի տէրութեան մայրաքաղաքն և թագաւորի ու պապի ամառանոցն է։ Հռոմի պապը համարվում է ամբողջ աշխարհիս բոլոր կաթոլիկների հոգևոր գլուխը։ Հռոմը 1871 թվից ի վեր Իտալիայի մայրաքաղաքն է։ Աշխարհիս և ոչ մէկ քաղաքը չէ կարող մրցել Հռոմի հետ իր պատմական յիշատակարաններով, որոնք ծագում են ընդհանուր պատմութեան գրեթէ բոլոր շրջաններից։ Նա իր հնագարեան շինութիւններով և գեղարուեստական գանձերով հիացնում է օտարազգի ճանապարհորդներին։ Հռոմի աշքի ընկնող շինութիւններից նշանավոր են ս. Պետրոսի եկեղեցին, որ աշխարհիս ամենամեծ եկեղեցին է և ամփոփում է իր մէջ Պետրոս և Պօղոս առաքեալների գերեզմանը։ Այդ եկեղեցու մօտ է գտնվում նաև պապերի պալատը՝ Վատիկանը, որ յայտնի է իր գրադարանով, արձաններով և նկարներով։ Հնագարեան շինութիւններից նշանավոր է անգին ցիրկ Կոլիզէյը, որտեղ մօտ 100000 հանդիսականներ էին տեղավորվում և կատակվածները կամ ստորերկրեայ գերեզմանները քրիստոնէական առաջին դարերից։ Հռոմի ամենամեծ նաւահանգիստն է Չիվիտա—Վեկիա։

Իտալիայի ամենախիտ ազգաբնակութիւն ունեցող նահանգն է Կամբանիան, որի գլխաւոր քաղաքն է Նիապոլը։ Այս քաղաքը գտնվում է Վեզուվի հրաբուխի ստորոտում և Իտալիայի երկրորդ առևտրական քաղաքն է (550,000 բն.)։ Թէկուզ Կամբանիան Իտալիայի ամենապտղաւէտ նահանգն է, սակայն դա գտնվում է Իտալիայի հրաբխային մասում։ Նիապոլի մօտ են գտնվում Պոմպէյ և Հերկուլանում քաղաքներն աւերակները, որոնք կործանվեցին Վեզուվի հրաբուխի վիժումից 79 թվին։ Նիապոլը Իտալիայի ամենարազմամարդ քաղաքն է և ունի նշանավոր համալսարան։ Նիապոլից հեռու չեն գտնվում Կաստելլամարէ և Սորրենտո քաղաքները։ Կալաբրիա թերակղզու քաղաքներից յայտնի է Ռեջիոն, որ նշանավոր նաւահանգիստ է, որտեղ հին ժամանակ յունական մի մեծ գաղութ էր հաստատված։ Արուլիա թերակղզու քաղաքներից նշանավոր է Բրինդիզի նաւահանգիստ — քաղաքը։

Իտալիայի թագաւորութեանն են պատկանում Սիցիլիա և Սարդինիա կղզիները։

Սիցիլիան Ապենինեան թերակղզուց բաժանվում է Մեսսենայի նեղուցով և ներկայացնում է եռանկիւնաձև մի փոքրիկ ցամաք, որի վրայով տարածվում է Ապենինեան լեռնաշղթայի շարունակութիւնը։ Այդ կղզին իսկապէս մի սարահարթ է, որ մեծ մասամբ անտառազուրկ է և վատ ոռոգված։ Նրա ամենաբարձր գագաթն է Էտնա գործող հրաբուղխը, որի գագաթից երևում է այդ կղզին։ Սիցիլիա կղզու կենտրոնական մասը անապատային է և ունի նօսր ազգաբնակութիւն, հարավային պտուղներ, բամբակ, շաքարեղէգն և այլն։ Կղզին գետի կողմից շատ ապքատ է, հողածները ամառը գրեթէ բոլորովին ցամաքում են։ Մի ժամանակ Սիցիլիա կղզին յայտնի էր իր հացահատիկներով և կազմում էր Հռոմի հմամբ իբրև ցորենի գլխաւոր շտեմարան։ Կղզին ունի մօտ $3^1/_2$ միլիոն բնակիչ և ծծումբի արդիւնաբերութեան համար աշխարհիս ամենայայտնի երկիրներից մէկն է։

Սիցիլիայի քաղաքներից նշանավոր են. Պալերմօ, որ առևտրական և արդիւնաբերական քաղաք է և ունի 300,000 բնակիչ։ Այդ քաղաքում մինչև այսօր էլ մնացել են մի շարք շինութիւններ սարակինոսների և նորմանների տիրապետութեան ժամանակից։ Մեսսինա, աշխարհիս ամենամեծ և ամենագեղեցիկ նաւահանգիստներից մէկն է, որ առևտուր է անում

հարաւային պտուղներով։ 1783 թուին այդ քաղաքը ահագին վնասներ ստացաւ երկրաշարժից։ Մեսսինան իր դիրքով յիշեցնում է Կոպէնհագէն մայրաքաղաքը։ Կղզու միւս քաղաքներից նշանաւոր են *Կատանիա*, *Մարսալա* (համանուն գինիով) և *Ջիրջենտի*։

Սարդինիա կղզին մեծ մասամբ լեռնոտ է և հարուստ է արծաթէ, արճիճի, ծծումբի և երկաթի հանքերով։ Հողի մշակութիւնը զարգացած է կղզու միայն միջին մասում։ Գլխաւոր քաղաքն է *Կալիարի*, որ մի ժամանակ յայտնի էր ցորենի առևտրով։

Իտալիայի գաղութներից նշանաւոր է *Էրիթրէա*, որ գտնւում է Հաբէշստանի և Կարմիր ծովի մէջ։ *Սոմալի* թերակղզու մի մասը ճանաչում Իտալիայի թագաւորութեան գերիշխանութիւնը։

Իտալական թագաւորութեան մէջ է գտնւում և աշխարհիս ամենափոքր հանրապետութիւններից մէկը՝ *Սան-Մարինո*, որ բաղկացած է համանուն գլխաւոր քաղաքից և 4 գիւղերից և ունի ընդամենը 10,000 բնակիչ։

ՊԻՐԻՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ

Մակերեւոյթի կազմութիւնը։ Պիրինեան թերակղզին Եւրոպայի հարաւային երեք թերակղզիներից ամենամեծն է և ունի բառանկիւնի ձև։ Երեք կողմից շրջապատող ծովերը շատ քիչ են կարատում թերակղզու ափերը, այդ տեսակէտից բացառութիւն են կազմում միայն արևելեան և հարաւային ափերը, որոնց մօտ գտնւում են մի շարք նշանաւոր նաւահանգիստներ և մանր կղզիներ։ Պիրինեան թերակղզին իր համար մի առանձնացած ցամաք է ներկայացնում, որ մնացած Եւրոպայից բաժանւած է Պիրինեան լեռնաշղթայով։

Թերակղզու ամբողջ կենտրոնական մասը ներկայացնում է մի ընդարձակ սարահարթ, որ ձգւում է արևելքից դէպի արևմուտք։ Այդ սարահարթը հիւսիսային կողմից շրջապատւած է Պիրինեան լեռնաշղթայի հարաւային փեշերով, արևելեան կողմից՝ Իբերիական լեռնաշղթայով, իսկ հարաւային կողմից Սիերրա-Մօրենա լեռնաշղթայով։ Արևմտեան կողմում, ընդհակառակը այդ սարահարթը հեռզհետէ ցածրանում է, որի վրայով հոսում են Ատլանտեան ովկիանոսը թափւող Դուրո, Տագօ և Գվադիանա սակաւաջուր և գրեթէ անանցանելի գետերը։

Պիրինեան թերակղզու կենդրոնական սարահարթը Կաստիլիական լեռներով բաժանւում է երկու մասերի. հիւսիսային կամ Հին-Կաստիլիական և հարաւային կամ Նոր-Կաստիլիական սարահարթերի։ Առաջին սարահարթը երկրորդից աւելի բարձր է։ Կենտրոնական սարահարթի հիւսիս-արևելեան կողմում տարածւում է Պիրինեան լեռնաշղթան և հարաւային կողմում՝ Սիերրա-Նեվադայի կամ Գրանադայի լեռները։ Սարահարթի և Պիրինեան լեռնաշղթայի մէջ գտնւում է Արագօնեան հարթութիւնը, որ գլխաւորապէս ոռոգւում է Էբրո գետով, իսկ սարահարթի և Գրանադեան լեռների մէջ տեղը՝ Անդալուզեան հարթութիւնը, որ ոռոգւում է Գվադալկվիվիր գետով։

Ոռոգումը։ Ոռոգման կողմից Պիրինեան թերակղզին այնքան էլ նպաստաւոր պայմանների մէջ չէ գտնւում, դրա համար էլ նրա տարածութեան մի զգալի մասը անապատային է։ Թերակղզու գետերը գլխաւորապէս սկիզբն են առնում ոչ մշտապէս ձիւնով պատած լեռներից, հոսում են մեծ մասամբ դէպի արևմուտք և թափւում են Ատլանտեան ովկիանոսը. օր. Մինիո, Դուրո, Տախօ, Գվադիանա և Գվադալկվիվիր։ Բացառութիւն է կազմում միայն Էբրո գետը, որ հոսում է դէպի արևելք և թափւում է Միջերկրական

ծովը։ Պիրինեան թերակղզու գետերը ընդհանրապէս արագահոս և աննաւարկելի են։ Թերակղզին աղքատ է մեծ լճերով։

Կլիմա։ Պիրինեան թերակղզին միատեսակ կլիմա չունի։ Նրա հիւսիսային և արևմտեան մասերի կլիման խոնաւ է և ծովային և բերում է առատ անձրևներ։ Այդ մասերի վրայով փչում են արևմտեան և հարաւ-արևմտեան հողմերը։ Այդ մասերը ծածկւած են անտառներով, մշակւած դաշտերով և մարգագետիններով։ Պիրինեան սարահարթի կլիման, ընդհակառակը ցամաքային է. այնտեղ լինում է տաք ամառ, անձրև չէ գալիս, իսկ ձիւները ցուրտ են լինում։ Թերակղզու հարաւային և հարաւ-արևելեան մասերի կլիման շոր է, որի գլխաւոր պատճառը Աֆրիկայից փչող *սօլանօ* տաք քամին է։ Բուսականութեամբ և կենդանիներով հարուստ է միայն Անդալուզիան. նրա բոյսերից յայտնի են. խցանակաղնի, շագանակ, հարաւային քաղցրաղան պտուղներ, շաբարեղէգն, ֆիւնիկեան արմաւ, բամբակ և այլն։

Պիրինեան թերակղզին բաղկացած է երկու պետութիւններից, *Պորտուգալիայի* և *Իսպանիայի* թագաւորութիւններից։

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Պորտուգալիան, որ կազմում է Պիրինեան թերակղզու արևմտեան նեղ մասը, գտնւում է Մինիո և Գվադիանա գետերի մէջ և ուռոգւում է գլխաւորապէս Դուրո և Տախո գետերով։ Այդ երկրի տարածութիւնը 1600 քառ. մղոն է և ունի մօտ $5^1/_2$ միլիոն բնակիչ։ Նա ներկայացնում է մի հարթութիւն, որ կանոնաւոր կերպով ուռոգւում է գետերով։ Պորտուգալիան պատկանում է Եւրոպայի այն երկիրների շարքին, որտեղ շատ անձրևներ են գալիս։ Գրեթէ ամբողջ Պորտուգալիան մի կանաչ տարածութիւն է ներկայացնում, որ աչքի է ընկնում իր մշտական կանաչ ծառերով, հարաւային պտուղներով, խաղողի այգիներով, և այլն։

Պորտուգալացիները պատկանում են բոմանական ցեղին և դաւանութեամբ կաթոլիկներ են։

Պորտուգալիայի բնակիչները պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ, ձկնորսութեամբ և վաճառականութեամբ։ Գործարանական կեանքը գրեթէ զարգացած չէ Պորտուգալիայում։ Գործարանական ապրանքների մեծ մասը ստացւում է Անգլիայից։ Երկրի արտահանութեան գլխաւոր ապրանքները կազմում են գինի, խցան, անասուններ, զանազան ձկներ և այլն։

Պորտուգալիայի կառավարութեան ձևը սահմանադրական միապետութիւն է։ Թագաւորի իրաւունքները սահմանափակում է ժողովրդական ներկայացուցչութիւնը, որ կոչւում է *Կորտէս*։

Պորտուգալիան քաղաքականապէս բաժանւում է 17, իսկ պատմական տեսակէտից 6 գլխաւոր նահանգների, որոնց քաղաքներից նշանաւոր են հետեւեալները.

Լիսաբոն - առևտրական կենտրոն, տէրութեան մայրաքաղաք և թագաւորի ամրոցանիստն է։ 1755 թ. այս քաղաքը սաստիկ մնասներ կրեց երկրաշարժից։ Ունի 340,000 բնակիչ։ Երկրորդ նշանաւոր քաղաքն է *Օպօրտօ*, որ նշանաւոր է իր աշխարհահռչակ «պօրտվէյն» գինով։ Սա տէրութեան երկրորդ առևտրական քաղաքն է։ *Կոիմբրա*, որտեղ գտնւում է Պորտուգալիայի միակ համալսարանը։

Պորտուգալիայի միւս մայր ցամաքներում եղած գաղութներից նշանաւոր են.

Ասիայում - *Մակաօ* քաղաքը (Չինաստանում), *Թիմոր* կղզու մի մասը և արևելեան Հնդկաստանի *Գոա* և *Դիու* քաղաքները։

Աֆրիկայում – Ազորեան կղզիները, Մադէյրա, Կանարէ Հրուանդանի կղզիները, Գվինէի կղզիների մի մասը և հարաւային Աֆրիկայի արևելեան ափում մի քանի կալուածներ, որոնց գլխաւոր քաղաքն է Մոզամբիկ։

Այդ բոլոր գաղութների տարածութիւնն է 35,000 քառ. մղոն, որի վրայ ապրում են մօտ. 15 միլիոն բնակիչ։

ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Իսպանիայի թագաւորութիւնը բռնում է Պիրինեան թերակղզու ամենամեծ մասը։ Նրա տարածութիւնը 9000 քառ. մղոն է, որի վրայ ապրում են 19 միլիոն բնակիչ։ Այդ թագաւորութեանն են պատկանում նաև Պալիարեան և Պիտիուզեան կղզիների խմբերը։ Իսպանիայի սահմանները կազմում են արևմտեան կողմում Պորտուգալիան և Ատլանտեան օվկիանոսը, հիւսիսային կողմում՝ Բիսկայեան ծովը և Պիրինեան լեռնաշղթան և հարաւային ու արևելեան կողմում՝ Միջերկրական ծովը։

Իսպանիայի ազգաբնակութեան գլխաւոր տարրը կազմում են իսպանացիները, որոնք պատկանում են ռոմանական ցեղին և պորտուգալացիների նման ներկայացնում են իբրև մի խառնուրդ իսպանական նախնական բնակիչների և գաղթական մի քանի ժողովրդների։ Սակայն Իսպանիայի մի բանի մասերի բնակիչները միմեանցից տարբերւում են իրանց դիմագծերով, կենցաղավարութեամբ, լեզուով, վարմունքով և այլն։ Իսպանիայի ամենահին բնակիչների իսկական մնացորդներն են համարւում *բասկերը*, որոնք գլխաւորապէս ապրում են Նավարրայում, Կանտաբրեան լեռների ստորոտներում և Պիրինեան սարերի վրայ։ Սիերրա-Նեվադայի հարաւային կողմերում մինչև այսօր էլ ապրում են հին *մաւրերի* մնացորդներ։ Այնտեղ ապրում են նաև բաւականաչափ *գնչուներ*, որոնք մեծ մասամբ կենտրոնացած են Անդալուզիա նահանգում։ Իսպանիայի բնակիչները շատ չնչին բացառութեամբ պատկանում են կաթոլիկ դաւանութեան։ Ժողովրդական կրթութիւնը ինչպէս Պորտուգալիայում նոյնպէս և Իսպանիայում, շատ աննախանձելի է վիճակի մէջ է գտնւում։ Թերակղզու ամբողջ ազգաբնակութեան մօտ 70% տոկոսը գրել և կարդալ չգիտէ։ Սակայն չնայելով դրան, Իսպանիան ունի 10 համալսարան, որոնք սակայն ընդհանուր եւրոպական հռչակ չեն վայելում։

Իսպանիայի բնակիչները պարապում են հողագործութեամբ, անասնապահութեամբ, այգեգործութեամբ (հարաւային պտուղների այգիները), հանքագործութեամբ (արծաթ, պղինձ, երկաթ, արճիճ, քարածուխ), մետաքսագործութեամբ և վաճառականութեամբ։ Շատ յայտնի են Իսպանական մերինոսը, ձին, այծը, էշը և եղը։ Առևտուրը, արհեստագործութիւնը և նաւադնացութիւնը ներկայումս Իսպանիայում ցանկալի կերպով զարգացած են։ Համաշխարհային առևտրին նա մասնակցում է իր գինով, հանքերով և բամբակով։ Գործարանական ապրանքների մեծ մասը իսպանացիները ստանում են Անգլիայից, որը և Իսպանական առևտրից ամենամեծ օգուտներն է ստանում։

Հին ժամանակներում ինչպէս ամբողջ թերակղզին, այնպէս էլ Իսպանիան գրաւել է Միջերկրական ծովի առևտրական ազգերի ուշադրութիւնը, մանաւանդ իր արծաթէ հարուստ հանքերի շնորհիւ։ Պատմական ֆինիկեցիները և կարթագէնացիները բաւականաչափ գաղութներ էին հիմնել Իսպանիայում։ Դրանից յետոյ Պիրինեան թերակղզին ընկաւ հին-հռոմէացիների քաղաքական ազդեցութեան տակ։ Ութերորդ դարում Աֆրիկայից այդ երկիրը գաղթեցին արաբները, որոնք բարձր քաղաքակրթութեան հասան։ Այդ արաբ-

ների ամենավերջին մնացորդը վերջացաւ 15-րդ դարում, երբ Իսպանիան արդէն մի միացեալ տէրութիւն էր ներկայացնում Պորտուգալիայի կողքին։ 15-րդ դարում թէ Իսպանիան և թէ Պորտուգալիան գտնւում էին իրանց ծաղկման և զօրութեան ամենաբարձր աստիճանի վրայ, որոնք համաշխարհային տիրապետութեան էին ձգտում։ Սակայն այդ երկու երկիրները ներկայումս Եւրոպայի երկրորդական պետութիւնների շարքին են պատկանում։

Իսպանիան այժմ սահմանադրական միապետութիւն է և ունի ժողովրդական ներկայացուցչութիւն, որ կոչւում է *Կորտէս*։ Երկիրը վարչական տեսակէտից բաժանւում է 49 նահանգների, որոնցից նշանաւոր են հետեւեալները իրանց գլխաւոր քաղաքներով։—*Գալիցիա*, որ մի լեռնոտ, անպտղաւէտ և նաւահանգիստներով հարուստ նահանգ է։ Գլխաւոր քաղաքն է *Սանտիագո*, որ ամփոփում է իր մէջ Յակոբ առաքեալի գերեզմանը։—Ըստ աւանդութեան այդ առաքեալն է առաջին անգամ քրիստոնէութիւնը քարոզել Իսպանացիների մէջ։

Աստուրիա, որի գլխաւոր քաղաքն է *Օվիեդո*։

Բասկերի նահանգ, որ Իսպանիայի ամենաւաւ մշակած և խիտ ազգաբնակութիւն ունեցող նահանգն է։ Նշանաւոր է իր երկաթէ հանքերով։ Գլխաւոր քաղաքն է *Սան-Սեբաստիան*, որ գտնւում է Ֆրանսիայի սահմանագլխի մօտ և յայտնի է իր ծովային լողարաններով։

Նավարրա, գլխաւոր քաղաքն է *Պամպլոնա* ամրոցը։

Արագոնիա, որ ունի շատ նօսր ազգաբնակութիւն։ Գլխաւոր քաղաքն է *Սարագոսսա* բերդը։

Կատալոնիա, որ բաւական խնամքով մշակած և խիտ ազգաբնակութիւն ունեցող նահանգ է։ Բնակիչները շատ աշխատասէր են, «քարից հաց են ստանում», ասում են ռովորաբար նրանց մասին։ Գլխաւոր քաղաքն է *Բարցելոնա*,

(510,000 բն.), որ ծովային վաճառականութեան տեսակէտից Իսպանիայի առաջին քաղաքն է։

Վալենսիա, նշանաւոր նահանգներից մէկն է, որ յայտնի է իր ֆիւնիկեան արմաւով և շաքարեղէգնով։ Գլխաւոր քաղաքն է *Վալենսիա*, որ առեւտրական և արդիւնաբերական նշանաւոր կենտրոն է։ Միւս քաղաքներից նշանաւոր են *Սագունտո* և *Ալիկանտէ*։ Վերջինս առեւտուր է անում իր նշանաւոր գինիներով։

Մուրսիա, յայտնի է իր նշանաւոր և պտղաբեր այգիներով և արաբացիների տիրապետութեան օրով կոչւում էր «մաւրիտանական տրախտ»։ Այդ այգիներում աճում են ահագին քանակութեամբ նարիջ, լիմոն և այլն։ Համանուն գլխաւոր քաղաքով։ Նշանաւոր է նաև *Կարթագէնա* նաւահանգիստը։

Գրանադա, դժուարամատչելի նահանգ է, որ կազմում էր մաւրերի վերջին թագաւորութեան գլխաւոր կենտրոնը։ Պատմական շինութիւններից յայտնի է *Ալհամբրան*՝ մաւրիտանական թագաւորական պալատը, որի մնացորդները մինչև այսօր պահպանւել են։ Գլխաւոր քաղաքներն են *Մալագա* (հռչակաւոր գինի) և *Գրանադա*։

Անդալուզիա, ամենախիտ ազգաբնակութիւն ունեցող նահանգն է, որ ունի շատ հարուստ բնութիւն։ Նշանաւոր քաղաքներն են. *Քորդովա*, *Խերէս*, (իր համանուն հռչակաւոր գինիով) և *Կադիկս*, որ Իսպանիայի ամենանշանաւոր առեւտրական նաւահանգիստներից մէկն է։ Այդտեղ է գտնւում նաև նշանաւոր նաւագիստ *Ջիբրալտարը*, «Միջերկրական ծովի բանալին», որ 1704 թւից ի վեր պատկանում է անգլիացիներին։

Հին-Կաստիլիա, *Սանտանտէր* գլխաւոր քաղաքով։

Նոր-Կաստիլիա, որ Իսպանիայի կենտրոնական և ամենամեծ նահանգն է, գլխաւոր քաղաքն է *Մադրիդ*, որ երկ-

րի մայրաքաղաքն է (500,000 բն.) և թագաւորի ամառանիստը։ Իսպանիայի գրեթէ բոլոր նաւահանգիստները երկաթուղիով միացած են Մադրիդի հետ։ «Այստեղ երեք ամիս ձմեռ է և ինը ամիս դժոխք», ասում են սովորաբար Մադրիդի մասին։

Թոլէդո, Իսպանական թագաւորութեան նախկին մայրաքաղաքը և առաջին արքեպիսկոպոսի ամառանիստը։ *Ալանժուէս*, Իսպանական թագաւորների ամարանոցը։

Իսպանիայի գաղութներից նշանաւոր են.

Աֆրիկայում—*Ցէուտա* նաւահանգիստը Միջերկրական ծովի աֆրիկական ափում, *Կանարեան* կղզիները, *Փերնանդո-Պո* և *Աննոբոմ* կղզիները Գվինէի ծոցում։

Բ. ՄԻՋԻՆ ԵՒՐՈՊԱ

Միջին Եւրոպա ասելով հասկանում ենք մայր ցամաքի այն մասը, որ բաղկացած է ժամանակակից Եւրոպայի հետևեալ երկիրներից. Զվէյցարիայից, Աւստրո-Ունգարիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Հոլլանդիայից և Բելգիայից։

Միջին-Եւրոպայի մակերևոյթի կազմութիւնը, ռելիեֆը և կլիման բազմազան է։ Միջին-Եւրոպայի կենտրոնական բարձրութիւնը Ալպեան լեռնաշղթան է, որ ձգւում է մօտ 1000 վերստ երկարութեամբ։ Այդ լեռնաշղթայի ամենաբարձր գագաթն է *Մոնբլան*, որի բարձրութիւնը մօտ 5 վերստ է ծովի մակերևոյթից հաշւած։ Ալպեան լեռնաշղթան բաժանւում է բազմաթիւ ճիւղաւորութիւնների, որոնք տարածւում են Միջին-Եւրոպայում զանազան ուղղութեամբ։ Լեռնաշղթայի ամենաբարձր գագաթները մշտապէս ծածկւած են ձիւնով, որոնցից սկիզբն են առնում Եւրոպայի հետևեալ գետերը, կազմելով երբեմն մի քանի նշանաւոր լճեր. Պօ գետն իր ձախակողմեան վտակներով, *Ռօնա* գետը *Ժընեւ*-լճով, Հռենոս գետը իր վտակներով և Բոդէնի լճով և *Դանուպ* գետի աջակողմեան վտակներից Լեխ, Իզար, Դրավա, Սավա և այլն։ Ալպեան լեռնաշղթայից սկիզբն առնող գետերից մի քանիսը ճանապարհին կազմում են ջրվէժներ։

Աշխարհիս բարձր լեռնաշղթաներից և ոչ մէկը չունի այնքան անցքեր, որքան Ալպեան լեռնաշղթան։ Նրա գլխաւոր անցքերի թիւը հասնում է 30-ի, որոնցից մի քանիսի միջով անցնում են կանոնաւոր ճանապարհներ և

երկաթուղիներ։ Իր դիրքով Ալպեան լեռնաշղթան բաժանւում է երեք մասերի, արևմտեան, կենտրոնական և արևելեան Ալպեր։ Առաջնի գլխաւոր անցքերից նշանաւոր է Մոն-Սենիս անցքը, որտեղով երկաթուղի է անցնում 12 վերստ երկարութիւն ունեցող տուննէլի միջով։ Կենտրոնական կամ Շվէյցարական Ալպերը բռնում են Շվէյցարիայի հարաւ-արևելեան մասը։ Դրա մի ճիւղն է կազմում և Սէն-Գոտարդը, որտեղով անցնում է մի ուրիշ երկաթուղի աւելի երկար տուննէլի միջով։ Արևելեան Ալպերը աւելի ցած են և ջրով աղքատ, որովհետև դրանց վրայ սովորաբար քիչ ձիւն է լինում։ Ալպերի այդ մասը մտնում է Աւստրիա։

Որովհետև Ալպերի բոլոր մասերը և ճիւղերը հաւասարաչափ բարձր չեն, դրա համար էլ այդ մասերի կլիման միմեանցից տարբերւում և բազմազան է։ Կլիմայի բազմազանութիւնը զգացւում է նոյն իսկ ամենափոքր տարածութեան վրայ։ Նոյն իսկ մի քանի ժամւայ ճանապարհի վրայ լինում է ամառ և ձմեռ։ Ալպերը Եւրոպայի անձրևներով հարուստ մասերի շարքին են պատկանում։

Իրանց բազմազան կլիմայի շնորհիւ Ալպերը ունին նաև բազմազան բոյսեր։

Միջին Եւրոպայի միւս լեռնաշղթաներից նշանաւոր են՝ Գերմանական, Սուդէթեան, Սաքսոնեան, Ֆրանսիական, Կարպատեան սարերը և այլն։ Այդ լեռնաշղթաներից սկիզբն են առնում բաւականաչափ գետեր իրանց գլխաւոր վտակներով։ բացառութիւն են կազմում միայն Ռոնա և Հռենոս գետերը, որոնք սկիզբն են առնում Ալպեան լեռներից։ Միւս գետերից նշանաւոր են Դանուպ (Մօրավա, Տիսա և Պրուտ վտակներով), Դնեստր, Էլբա (Մոլդավա, Մուլդա և Զալ վտակներով), Վեզէր, Էմս, Շէլդա, Օդեր, Վիսլա, Նեման, Սենա, Լուարա, Գարոննա և այլն։

ՇՎԷՑՑԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Շվէյցարիան շրջապատուած է Ֆրանսիայով, Գերմանիայով, Աւստրո-Ունգարիայով և Իտալիայով։ Նրա տարածութիւնն է 750 քառ. մղոն, որի վրայ ապրում են $3^1/_4$ միլիոն բնակիչ։

Շվէյցարիան Եւրոպայի ամենաբարձր երկիրն է։ Իր մակերևոյթի կազմութեամբ նա բաժանւում է երեք՝ միմեանցից տարբեր մասերի, Կենտրոնական կամ Շվէյցարիական Ալպեր, Շվէյցարական սարահարթ և Իւրա։ Կենտրոնական Ալպերը բռնում են Շվէյցարիայի հարաւ-արևելեան մեծ մասը։ Այդ լեռները աչքի են ընկնում իրանց գեղեցիկ ու փառահեղ տեսքով և ձիւնապատ գագաթներով։ Գլխաւոր շղթաներից մէկն է Ս. Գոտարդ, որից սկիզբն են առնում բազմաթիւ գետեր և հոսում են զանազան ուղղութեամբ։ Դրանցից նշանաւոր են Ռօնա, Հռենոս, Ռէյս, և Թեչինո, որոնք անցնում են լճերի միջով. օր, Ռօնան—Ժընեի լճով, Հռենոսը—Բոդէնի լճով, որ յետոյ այդ լճից դուրս գալիս կազմում է Շաֆհաուզէնի ջրվէժը, Ռէյսը—Ֆիրվալդշտեդի լճով և Թեչինո—Լագո-Մաջիօրէ լճով։ Ս. Գոտարդը ներկայացնում է գլխաւոր ճանապարհը Միջին Եւրոպայից դէպի Իտալիա։

Իւրան կազմում է Շվէյցարիայի արևմտեան մասը՝ Ֆրանսիական սահմանը։ Այդ լեռները բաղկացած են՝՝մի քանի զուգահեռական շղթաներից, որոնց արանքներում բազմաթիւ հովիտներ կան։ Այդ մասը ջրով աղքատ է ու անպտղաբեր։

Շվէյցարական Ալպերի և Իւրայի մէջ գտնւում է Շվէյցարական սարահարթը, որ բաւական պտղաբեր և լաւ մշակուած է։ Այդ մասումն են գտնւում Ժընեի, Թունի, Բրիենցի, Ցիւրիխի, Ֆիրվալդշտեդի և Բոդէնի կամ Կոնստանցի լճերը։

Շվէյցարիայի կլիման թէև բազմազան է, սակայն նա

ընդհանրապես լեռնային և ցուրտ է։ Այնտեղ ամառը կարճատև և տաք է լինում, իսկ ձմեռը՝ երկարատև և խիստ։ Զվեյցարիայի կլիման օդի մաքրութեան շնորհիւ շատ առողջարար է. դրա համար էլ նրա բնակիչները մարմնով առողջ են։

Զվեյցարիայի ազգաբնակութեան 69% խօսում է գերմաներէն, 22%-ը ֆրանսերէն, իսկ մնացած տոկոսը շատ չնչին բացառութեամբ խօսում է իտալերէն։ Նրա ազգաբնակութեան 58% պատկանում է բողոքական և 32%-ը հռոմէական – կաթոլիկ դաւանութեան։ Ազգաբնակութեան մնացած տոկոսը պատկանում է զանազան դաւանութիւնների, որովհետև բաղկացած է մեծ մասամբ օտարազգիներից։ Զվեյցարիայի հրէաների թիւը հասնում է մօտ 15,000։ Զվեյցարիայի ամենախիտ ազգաբնակութիւնը ապրում է Ժընևի լճի շուրջը (1 քառ. կիլոմետրի վրայ մօտ 150 բնակիչ), իսկ ամենանօսր ազգաբնակութիւնը՝ լեռների վրայ։

Զվեյցարիան համարւում է աշխարհիս ամենաքաղաքակրթուած երկրներից մէկը։ Ոչ մի երկրում ժողովրդի տարրական կրթութեան գործը այնքան նախանձելի վիճակի մէջ չէ գտնւում, որքան փոքրիկ Զվեյցարիայում կամ Հելվեցիայում։ Տարրական կրթութիւնը պարտադիր է իւրաքանչիւր զվեյցարացու համար։ Այնտեղի նոյն իսկ ամեն մի հասարակ գիւղական համայնքը ունի իր դպրոցական փառաւոր շինութիւնը։ Բայի տարրական, միջնակարգ և զանազան արհեստագիտական դպրոցներից Զվեցարիան ունի նաև 6 համալսարան (Բազէլ, Ժընև, Ցիւրիխ, Բերն, Լօզան և Ֆրէյբուրգ)։ Նշանաւոր են նաև Ցիւրիխի տեխնիքական բարձրագոյն դպրոցը և Նոյենբուրգի ակադեմեան։

Որովհետև Զվեյցարիայի մակերևոյթի մեծ մասի կազմութիւնը լեռնոտ է, դրա համար նրա ազգաբնակութեան միայն չնչին տոկոսն է երկրագործութեամբ պարապում։ Երկրի տարածութեան $^1/_5$-մասը ներկայացնում է արօտատեղիներ, որոնց բնակիչները գլխաւորապէս պարապում են անասնապահութեամբ։ Զվեյցարական արդիւնագործութիւնը ցանկալի կերպով զարգացած չէ, որովհետև երկրի մէջ երկաթի և քարածխի բացակայութիւնը սաստիկ զգալի է։ Առհասարակ Ալպեան լեռները հանքերով հարուստ չեն։ Դրա փոխարէն Զվեյցարիայում շատ են զարգացած մի քանի արհեստներ, օրժամագործութիւնը, փայտագործութիւնը և այլն։ Զվեյցարիան արտահանում է օտար երկրներ տարեկան մօտ 50 միլիոն ռուբլու ժամացոյցներ։ Շատ զարգացած է Զվեյցարիայում պանրագործութիւնը կաթնային արդիւնքների առատութեան շնորհիւ։ Զվեյցարիան օտար երկիրներից ներմուծում է հացահատիկներ, երկաթ ու քարածուխ և արտահանում է մետաքսէ բամբակէ ապրանքներ, ժամացոյցներ, զվեյցարական պանիր և այլն։

Արդիւնագործութիւնը աւելի շատ զարգացած է Զվեյցարիայի հիւսիս-արևելեան մասում, օրինակի համար մետաքսագործութիւնը, որ շատ ծաղկած դրութեան մէջ է գտնւում։

Ըստ իր ազգաբնակութեան և դաւանութեան Զվեյցարիան բաժանւում է երեք միմեանցից տարբեր մասերի. *Գերմանական, Ֆրանսիական* և *Իտալական Զվեյցարիա*։

Զվեյցարիան հանրապետական դաշնակցական պետութիւն է, որ բաղկացած է 22 մանր և անկախ տէրութիւններից (3 էլ կէս – կանտոններից), որոնցից իւրաքանչիւրը ունի իր յատուկ կառավարութիւնը և օրէնքները։ Կառավարութեան եղանակը հանրապետական է։ Իւրաքանչիւր հասարակապետութիւն կամ կանտոն իրաւունք ունի իր ներքին բոլոր գործերը անկախ կերպով կառավարելու։ Ամբողջ Զվեյցարիային վերաբերող ընդհանուր գործերը— երկրի պաշտպանութիւնը, պատերազմ և խաղաղութիւն հրա-

տարակելմ՝ օտար աէրութիւնների հետ բանակցութեան մէջ մտնելը, փոստային, հեռագրական և դրամական կարգադրութիւնները վճռում է Դաշնակցական ժողովը, որ բաղկացած է շվէյցարական բոլոր տէրութիւնների պատգամաւորներից։

Դաշնակցական ժողովը բաղկացած է երկու պալատներից՝ *Ազգային խորհուրդ* և *կանտոնական խորհուրդ*։ Առաջին խորհուրդը հանդիսանում է իբրև շվէյցարական ամբողջ ժողովրդի ներկայացուցիչը, իսկ երկրորդը՝ շվէյցարական բոլոր կանտոնների կամ նահանգների։ Դաշնակցական ժողովի նախագահը միևնոյն ժամանակ համարւում է և Շվէյցարիայի դաշնակցական հանրապետութեան նախագահը, որ ընտրւում է մէկ տարի ժամանակով։

Ուրեմն Շվէյցարիան մի իսկական դեմոկրատիա կամ ժողովրդապետութիւն է, որտեղ ծայրագոյն իշխանութիւնը պատկանում է շվէյցարական ժողովրդին։

Շվէյցարիայէ մեծ և գլխաւոր քաղաքներից նշանաւոր են.

Բերն, գտնւում է Սար գետի ափին, Շվէյցարիայի գլխաւոր քաղաքն է, որտեղ գումարւում է դաշնակցական խորհուրդը։ Ունի համալսարան և մօտ 70,000 բնակիչ։

Բազէլ, Հռենոսի ափին, Եւրոպայի առևտրական նշանաւոր քաղաքներից մէկն է, որ յայտնի է իր համալսարանով, բարեգործական և կրթական զանազան հիմնարկութիւններով։ Ունի բազմաթիւ գործարաններ։ *Ցիւրիխ*, որ գերմանական Շվէյցարիայի մտաւոր կենտրոնն է և նշանաւոր է իր համալսարանով և բազմարուեստեան բարձրագոյն դպրոցով։ Ցիւրիխը յայտնի է նաև իբրև առևտրական նշանաւոր քաղաք, որ գտնւում է համանուն լճի ափին։ *Շաֆհազուզէն*, Հռենոսի ափին, նշանաւոր է իր յայտնի և համանուն ջրվէժով։ *Սէն Գալլէն*, Եւրոպայի ամենաբարձր քաղաքներից մէկն է, որ յայտնի է թղթի արդիւնաբերութեանը վերաբերող իր գործարաններով։ *Ժընեւ*, համանուն լճի ափին, որ ներկայացնում է ֆրանսիական Շվէյցարիայի մտաւոր կենտրոնը։ Ունի նշանաւոր համալսարան, պետական յայտնի հաստատութիւններ, ժամացոյցի հռչակաւոր գործարաններ, որոնք յայտնի են ամբողջ աշխարհում։

Լոզան, ունի համալսարան և ժամացոյցի յայտնի գործարաններ։ Բնութեան տեսարանները շատ գեղեցիկ են և գրաւում են դէպի իրանց անթիւ ճանապարհորդների։

Նիւշատէլ, նշանաւոր է ժամացոյցի գործարաններով։ Շվէյցարիայի հին կանտոններն են. *Ուրի*, *Շվից*, *Ունթերվալդէն*, *Լիւցերն*, *Ցուգ* և *Գլարուս* համանուն քաղաքներով։ Իտալական կանտոններից նշանաւոր է *Թեչինո*։

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԱՅՍԵՐՈՒԹԻՒՆ

Գերմանիայի կայսերութեան տարածութիւնն է 9,800 քառ. մղոն, որի վրայ ապրում են մօտ $57^1/_2$ միլիոն բնակիչ։ Այդ երկիրը շրջապատւած է Բալթիկ և Գերմանական ծովերով, Դանիայով, Հոլլանդիայով, Բելգիայով, Ֆրանսիայով, Շվէյցարիայով, Աւստրիայով և Ռուսաստանով։

Մակերեւոյթի կազմութիւնն եւ ոռոգումը։ Գերմանիայի գրեթէ ամբողջ տարածութիւնը գտնւում է Եւրոպայի միջին կամ կենտրոնական մասում և հէնց իր աշխարհագրական դիրքի շնորհիւ էլ միշտ ներկայացրել է այն ընդհանուր ասպարէզը, որտեղ վճռւել են Եւրոպային վերաբերող ընդհանուր հարցերից շատերը։ Նա միշտ ներկայացրել է ամբողջ քրիստոնէական—գերմանական աշխարհի կենտրոնը։

Գերմանիան իր մակերեւոյթի կազմութեամբ բաժանւում է երկու՝ միմեանցից տարբեր մասերի. հարաւային բարձր և հիւսիսային ցածր մասերի։ Գերմանիայի մակերեւոյթը հարաւից դէպի հիւսիս աստիճանաբար ցածրանում է, հէնց դրա համար էլ նրա գետերը, բացառութեամբ Դանուպի, հոսում

են այդ ուղղությամբ՝ հարաւից դէպի հիւսիս։ Գերմանիայի հարաւային մասը ամենաբարձր մասն է, որ ներկայացնում է մի սարահարթ, այն ինչ հիւսիսայինը մի ցածր երկիր է։ Գերմանիայի հիւսիսային ծայրերը, որոնք ողողում են Հիւսիսային կամ Գերմանական և Բալթիկ ծովերով, շատ տեղերում ծովի մակերեսից աւելի ցածր են, այնպէս որ մեծ հեղեղումների ժամանակ նրանք կծածկուէին ջրերով, եթէ այդ բանի դէմ արհեստական միջոցներով չառնուէր։ Չնայելով, որ Գերմանիայի հիւսիսային ափերը ողողում են վերոյիշեալ երկու ծովերով և Գերմանիան ունի մեծ նաւատորմ, սակայն նա ցամաքային և ոչ թէ ծովային պետութիւն է։ Հարաւային բարձր Գերմանիայի ճիշտ սահմանի վրայով տարածւում են Բաւարական Ալպերը, որին միացած է Բաւարական սարահարթը։ Միջին Գերմանիան և նրա հարաւ-արևմտեան մասը ներկայացնում է կենտրոնական բարձրաւանդակը, իսկ Գերմանիայի հիւսիսային մասը կազմում է գերմանական ցածր հարթութիւնը։

Բաւարական սարահարթը, որ Ալպեյցարական սարահարթի շարունակութիւնն է, աւելի բարձր է և ունի աւելի ցուրտ և աղքատ բնութիւն։ Այդ սարահարթը ողողում է Դանուպ գետով և Իզար ու Լեխ վտակներով։ Գերմանական բարձրաւանդակի մակերեսյթի կազմութիւնը բազմազան է, նա ունի լեռնաշղթաներ, սարահարթեր, բլուրներ և այլն։ Այդ լեռնաշղթաները յաճախ շատ անչան բարձրութիւն ունին և ծածկւած են անտառներով. (օր. Բոհեմական և Թիւրինգեան լեռները)։ Գերմանական բարձրաւանդակը բաժանւում է երկու մասի. հարաւ-արևմտեան և միջին գերմանական մասերի լեռներ։ Առաջին մասի մէջ մտնում է Ֆրանկոնեան սարահարթը, որ Բաւարական սարահարթից աւելի ցածր է և դրա համար էլ աւելի տաք։ Նրա լայն հովիտներով հոսում են Նեկկար և Մայն գետերը, որոնք շատ լաւ ողողում

են այդ մասը և նրա աշխատանքը բաւականաչափ նպաստում։ Արևմտեան կողմում բարձրանում է հարաւային Գերմանիայի ամենաբարձր լեռնաշղթան՝ Զվարցվալդը։ իսկ նրանից աւելի հիւսիս տարածւում է Օդենվալդը։ Հարաւ-արևմտեան մասի միւս կողմում տարածւում են Վոգեզի լեռները։ Զվարցվալդից սկիզբն է առնում Դանուպ գետը, իսկ Վոգեզի լեռներից Մոզէլը, որ Հռենոսի գլխաւոր վտակներից մէկն է։

Միջին-Գերմանական լեռները մեծ մասամբ ծածկւած են անտառներով։ Դրանց մէջ տարածւող հովիտները կազմում են ամբողջ Գերմանիայի ամենախիտ ազգաբնակութիւն ունեցող երկիրները։

Այդ լեռներից մի քանիսը հարուստ են քարածխի և երկաթի հանքերով, որոնք Գերմանիայի արդիւնաբերութեան զարգացմանը շատ են նպաստում։ Հիւսիսային Գերմանիայի գրեթէ բոլոր գետերը, բացառութեամբ Հռենոսի, իրանց ակիզբն են առնում միջին գերմանական լեռներից։ Այդ լեռների մասերն են կազմում Հարցի, Թիւրինգիայի և Բոհեմական լեռները, որոնք մեծ մասամբ ծածկւած են անտառներով։ Բոհեմական լեռների խմբին են պատկանում. իսկական Բոհեմական, Սաքսոնական հանքային և Սուդէթեան լեռները։

Հիւսիսային Գերմանական ցածր հարթութիւնը Ռուսական հարթութեան շարունակութիւնն է կազմում։ Այդ հարթութիւնը սկսւում է միջին գերմանական լեռներից և տարածւում է մինչև Գերմանական և Բալտիկ ծովերը։ Այդ ամբողջ տարածութիւնը Էլբա գետով բաժանւում է արևմտեան և արևելեան մասերի։ Առաջին կէսի մակերեսյթը աւելի հարթ, ցածր և բնութեամբ աղքատ է, այն ինչ երկրորդը՝ նրա հակապատկերն է ներկայացնում։

Կլիմա։ Գերմանիայի կլիման ընդհանրապէս միատեսակ և բարեխառն է։ Նրա հիւսիսային և հարաւային մասերի կլիմայի մէջ զգալի տարբերութիւն չկայ։ Ամենից շատ տաք

Է Գերմանիայի հաւաւ-արևմտեան մասը, որ շրջապատուող լեռներով պաշտպանւում է ցուրտ քամիների ազդեցութիւնից։ Ծովային կլիմա ունին Գերմանիայի հիւսիսային մասերը. այնտեղ ձմեռը ցուրտ է և երկարատև. գարնանը նոյնպէս ցուրտ է, որովհետև երկու ծովերից ցուրտ քամիներ են փչում։ Անձրևներ շատ են գալիս Գերմանիայի ծովեզրեայ և լեռնոտ մասերում։ Այդ անձրևները սովորաբար երկարատև են լինում և դրա համար էլ երկրի գետերը ամբողջ տարուայ ընթացքում ջրառատ են։ Նրա գետերից նշանաւոր են Հռենոս—Նեկկար, Մայն և Մոզէլ վտակներով, Վեզէր, Էլբա, Օդեր, Վիսլա և Դանուպ։

Գերմանիայի բուսականութիւնը բարեխառն կլիմայի շնորհիւ բաւական հարուստ է։ Երկրի տարածութեան մօտ $^1/_4$-ը ծածկւած է անտառներով, որոնք յայտնի են իրանց բազմազան ծառերով։ Դեռ Տակիտոսի ժամանակ Գերմանիան յայտնի էր իր ամենախիտ անտառներով, որոնց թիւը, սակայն, ժամանակի ընթացքում հետզհետէ պակասել է։ Այդ տեսակէտից Գերմանիան Միջին և Արևմտեան Եւրոպայում առաջին երկիրն է, բացառութեամբ Աւստրո-Ունգարիայի։

Կենդանական աշխարհը Գերմանիայում ընդհակառակը այնքան էլ հարուստ չէ։ Վաղուց են անյայտացել գերմանական անտառներից գիշատիչ գազանները։ Գերակշռող դեր են կատարում միայն ընտանի կենդանիները։

Գերմանիայի ազգաբնակութիւնը ($57^1/_2$ միլ. բն.) բաղկացած է գլխաւորապէս գերմանացիներից, որոնք երկրի տիրող տարրն են կազմում։ Բացի դրանցից այնտեղ բնակում են նաև լեհացիներ, ուրիշ սլաւոններ և ֆրանսիացիներ. լեհացիները կենտրոնացած են Գերմանիայի արևելեան մասում, իսկ ֆրանսիացիները՝ արևմտեան։ Հռենոսի ափին գտնուող մասերը ամենախիտ ազգաբնակութիւնն ունին, այն ինչ երկրի հիւսիսային մասերը նոսր ազգաբնակութիւն։ Ազգաբնա-

կութեան խտութեան կողմից Գերմանիան Եւրոպայի վեցերորդ պետութիւնն է։

Գերմանիայի ազգաբնակութեան 64 %-ը պատկանում է բողոքական կամ լուտերական, իսկ 36%-ը կաթոլիկ դաւանութեան։ Առաջին դաւանութիւնը տիրում է հիւսիսային, իսկ երկրորդը՝ հարաւային Գերմանիայում։ Գերմանական հրէաների թիւը հասնում է մօտ մէկ միլիոնի։

Իր մտաւոր կրթութեամբ Գերմանիան Եւրոպական երկիրների մէջ առաջնակարգ տեղերից մէկն է գրաւում։ Նա ունի զանազան կարգի բազմաթիւ կրթական հիմնարկութիւններ, որոնք հռչակւած են ամբողջ աշխարհումս։ Ժողովրդական կրթութիւնը տարածւած է Գերմանիայի ազգաբնակութեան բոլոր խաւերում, իսկ տարրական կրթութիւնը պարտադիր է ամենքի համար։

Բացի Զվէյցարիայից Եւրոպայի և ոչ մի երկիր չունի այնպիսի բարեկարգ ժողովրդական դպրոցներ, որքան Գերմանիան։ Նրա համալսարանները աշխարհահռչակ են և ամեն երկիրներից գրաւում են ուսանողներ։ Գերմանական համալսարանների թիւը հասնում է 21-ի, որոնցից յայտնի են մասնաւանդ Բերլինի, Լայպցիգի, Միւնխէնի և այլն համալսարանները։

Գերմանիայի բնակիչները գլխաւորապէս պարապում են հողագործութեամբ, անասնապահութեամբ, արդիւնագործութեամբ և առևտրով։ Երկրի տարածութեան գրեթէ կէսի հողը մշակւում է, որ տալիս զանազան հացահատիկներ, գետնախնձոր և այլն։ Հողը մշակւում է նախանձելի կերպով։ Սակայն այդ հացաբոյսերը բաւականութիւն չեն տալիս երկրի ազգաբնակութեան, որ ստիպւած է իր համար անհրաժեշտ հացաբոյսերի մի մասը օտար երկիրներից ստանալ։ Անասնապահութիւնը կազմում է ազգաբնակութեան ապրուստի գլխաւոր միջոցներից մէկը։ Յայտնի են գերմանական

ձիերը, ոչխարները, մանաւանդ մերինոս կոչուած տեսակը, խոզը և այլն։

Զգալի կերպով զարգացած է Գերմանիայում արդիւնաբերութիւնը, որին շատ նպաստում է երկրի մետաղային, հանքային հարստութիւնը, ճանապարհների կանոնաւոր հաղորդակցութիւնը, ազգաբնակութեան խտութիւնը, Գերմանիայի աշխարհագրական դիրքը և այլն։ Գերմանական լեռները տալիս են բաւականաչափ մետաղներ և հանքեր. օր. Սուդէթեան, Սաքսոնեան և Հարցի լեռները քարածուխ, երկաթ, արծաթ, պղինձ, արճիճ և այլն։ Երկաթի արտահանութեան կողմից Գերմանիան ամբողջ Եւրոպայում երկրորդ տեղն է բռնում Անգլիայից յետոյ։

Նախանձելի վիճակի մէջ է գտնւում և գերմանական առևտուրը, որից կախուած է Գերմանիայի ազգաբնակութեան մի զգալի տոկոսի գոյութիւնը։ Գերմանիան ընդարձակ առևտուր ունի, որին շատ են նպաստում նրա աշխարհագրական դիրքը, ջրային և ցամաքային ճանապարհների կանոնաւոր հաղորդակցութիւնը, առևտրական նաւատորմը և հում ու մշակուած նիւթերի արտահանութիւնը։ Հում նիւթերի մի մասը Գերմանիան ստանում է Ամերիկայի և Եւրոպայի զանազան երկիրներից օր. բամբակ, նաւթ, հացահատիկներ, պղինձ և այլն։

Գերմանիայի պետական կազմը սահմանադրական միապետութիւն է։ Գերմանական կայսերութիւնը բաղկացած է 26 անկախ պետութիւններից, որոնցից իւրաքանչիւրը ունի իր յատուկ կառավարութիւնը և օրէնքները, սակայն ամբողջ պետութեան վերաբերող ընդհանուր գործերի ղեկավարութիւնը, օր. երկրի պաշտպանութիւնը, օտար պետութիւնների հետ բանակցելը, փոստ-հեռագրական, երկաթուղային և դրամական գործերը գտնւում է Գերմանիայի կայսրի ձեռքում, որի իշխանութիւնը սահմանափակում են ռայխստագը և չայնդտագը։ Ռայխստագը Գերմանական ժողովրդական ներ-

կայացուցչութիւնն է, իսկ լանդտագը գերմանական պետութիւնների ներկայացուցչութիւնը։

Ամբողջ Գերմանիան բաժանուած է 397 ընտրողական շրջանների, որոնցից իւրաքանչիւրը ընտրում է ռայխստագի համար մի պատգամաւոր 5 տարի ժամանակով. իսկ լանդտագը բաղկացած է 58 ներկայացուցիչներից, որի նախագահը համարւում է կայսրից ընտրուած և նշանակուած պետական կանցլէրը։

Պրուսիայի թագաւորը միևնոյն ժամանակ և Գերմանիայի կայսրն է, որի աթոռանիստն է ամբողջ Գերմանիայի մայրաքաղաք—Բերլին։

Գերմանիայի կայսերութիւնը բաղկացած է 4 թագաւորութիւններից (Պրուսիա, Սաքսոնիա, Բաւարիա և Վիւրթենբերգ,) 6 մեծ հերցոգութիւններից (Մեկլենբուրգ—Շվերին, Մեկլենբուրգ—Շտրելից, Օլդենբուրգ, Սաքսէն—Վայմար, Հեսսէն—Դարմշտատ և Բադէն), 5 հերցոգութիւններից (Բրաունշվայգ, Անհալտ, Սաքսէն—Մայնինգէն, Սաքսէն—Կոբուրգ—Գոթա և Սաքսէն—Ալտենբուրգ) 7 իշխանութիւններից (Լիպպէ—Դետմոլտ, Լիպպպէ—Շաումբուրգ, Վալդէկ, Շվարցբուրգ—Զոնդերհաուզէն, Շվարցբուրգ—Ռուդոլֆշտատ, Ռէյս աւագ գծի և Ռէյս կրտսեր գծի), 3 երեք ազատ քաղաքներից (Համբուրգ, Բրեմէն և Լիւբէգ) և 1 կայրեսական կալուածից (Էլզաս—Լոթարինգիա)։

ՊՐՈՒՍԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Պրուսիան գերմանական տէրութիւններից ամենամեծն է։ Նրա տարածութիւնն է մօտ 6,000 քառ. մղոն, որի վրայ ապրում են 32 միլիոն բնակիչ։ Նրա մեծ մասը գտնւում է հիւսիսային գերմանական հարթութեան վրայ, որտեղով

հոսում են երկրի գլխաւոր գետերը։ Նրա գլխաւոր նահանգներից և քաղաքներից նշանաւոր են. Բրանդենբուրգ, որի գլխաւոր քաղաք Բերլինը տէրութեան մայրաքաղաքը և կայսրի աթոռանիստն է։ Այս քաղաքը, որ գտնւում է Շպրէ գետի ափին, ամբողջ երկրի մտաւոր, քաղաքական և հասարակական կենտրոնն է։ Բերլինը առևտրական նշանաւոր քաղաք է, ունի հռչակաւոր համալսարան և մօտ 2 միլիոն բնակիչ։ Բերլինի մօտն է գտնւում և Պոտսդամ, որ կայսրի երկրորդ աթոռանիստն է։ Սաքսոնիա, գլխաւոր քաղաքն է Մագդեբուրգ, Էլբա գետի ափին, շաքարի առևտրի գլխաւոր կենտրոններից մէկն է. այդ քաղաքը ունի 250,000 բնակիչ։ Այդ նահանգումն է գտնւում նաև Հալլէ համալսարանական և առևտրական քաղաքը։ Շլեզիա, գլխաւոր քաղաքն է Բրեսլաու, որ գտնւում է Օդեր գետի ափին, ունի մօտ 400,000 բնակիչ և համալսարան։ Բրեսլաուն յայտնի է իր մեքենաներով և ոսկի ու արծաթէ գործուածքներով։ Նահանգի երկրորդ քաղաքն է Գիօրլից, որ մեծ առևտուր ունի։ Իսկական Պրուսիա, գլխաւոր քաղաքներն են Մեմէլ, Քեօնիգսբերգ, Դանցիգ և Տօրն։ Քիօնիգսբերգը Գերմանիայի երրորդ նշանաւոր նաւահանգիստն է, որ ընդարձակ առևտուր ունի։ Ունի 200,000 բնակիչ և բաւական յայտնի համալսարան։ Դանցիգը ցորենի և փայտի մեծ առևտուր ունի և յայտնի ամրոց է, իսկ Տօրնը պաշտպանում է Գերմանիայի արևելեան սահմանը։ Պոմերանիա, որի գլխաւոր քաղաքն է Շտետտին, իսկ վերջինիս նաւահանգիստը՝ Սվինեմիւնդէ։ Պոզնան համանուն գլխաւոր քաղաքով, որ նշանաւոր բերդ է։ Հոլշտայն, գլխաւոր քաղաքն է Քիլ, որ պատերազմական նշանաւոր նաւահանգիստ է, որտեղ կանգնում է Գերմանական նաւատորմը։ Երկրորդ քաղաքն է Ալթոնա։ Շլեզվիգ—Փլենսբուրգ գլխաւոր քաղաքով. Հաննովէր, համանուն գլխաւոր

քաղաքով։ Վեստֆալիա, որ յայտնի է իր քարածխի և երկաթի հանքերով։ Գլխաւոր քաղաքներն են Բիլեֆէլդ և Դորտմունդ։ Հենոսեան նահանգ, որտեղ շատ զարգացած է արդիւնագործութիւնը, քարածխի և երկաթի հանքերի առատութեան շնորհիւ։ Գլխաւոր քաղաքներն են Կոլէնց, Քեօլն, որ առևտրական նշանաւոր քաղաք է։ Քելօնը յայտնի է իր օդըկլոլոն կոչւած անուշահոտ ջրով և եկեղեցով, որ գոթական ճարտարապետութեամբ ամենամեծ և ամենագեղեցիկ շինութիւնն է աշխարհումս։ Դիւսելդորֆ, յայտնի է մեքենաների գործարաններով. Կրեֆէլդ, Ախէն և Էսսէն։ Վերջինս յայտնի է չուգունի գործարաններով, որտեղ պատրաստում են Կրուպպի թնդանօթները. Հեսսէն—Նասսաու, որ նշանաւոր իր գինիներով։ Գլխաւոր քաղաքներն են Կասսէլ և Փրանկֆուրտ (Մայնի վրայ)։ Երկուսն էլ առևտրական խոշոր քաղաքներ են, մանաւանդ վերջինը։ Այդ նահանգումն են գտնւում և Վիսբադէն, Շվալբախ, Էմս, Սոդէն և Զելտէրս, որոնք յայտնի են իրանց հանքային բուժիչ ջրերով։

ՍԱՔՍՈՆԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Սաքսոնիայի թագաւորութիւնը բռնում է Սաքսոնիան—Հանքային լեռների հիւսիսային փեշերը և գերմանական ցածրը հարթութեան մի մասը և ոռոգւում է Էլբա գետով։ Այստեղ հողը օրինակելի կերպով մշակւում է և որովհետև երկրի խիտ ազգաբնակութիւնը (մօտ 4 միլիոն) չէ կարող միայն հողագործութեամբ իր գոյութիւնը պահպանել, դրա համար պարապում է նաև հանքագործութեամբ և արդիւնագործութեամբ։

Սաքսոնիայի մայրաքաղաքն է Դրէզդէն, որ միևնոյն ժամանակ թագաւորութեան աթոռանիստն է։ Այս քաղաքը Գեր-

մանիայի ամենագեղեցիկ քաղաքներից մէկն է, ունի 340,000 բնակիչ և նշանաւոր է իր գեղարուեստական աշխարհահռչակ թանգարաններով (նկարչական գալլերէա և այլն)։ *Մայզէն*— նշանաւոր է իր յախճապակէ իրերի գործարաններով։ *Լայպցիգ*, Գերմանիայի ամենանշանաւոր առևտրական քաղաքներից մէկը, ունի 400,000 բնակիչ և հռչակաւոր համալսարան։ Լայպցիգում տեղի են ունենում տարեկան 3 տօնավաճառներ, որոնց մասնակցում են ոչ միայն գերմանական, այլ և աշխարհիս մի քանի նշանաւոր երկիրների բաղաքները։ Լայպցիգը յայտնի է իր տպարաններով, գրավաճառանոցներով և նշանաւոր երաժիշտներով։ *Քեմնից*, գործարանական նշանաւոր քաղաք է։

ԲԱՒԱՐԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Բաւարիայի թագաւորութիւնը իր մեծութեամբ Գերմանիայի երկրորդ թագաւորութիւնն է, որ ունի 6 միլիոնից աւելի բնակիչ և 1,400 քառ. մղոն տարածութիւն։ Տէրութեան մայրաքաղաքը և աթոռանիստն է *Մինխէն*, Իզար գետի ափին, ունի 400,000 բնակիչ, նշանաւոր համալսարան և բոլոր գեղարուեստների վերաբերեալ թանգարաններ, որոնք դէպի իրանց են գրաւում բազմաթիւ գեղարուեստագէտների։ Մինխէնը հռչակւած է նաև բաւարական կոչւած գարեջրով։ *Ռէգենսբուրգ*, *Աուգսբուրգ*, և *Նիւրնբերգ*—առևտրական և գործարանական նշանաւոր քաղաքներ են, որոնցից վերջինս յայտնի է «գերմանական թանգարան»—ով, որտեղ ամփոփւած են միջնադարեան գեղարուեստներին վերաբերող նշանաւոր յիշատակարանները։

ՎԻՒՐԹԵՆԲԵՐԳԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Այս թագաւորութեան ազգաբնակութեան թիւը 2 միլիոնից աւելի է, որի մայրաքաղաքը և աթոռանիստն է *Շտուտգարդ*։ Վերջինս ունի մօտ 160,000 բնակիչ և յայտնի է իր խոշոր տպարաններով։ *Ուլմ*, առևտրական քաղաք է։

Բադէնի մեծ հերցոգութեան մայրաքաղաքը և աթոռանիստն է *Կարլսրուէ*։ *Մանհայմ*, առևտրական նշանաւոր քաղաքներից մէկն է. *Հայդելբերգ*—յայտնի է իր հռչակաւոր համալսարանով և *Բադէն*—*Բադէն*—հանքային աշխարհահռչակ աղբիւրներով։

Հեսսէն—*Դարմշդատի մեծ հերցոգութեան* մայրաքաղաքը և աթոռանիստն է *Դարմշդատ*։ *Մայնց*, առևտրական մեծ քաղաք է, որ յայտնի է իր կաշեգործարաններով։

Էլզաս Լոթարինգիա—կայսերական կալուածի գլխաւոր քաղաքն է *Ստրասբուրգ*, որ նշանաւոր առևտուր ունի և միևնոյն ժամանակ յայտնի բերդաքաղաք է։ Երկրորդ բերդաքաղաքն է *Մետց*։

Գերմանիայի երեք ազատ քաղաքներն են *Համբուրգ*, *Լիւբէգ* և *Բրեմէն*։ Այդ քաղաքներից առաջինը Գերմանիայի առաջին առևտրական նաւահանգիստն է, որ ունի մօտ 630,000 բնակիչ։ Միևնոյն տեսակէտից աչքի են ընկնում երկրորդ և երրորդ քաղաքները։

Գերմանիային միւս մայր ցամաքներում պատկանում են հետևեալ գաղութները։

Աֆրիկայում—*Տոգօ* Վերին Գվինէայում, *Կամերուն*, *Գերմանական Հարաւ-Արևմտեան Աֆրիկա*, *Գերմանական Արևելեան Աֆրիկա*։

Ասիայում—*Չինաստանի* ափերում *Կիաօ—Չաու*։

Աւստրալիայում—*Մարիանեան—Կարոլինեան*, *Մարշալ-*

եան և Սողոմոնեան կղզիները, Նոր Գվինէայի հիւսիս-արևելեան մասը, Բիսմարկի Ս.Հիշիալեյազը (Նոր-Գոմերանիա և Նոր-Մեկլենբուրգ) *և Սամոա։* Գերմանական բոլոր գաղութների ազգաբնակութեան թիւը հասնում է մօտ 15 միլիոնի։

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԿԱՑՄՐՈՒԹԻՒՆ

Աւստրօ-Ունգարիայի կայսրութիւնն էլ գտնւում է Միջին Եւրօպայում և սահմանափակւած է Ռուսաստանով, Ռումենիայով, Սերբիայով, Թիւրքիայով, Ղարադաղով, Իտալիայով, Շվէյցարիայով և Գերմանիայով։ Իր դիրքով նա էլ մի իսկական ցամաքային պետութիւն է։ Բացառութիւն է կազմում միայն Աւստրօ-Ունգարիայի մի աննշան մասը, որ ողողւում է Ադրիական ծովով։ Նրա ամբողջ տարածութիւնը (Բոսնիայի և Հերցոգովինայի հետ) 11,000 քառ. մղոն է, որի վրայ ապրում են մօտ 47 միլիոն բնակիչ։

Իր մակերևոյթի կազմութեամբ Աւստրօ-Ունգարիան ներկայացնում է մի բարձր և լեռնոտ երկիր, որի արևմտեան կողմում տարածւում են Ալպեան, հիւսիս-արևմտեան կողմում՝ Բոհեմիայի և Մորավիայի, իսկ արևելեան կողմում՝ Կարպատեան լեռները։ Աւստրօ-Ունգարիայի ամբողջ տարածութեան $^3/_4$ մասը բարձր և լեռնոտ մակերևոյթ ունի։ Այդ տարածութեան կենտրօնական մասը գլխաւորապէս ցածր հարթութիւն է ներկայացնում։

Ողողման տեսակէտից Աւստրօ-Ունգարիան բաւարար վիճակի մէջ է գտնւում։ Նրա մայր գետը Դանուպն է Ին, Դրավա, Սավա, Մորավա և Տիսսա վտակներով։ Բացի դրանից Աւստրիային են պատկանում Էշ, Դնեստր, Վիսլա, Օդեր և Էլբա գետերի վերին հոսանքները։ Սակայն այդ գետերը այնպիսի յարմարութիւններ չունին, ինչպէս որ Եւրօպայի մի քանի առաջնակարգ երկիրների գետերը։ Դրանք արագահոս են, իրար հետ միացած չեն ջրանցքներով, որովհետև անջատւած են միմեանցից լեռներով և անանաւարկելի են, որովհետև այդ գետերի միայն վերին մասերն են հոսում Աւստրիայում։

Աւստրօ-Ունգարիայի կլիման Գերմանիայի կլիմայից աւելի տաք է, որովհետև նրանից աւելի հարաւ է գտնւում։ Նրա կլիման ընդհանրապէս ցամաքային է, որովհետև երկիրը գրեթէ ամբողջապէս շրջապատւած է լեռներով և ազատ է ծովերի ազդեցութիւնից։ Բացառութիւն է կազմում նրա միայն մի չնչին մասը, որ գտնւում է Ադրիական ծովի ափին. դրա համար էլ այդ մասում աճում են նոյն իսկ հարաւային պտղատու ծառերը. ամենից շատ ցամաքային է կլիման Աւստրիայի հարաւային մասում՝ Ունգարիայում։ Ըստ իր կլիմայի Աւստրիան բաժանւում է հիւսիսային, միջին և հարաւային մասերի։ Հիւսիսային մասը գտնւում է հիւսիս արևելեան հողմերի ազդեցութեան տակ և խաղող չէ տալիս, միջին մասերում առատութեամբ աճում է խաղողը, իսկ հարաւային մասերում, որ գտնւում է հարաւային հողմերի ճանապարհի վրայ, աճում են կանաչ ծառեր և հարաւային պտուղներ։ Անձրևներ շատ են գալիս Աւստրօ-Ունգարիայի արևմտեան կէսում։

Իր ազգաբնակութեան բազմութեամբ Աւստրիան Եւրօպայի երրորդ տէրութիւնն է, Ռուսաստանից և Գերմանիայից յետոյ, իսկ բազմութեան կողմից նրանից գերադաս է միայն Բալկանեան թերակղզին։ Ազգաբնակութեան խտութեամբ՝ Աւստրօ-Ունգարիան Եւրօպայի հինգերորդ երկիրն է։ Խիտ ազգաբնակութիւն ունի նրա հիւսիս-արևմտեան մասը, այն ինչ արևմտեան լեռնոտ նահանգները, ընդհակառակը։ Երկրի ազգաբնակութեան բազմազանութիւնը կարելի է բացատրել գլխաւորապէս Աւստրօ-Ունգարիայի աշխարհագրական դիրքով։ Այս երկիրը Ասիայից Եւրօպա գաղթած շատ ազգերի համար ժամանակա-

ւոր ապաստան է եղել, որովհետև ճանապարհի վրայ է եղել։ Աւստրո-Ունգարիայում ապրում են սլաւոնական, գերմանական, ռոմանական և մոնղոլական ցեղերին պատկանող ազգեր։ Նրա ազգաբնակութեան գլխաւոր մասը պատկանում է սլաւոնական ցեղին, որ բաղկացած է *չեխերից, ռուսիններից, լեհացիներից, խրուաթներից, սլաւիններից* և *սերբերից*։ Այդ ցեղին պատկանող բնակիչների թիւը հասնում է մօտ 20 միլիոնի։ Գերմանական ցեղին պատկանում են միայն *գերմանացիները*, որոնք հանդիսանում են երկրի տիրող տարրը, ցրուած Աւստրո-Ունգարիայի գրեթէ բոլոր մասերում։ Դրանց թիւը հասնում է մօտ 12 միլիոնի։ Ռոմանական ժողովրդներն են *իտալացիները* և *ռումինները*, որոնց թիւը հասնում է մօտ 4 միլիոնի։ Աւստրիայում մոնղոլական ցեղի ներկայացուցիչներն են *ուգարները* կամ *մաջառները*, թւով մօտ 8 միլիոն։ Կան նաև երկու միլիոն հրէաներ և գնչուներ, որոնց դրութիւնը բաւական աննախանձելի է։ Սլաւոնական ցեղին պատկանող ժողովուրդները բաժանւում են հիւսիսային և հարաւային սլաւոնացիների։ Առաջինն պատկանում են չեխերը, մորովացիները, սլովակները, լեհերը և ռուսինները, իսկ երկրորդին՝ սերբերը, խրուաթները և սլովինները։

Ըստ կրօնական դաւանութեան Աւստրո-Ունգարիայի ժողովրդները բաժանւում են *կաթոլիկների* (տիրապետող դաւանութիւնը), *ուղղափառների, ըողոքականների, մոսկսականների, մահմեդականների* և այլն։

Կրթութիւնը հաւասար չափով չէ տարածւած Աւստրո-Ունգարիայի բոլոր մասերում։ Գերմանական ազգաբնակութիւն ունեցող նահանգներում ժողովրդական կրթութիւնը աւելի նախանձելի դրութեան մէջ է գտնւում, քան սլաւոնական և ռումանական նահանգներինը։ Մտաւոր կուլտուրայի տեսակէտից բացառական դրութեան մէջ են գտնւում մանաւանդ Աւստրո-Ուգարիայի արևելեան նահանգները, որոնց

բազմազան լեզուները արգելք են հանդիսանում ժողովրդական կրթութեան զարգացմանը։ Մօտ 3000-ի է հասնում այն դպրոցների թիւը, որոնց մէջ դասաւանդութիւնը մի քանի լեզուներով է կատարւում. օր. գերմաներէն, լեհերէն, ռութեներէն և այլն։ Գերմանական նահանգներում գրեթէ բոլորը գիտեն գրել և կարդալ, այն ինչ Գալիցիայում, Բուքովինայում, Սլաւոնիայում, Զիբենբիւրգէնում անգրագէտ բնակիչների թիւը ահագին տոկոս է կազմում։ Սակայն չնայելով դրան Աւստրո-Ունգարիան ունի բաւականաչափ տարրական, միջնակարգ, մասնագիտական դպրոցներ և 11 համալսարան, որոնցից 5-ը գերմանական են (Վիեննա, Գրաց, Պրագա, Ինսբրուգ և Զերնովից), և 6-ը ոչ գերմանական (Պրագա, Կրակով, Լեմբերգ, Պեշտ, Կլաուզենբուրգ և Զագրամ)։

Աւստրո-Ունգարիան թէև Զվէյցարիայի նման լեռնոտ երկիր է, սակայն մշակելի տարածութիւնը աւելի մեծ տեղ է բռնում, այն ինչ անյարմար մասը երկրի $^1/_{10}$ տարածութիւնն է կազմում։ Երկրի մնացած տարածութիւնը բաղկացած է ընդարձակ արօտատեղերից, խիտ անտառներից և մշակւած դաշտերից։ Այդ դաշտերի վրայ ցանում են եւրոպական գրեթէ բոլոր բոյսերը։ Աւստրո-Ունգարիայի լեռները հարուստ են մի շարք հանքերով և մետաղներով, որոնցից սակայն այնքան էլ ցանկալի կերպով չեն օգտւում երկրի բնակիչները։ Դրանցից նշանաւոր են երկաթ, պղինձ, արծաթ, քարածուխ, նաւթ, աղ և այլն։ Աւստրո-Ունգարիան, մանաւանդ նրա Բոհեմիա և Ունգարիա կոչւած մասերը ունին աշխարհահռչակ բազմաթիւ հանքային ջրեր, որոնք բուժիչ յատկութիւն ունին և ամեն տարի տասնեակ հազարաւոր հիւանդներ են գրաւում։

Աւստրո-Ունգարիայի բնակիչները պարապում են հողագործութեամբ, հանքագործութեամբ, անասնապահութեամբ, արդիւնագործութեամբ և վաճառականութեամբ։

Հողագործութեամբ պարապողները գլխաւորապէս մշակում են հացաբոյսեր, ցորեն, հաճար, եգիպտացորեն, որոնց մի մասը արտահանւում է օտար երկիրներ։ Աւստրո-Ունգարիան յայտնի է նաև միջին Եւրոպական և հարաւային պըտուղներով, որոնք առատին քանակութեամբ մշակւում են։ Յայտնի են աստրիական խաղողը (ունգարական գինի) և ծըխախոտը։

Անասնապահութիւնը կազմում է երկրի բնակիչների գլխաւոր զբաղմունքներից մէկը. անասուններից նշանաւոր են ունգարական ձին, որ Եւրոպական հռչակ ունի։ Հանքագործութիւնը ևս չէ հասել իր ցանկալի զարգացման, չնայելով որ Աստրո-Ունգարիայի լեռները հարուստ են, ինչպէս վերևում ասացինք, մի շարք մետաղներով և հանքերով։

Երկրի արդիւնագործութիւնն էլ զարգացած դրութեան մէջ չէ գտնւում, այնպէս որ այդ տեսակէտից Աւստրո-Ունգարիան կախումն ունի Եւրոպայի արդիւնագործական մի քանի երկիրներից։ Արդիւնագործական մի քանի ճիւղերում նա կատարելագործութեան մի որոշ աստիճանի է հասել. օրինակի համար աւստրիական աթոռները, տնային ուրիշ կահկարասիներ, կառքեր և ֆիզիքական ու երաժշտական մի քանի գործիքները։

Աւստրո Ունգարիայի բնական պայմանները՝ երկրի մակերևոյթի կազմութիւնը և ռոգումը այնքան էլ նպաստաւոր չեն առևտրի զարգացման համար, սակայն չնայելով այդ անբարեյաջող հանգամանքին, առևտուրը ժամանակի ընթացքում հետզհետէ առաջադիմում է, որովհետև երկիրը ծածկւում է երկաթուղիների նոր ցանցերով։ Առևտրական տեսակէտից Աւստրո-Ունգարիան ունի երկու խոշոր կենտրոններ՝ Վիեննա և Տրիեստ քաղաքները։

Մեզանից մօտ 20 տարի առաջ Աւստրո-Ունգարիան դեռ ևս արդիւնագործական երկիր չէր և բաւականանում էր մի-

այն հում նիւթեր արտահանելով դէպի արևմտեան երկիրները, իսկ այժմ նա արտահանում է նաև իր սեպհական գործարանների ապրանքները։ Արտահանութեան նիւթերը կազմում են փայտ, շաքար, անասուններ, քարածուխ, հացահատիկներ, կաշուղէններ և այլն, իսկ ներմուծում է բամբակ, մեքենաներ, բուրդ, ծխախոտ և այլն։

Աւստրո-Ունգարիան սահմանադրական միապետութիւն է։ Կայսրի իրաւունքը սահմանափակում է աւստրիական *ըայխսրաթը*։

Աւստրիան բաղկացած է երկու միացեալ տէրութիւններից, որոնցից իւրաքանչիւրը ունի իր յատուկ սահմանադրութիւնը։ Երկու տէրութիւններն են՝ Աւստրիա և Ունգարիա կամ Մաճառստան, որոնցից առաջնի մայրաքաղաքն է *Վիեննա*, իսկ երկրորդինը՝ *Բուդա-Պեշտ*։

Աւստրիայի նահանգներից և քաղաքներից նշանաւոր են.

Աստրիայի էրցհերցօգութիւն, գլխաւոր քաղաքն է *Վիեննա*, որ միևնոյն ժամանակ ամբողջ պետութեան մայրաքաղաքը և ամենառանիստն է։ Ունի մօտ $1^1/_2$ միլիոն բնակիչ, հռչակաւոր համալսարան և առևտրական մեծ նշանակութիւն. Վիեննան ամբողջ երկրի մտաւոր և քաղաքական կենտրոնն է։ Եւրոպայի քաղաքներից շատ քչերը այնպիսի նշանաւոր դիրք ունին, ինչպիսին Վիեննայինն է։ Այդ մայրաքաղաքը Եւրոպայի ամենագեղեցիկ քաղաքներից մէկն է։ Այդ նահանգի միւս քաղաքներից նշանաւոր են *Լինց* և *Շտայէր*։

Զալցբուրգ — գլխաւոր համանուն քաղաքով։ Այդ նահանգի բնութիւնը շատ գեղեցիկ է և հարուստ է աղի հանքերով։

Թիրոլ և *Փորալբէրգ*, գլխաւոր քաղաքներն են *Ինսբրուգ*, *Տրիենտ*, *Մերան* և *Բոցէն*։ Վերջին երկուսը յայտնի են իբրև նշանաւոր կուրորտներ։

Շտիրիա — Գրաց, որ նշանաւոր առևտրական քաղաք է։

Կարինթիա—գլխաւոր քաղաքն է *Կլագէնֆուրտ*։

Կրայնա—*Ղրինա* գլխաւոր քաղաքով։ Միւս քաղաքներից նշանաւոր է *Հայրեան*։

Ծովեզեայ երկիր—գլխաւոր քաղաքն է *Տրիեստ*, գտնւում է Ադրիատիքական ծովի ափին և Եւրոպայի առևտրական նշանաւոր նաւահանգիստներից մէկն է, ունի մոտ 200,000 բնակիչ։ *Պոլա* Աւստրիայի պատերազմական նշանաւոր նաւահանգիստն է։

Դալմացիա, գլխաւոր քաղաքն է *Ցարա*, որ նշանաւոր նաւահանգիստ է և առևտուր է անում Հերնոգորիայի իշխանութեան հետ։

Բոհեմիա—գլխաւոր քաղաքն է *Պրագա*, որ Աւստրիայի առևտրական և արդիւնաբերական նշանաւոր քաղաքներից մէկն է։ Վերոյիշեալ նահանգը անտառաշատ է, ունի հանքային մեծ հարստութիւն և խիտ ազգաբնակութիւն։ Պրագայում երկու համալսարան կայ, մէկը գերմանական, միւսը չեխական։ Բոհեմիայումն են գտնւում *Մարիենբատ* և *Կարլսբատ* աշխարհահռչակ հանքային ջրերը։

Գալիցիա—գլխաւոր քաղաքն է *Կրակով*, որ առևտրական քաղաք և նշանաւոր ամրոց է։ Երկրորդ նշանաւոր քաքաղաքն է *Լեմբերգ* կամ *Լվով*, որի բնակիչները առևտուր են անում Ռուսաստանի հետ։ Լեմբերգ և Կրակով քաղաքները 15—16-րդ դարերում կազմում էին Լեհաստանի հայ գաղթականութեան գլխաւոր կենտրոնները։ Այդ գաղթականութեան անդամների թիւը հասնում էր մոտ 40,000 հայ ընտանիքի, որոնք ժամանակի ընթացքում, մանաւանդ Լեմբերգի Նիկոլ Թորոսովիչ հայ կաթոլիկ առաջնորդի օրով կաթոլիկութիւն ընդունեցին և հետզհետէ իրանց յարաբերութիւնը կտրելով մայր հայրենիքի հետ, ձուլուեցան Լեհաստանի տիրապետող տարրի հետ։ Մինչև այսօր էլ Լեմբերգում և մի քանի ուրիշ քաղաքներում մնացել են այդ կաթոլիկ հայերի մնացորդները։ Լեմբերգում դեռ այսօր էլ կանգուն է հայոց եկեղեցին և մնացել է հայկական փողոցը։

Բուքովինա—գլխաւոր քաղաքն է *Չերնովից*, առևտուր է անում Ռուսաստանի և Ռումինիայի հետ։ Այս նահանգում մինչև այսօր էլ մնացել հայկական մի մեծ գաղթականութեան մնացորդները, որոնց թիւը ժամանակի ընթացքում աստիճանաբար նուազել է։ Չնայելով որ կաթոլիկ հոգևորականութիւնը այդ հայերին էլ աշխատել է դաւանափոխ անել, սակայն նրանք կարողացել են պահպանել իրանց կրօնը և լեզուն։

Ունգարիայի նահանգներից և քաղաքներից նշանաւոր են։

Տրանսիլվանիա—գլխաւոր քաղաքն է *Կրօնշտատ*։ Այս նահանգի ազգաբնակութիւնը բաղկացած է ունգարներից, ռումիններից, գերմանացիներից, հայերից և գնչուներից։ Հայերը այն մեծ գաղթականութեան մնացորդներն են, որոնք երբեմն մեծ դեր էին խաղում այս նահանգում և Աւստրիական կայսրներից մեծամեծ արտօնութիւններ ստացան։ Սակայն կաթոլիկ հոգևորականութեան շնորհիւ վերոյիշեալ հայերի մի մասն էլ հեռացաւ իր դաւանութիւնից և հետզհետէ օտարացաւ։ Մինչև այսօր էլ մնում է հայերի հիմնած *Հայաքաղաքը* կամ *Արմենիերշտատը*, որ մի ժամանակ մի ինքնավար փոքրիկ իշխանութիւն էր կազմում, որ ունէր իր հայ քաղաքապետը և դատարանը։

Ունգարիա—գլխաւոր քաղաքն է *Բուդա-Պեշտ*, առևտրական շատ նշանաւոր քաղաք է, որ ունի մոտ $1/2$ միլիոն բնակիչ։

Պրեսբուրգ—ունգարական թագաւորների երբեմնի աթոռանիստն է։

Խորուաթիա—գլխաւոր քաղաքն է *Ազրամ*, որ ունի համալսարան։ Երկրորդ քաղաքն է *Փիումէ*, որ գտնւում է Ադրիատիկ ծովի ափին և առևտրական նաւահանգիստ է։

Աստրո-Ունգարիայի կայսերութեան գերիշխանութիւնն են ճանաչում նաև Բոսնիան և Հերցոգովինան, որոնց ազգաբնակութեան գլխաւոր տարրը կազմում են սերբերը։ Գլխաւոր քաղաքն է Սարաեվո։ Այդ երկու վայրերի բնակիչները անունով ճանաչում են նաև Թիւրքիայի սուլթանի գերիշխանութիւնը։

ՀՈԼԼԱՆԴԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Այս թագաւորութիւնը, որ գտնւում է Գերմանիայի հիւսիս-արևմտեան կողմում, ունի մօտ 650 քառ. մղոն տարածութիւն, որի վրայ ապրում են 5 միլիոնից աւելի բնակիչ։ Հոլլանդիայի կամ Նիդերլանդիայի (Ստորին երկիր) սահմանները կազմում են Հիւսիսային կամ Գերմանական ծովը, Բելգիան և Գերմանիան։

Հոլլանդիան, որ գտնւում է Գերմանական հարթութեան շարունակութեան վրայ, ամբողջ Եւրոպայի ամենացածր երկիրն է։ Նրա ամբողջ տարածութեան մի քանի մասերը նոյն իսկ ծովի մակերևոյթից ցածր են և շատ կմնասէին հարևան ծովից, եթէ արհեստական պատնէշները չլինէին, որոնք երկիրը ազատում են հեղեղումներից։ Այդպիսի պատնէշներ են գտնւում նաև երկրի մեծ գետերի ափերին։ Հին ժամանակները վերոյիշեալ հեղեղումները ահագին վնասներ են տուել երկրի բնակիչներին և նրանցից շատերին նոյն իսկ խեղդամահ արել։ Իր մակերևոյթի կազմութեամբ Հոլլանդիան Ճվէյցարիայի հակապատկերն է ներկայացնում, իսկ ուռոգման կողմից Եւրոպայի առաջին երկիրն է։ Նա ջրերով ամենահարուստ երկիրն է Եւրոպայում։ Հոլլանդիան ուռոգւում է գլխաւորապէս Հռենոս, Մաաս և Ճելդա գետերով, որոնք միմեանց հետ միացած են ջրանցքներով։ Այդ գետերը և նրանց

միացնող ջրանցքները երկրի ներքին հաղորդակցութեան զարգացման համար ամենամեծ ծառայութիւնն են մատուցանում։ Ջրանցքների թիւը այնքան շատ է, որ նրանք ծառայում են փողոցների, իսկ նրանց վրայ երթևեկող նաւերը կառքերի փոխարէն։

Հոլլանդիայի ափերի մօտ գտնւում են մի շարք մեծ ու փոքր կղզիներ, որոնց վրայ բաւականաչափ մարդիկ են բնակում։

Հոլլանդիայի կլիման ծովային է և ջրերի առատութեան շնորհիւ խոնաւ։ Նրա երկինքը գրեթէ միշտ ամպամած է, երկիրը պատած մառախուղով, սարսափելի անձրևներ են գալիս ամառը, իսկ ձմեռը՝ շատ ձիւն։

Անտառները հազուագիւտ են Հոլլանդիայում, որի տարածութեան մեծ մասը արօտատեղիներից և այգիներից է բաղկացած, մանաւանդ երկրի արևելեան մասում։

Հոլլանդիայի ազգաբնակութիւնը բաղկացած է հոլլանդացիներից, ֆլամանդացիներից և գերմանացիներից, որոնք բոլորն էլ պատկանում են գերմանական ցեղին։ Այդ ազգաբնակութեան $^3/_5$-ը պատկանում է բողոքական, իսկ մնացածը՝ կաթոլիկ դաւանութեան։ Այնտեղ ապրում են նաև բաւականաչափ հրէաներ, որոնք մեծ մասամբ գաղթել են Իսպանիայից։

Երկրի տիրապետող տարրը իր թւով, լեզուով և քաղաքակրթութեամբ կազմում է հոլլանդականը, որ մի յանդուգն, աշխատասէր և անկեղծ ժողովուրդ է։ Նայելով տարածութեան, Հոլլանդիան ունի շատ խիտ ազգաբնակութիւն և այդ տեսակէտից (իւրաքանչիւր քառ. կիլոմետրի վրայ 157) նա ամբողջ Եւրոպայի երկրորդ տէրութիւնն է։ Ամենից խիտ ազգաբնակութիւն ունի Հոլլանդիայի արևմտեան ծովեզրեայ մասը։ Ժողովրդական կրթութեան տեսակէտից Հոլլանդիան Եւրոպայի նախանձելի երկիրներից մէկն է։ Այնտեղ գոյութիւն ունին ժողովրդական բազմաթիւ միջնա

կարգ դպրոցներ և 4 համալսարան, որոնցից Եւրոպական հռչակ վայելողը Լայդէնի համալսարանն է։ Հոլլանդիայում նոր փորձեր են անում տարրական կրթութիւնը երկրի ամբողջ ազգաբնակութեան համար պարտադիր անելու։

Հոլլանդիայի բնակիչները պարապում են հողագործութեամբ, ձկնորսութեամբ, անասնապահութեամբ, կաթնատնտեսութեամբ (հոլլանդական կաթ և պանիր), նաւաշինութեամբ և առևտրով։ Երկրի արտադրած հացահատիկները ամբողջ ազգաբնակութեան բաւականութիւն չեն տալիս և դրա համար դրանց մի մասը ստանում են օտար հարևան երկիրներից։

Որովհետև Հոլլանդիայի տարածութեան մեծ մասը արօտատեղիներից է բաղկացած, դրա համար էլ անասնապահութիւնը այնտեղ շատ զարգացած է։ Շատ ընդարձակ է երկրի ծովային առևտուրը, որի շնորհիւ հոլլանդացիները դարձել են Եւրոպայի առևտրական նշանաւոր ժողովրդներից մէկը։ Նրանք նաև հմուտ ծովագնացներ են։

Հոլլանդիայի կառավարութիւնը սահմանադրական միապետութիւն է։ Թագաւորի իրաւունքները սահմանափակուած են պարլամենտով, որ կոչւում է գեներալ շտատներ։

Հոլլանդիան բաժանւում է 11 նահանգների, որոնցից իրանց գլխաւոր քաղաքներով նշանաւոր են.

Հիւսիսային—Հոլլանդիա, որ կազմում է մի թերակղզի։ Գլխաւոր քաղաքն *Ամստերդամ*, (1/2 միլիոն բնակիչ), շինուած է ձողերի վրայ և յիշեցնում է իր ջրանցներով Իտալիայի Վենետիկ քաղաքը։ Ամստերդամը Հոլլանդիայի միակ անվտանգ նաւահանգիստն է, որտեղ մտնում են ամենամեծ նաւերը։ Այս քաղաքը հոլլանդական զաղութների հետ ընդարձակ առևտուր ունի։ Ամստերդամը յայտնի է իր գործարաններով, որտեղ ողորկում են ալմաստը։ Այդ քաղաքի մօտն է

գտնւում *Զանդամ*, որտեղ Պետրոս Մեծը սովորեց նաւաշինութիւնը։

Հարաւային—Հոլլանդիա, որ երկրի ամենախիտ ազգաբնակութիւն ունեցող նահանգն է։ Գլխաւոր քաղաքն է *Հաագա*, որ տէրութեան մայրաքաղաքն ու թագաւորի աթոռանիստն է։ *Լայդէն* և *Ռոթթէրդամ*, որքան առևտրական նշանաւոր քաղաքներ են։ Առաջինը յայտնի է իր համալսարանով և ամբողջ երկրի մտաւոր կենտրոնն է։

Ուտրեխտ—համանուն գլխաւոր քաղաքով, որտեղ ծաղկած են առևտուրը և արհեստները։

Հոլլանդիային պատկանում են հետևեալ գաղութները.

Ասիայում—Զոնդական և *Մոլուկեան* կղզիները, բացառութեամբ *Բորնէօ* կղզու հիւսիսային մասի։

Ամերիկայում — *Գվիանա* կղզու մի մասը և *Անթիլեան* կղզիներից մի քանիսը։

Աւստրալիայում—Նոր-Գվինէա կղզու արևմտեան մասը։

Լիւքսեմբուրգի մեծ հերցոգութիւնը գտնւում է Բելգիայի հարաւ-արևելեան կողմում և ներկայացնում է մի անտառաշատ երկիր, որի մօտ 225,000 աշխատասէր բնակիչները պարապում են հողագործութեամբ և հանքագործութեամբ (երկաթ)։ Գլխաւոր քաղաքն է *Լիւքսեմբուրգ*։

ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Բելգիայի թագաւորութիւնը գտնւում է Հոլլանդիայի հարաւային կողմում, Գերմանական ծովի ափին։ Նրա սահմանները կազմում են Հոլլանդիան, Պրուսիան, Լիւքսեմբուրգը, Գերմանական կամ Հիւսիսային ծովը և Ֆրանսիան։ Ամբողջ երկրի տարածութիւնն է 500 քառ. մղոն, որի վրայ ապրում են մօտ 7 միլիոն բնակիչ։

Ըստ իր մակերևոյթի կազմութեան, Բելգիան բաժանւում է երկու միմեանցից տարբեր մասերի՝ հիւսիս-արևմըտեան ցածր և հարաւ-արևելեան բարձր կամ լեռնոտ Բելգիա։

Բելգիայի առաջին մասի կլիման ընդհանրապէս բարեխառն և ծովային է։ Այդ մասի հողը օրինակելի կերպով մշակւած է, սակայն չնայելով այդ հանգամանքին հողագործութեան արդիւքները բաւականութիւն չեն տալիս ամբողջ երկրի ազգաբնակութեան, որովհետև վերջինս շատ խիտ է։

Բելգիայի հարաւ-արևելեան բարձր մասը ընդհանրապէս լեռնոտ է, որը հարուստ է երկաթի և քարածխի հանքերով։ Դրա համար Բելգիայի արդիւնագործութիւնը շատ զարգացած է (մանաւանդ մետաղեայ ապրանքների ինդուստրիան) և այդ երկիրը համարւում է աշխարհիս՝ արդիւնագործութեամբ նշանաւոր երկիրներից մէկը. երկրի արդիւնագործութեան զարգացմանը շատ է նպաստում նաև երկաթուղիների այն խիտ ցանցը, որ ծածկում է երկրի գրեթէ ամբողջ մակերևոյթը։ Բելգիան ներմուծում է հացահատիկներ, ալիւր, փայտ և այլն, իսկ արտահանում է դէպի ուրիշ երկիրներ գլխաւորապէս զանազան մեքենաներ, քարածուխ և երկաթէ ու պողպատէ ապրանքներ։

Բելգիան իր ազգաբնակութեան խտութեան կողմից Եւրոպայի առաջին երկիրն է (224 հոգի մի քառ. կիլոմ. վրայ)։ Այդ ազգաբնակութիւնը բաղկացած է *ռոմանական* ցեղին պատկանող *վալլոններից* և գերմանական ցեղին պատկանող *Փլամանդցիներից*։ Վալլոնները կազմում են երկրի ամբողջ ազգաբնակութեան $^2/_5$ մասը և լեզուով ցեղակից են ֆրանսիացիներին, իսկ ֆլամանդցիները՝ $^3/_5$ մասը։ Բելգիայի տիրապետող լեզուն ֆրանսերէնն է, իսկ դաւանութիւնը կաթոլիկականը։

Ժողովրդի տարրական կրթութիւնը այնքան էլ նախանձելի վիճակի մէջ չէ գտնւում։ Պան ամեն կարգի դպրոցներ

և 4 համալսարան, որոնցից 2-ը տէրութեան հաշւով են պահպանւում, իսկ 2-ը մասնաւոր նպաստներով։

Բելգիան նախանձելի կերպով մշակւած երկիրներից մէկն է ամբողջ աշխարհումս։ Նրա բնակիչները պարապում են հողագործութեամբ, առևտրով, անասնապահութեամբ, արդիւնագործութեամբ և հանքագործութեամբ։ Բելգիան հարուստ է քարածխի և երկաթի հանքերով, որոնք շատ են նպաստում նրա արդիւնագործութեան զարգացմանը։ Իբրև արդիւնագործական երկիր Բելգիան մրցում է այդ տեսակէտից Եւրոպայի առաջնակարգ երկիրների հետ։

Շատ զարգացած է Բելգիայում նաև առևտուրը երկրի աշխարհագրական դիրքի, զարգացած արդիւնագործութեան և ճանապարհների կանոնաւոր հաղորդակցութեան շնորհիւ։ Բելգիան սահմանադրական միապետութիւն է։ Երկրի թագաւորը համարւում է նաև *Կոնգոյի* տէրութեան թագաւորը։

Բելգիայի նահանգներից և քաղաքներից նշանաւոր են.

Բրաբանտ—գլխաւոր քաղաքն է *Բրիւսէլ*, ունի 570,000 բնակիչ, ազատ համալսարան և տէրութեան մայրաքաղաքը ու թագաւորի ամառանիստն է։ Այդ քաղաքը երկրի մտաւոր և առևտրական կենտրոնն է։ Երկրորդ քաղաքն է *Լուվէն*, որ յայտնի է իր համալսարանով։

Անտվերպէն—համանուն գլխաւոր քաղաքով, որ գտնւում է Շելդա գետի ափին։ Սա առևտրական նշանաւոր նաւահանգիստ և քաղաք է, որ ունի մօտ 280,000 բնակիչ։

Լիմբուրգ—որ յայտնի է իր աշխարհահռչակ պանրով (ոչխարի կաթից)։

Լիւտիխ—համանուն գլխաւոր քաղաքով, որ յայտնի է իր գործարաններով և համալսարանով։

Արևելեան Փլանդրիա—գլխաւոր քաղաքն է *Գենտ*. ունի համալսարան։

Արևմտեան Փլանդրիա—գլխաւոր քաղաքն է *Բրիւգէ*. Նշանաւոր է նաև *Օստենտէ* իր ծովային լողարաններով։

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ֆրանսիան, որի տարածութիւնը մօտ 9500 քառ. մղոն է, բռնում է Միջին Եւրոպայի արևմտեան մասը։ Նրա սահմանները կազմում են Ատլանտեան ովկիանոսը, Միջերկրական ծովը, Իսպանիան, Իտալիան, Շվէյցարիան, Գերմանիան և Բելգիան։

Գերմանիայի նման Ֆրանսիան էլ իր մակերևոյթի կազմութեամբ բաժանւում է երեք մասերի. Ալպեր, Ֆրանսիական լեռնոտ երկիր և Ֆրանսիական հարթութիւն։ Շրջապատող ովկիանոսով և ծովով Ֆրանսիայի ափերը շատ քիչ են խորտուբոր, դրա համար էլ նա աղքատ է թերակղզիներով, նաւահանգիստներով, ծովերով, կղզիներով և այլն. թերակղզիներից նշանաւոր են միայն Բրետայն, Նորմանդիա և Պրովանսի թերակղզիները։ Ֆրանսիան աւելի ցամաքային, քան ծովային պետութիւն է։

Սակայն աւելի նպատակայարմար է Ֆրանսիան ըստ իր մակերևոյթի կազմութեան բաժանել հարաւ-արևելեան *բարձր* և հիւսիս-արևմտեան *ցածր* մասերի։ Ֆրանսիայի առաջին մասի մէջ են մտնում Ալպեան, Պիրինեան և Վոգէզի լեռները և Ֆրանսիական բարձրաւանդակը։

Ալպեան լեռները տարածւում են Պո և Ռոնա գետերի մէջ և չեն թողնում դրանց իրար հետ խառնուելու։ Ալպերի և Ֆրանսիական բարձրաւանդակի մէջ գտնւում է Ռոնեան ցածր հարթութիւնը, որ ամբողջապէս ոռոգւում է Ռոնա համանուն գետով. Ֆրանսիական բարձրաւանդակը արևմտեան կողմից աստիճանաբար ցածրանում և միանում է Ֆրանսիական հարթու-

թեան հետ, որ կազմում է ամբողջ արևմտեան Ֆրանսիան։ Իւրան տարածւում է Շվէյցարիայի, իսկ Վոգեզի լեռները Գերմանիայի սահմանագծով։ Վերջին լեռներից է սկիզբն առնում Հռենոսի մէջ թափւող Մոզել գետը. Պիրինեան լեռներով Ֆրանսիան բաժանւում է Իսպանիայից։ Այդ լեռների միայ հիւսիսային փեշերն են պատկանում Ֆրանսիային և այնտեղից է սկիզբն առնում Գարոննա գետը։

Հիւսիս-արևմտեան Ֆրանսիան ներկայացնում է մի ցածր հարթութիւն, որ իբրև Գերմանական հարթութեան շարունակութիւնը տարածւում է մինչև Պիրինեան լեռնաշղթան։ Այդ հարթութիւնը ոռոգում է Շելդա, Սենա, Լուարա և Գարոննա գետերով։ Ֆրանսիայի գետերը հոսում են զանազան ուղղութեամբ և միացած են միմեանց հետ ջրանցքներով, որոնք ընակիչների կանոնաւոր հաղորդակցութեանը շատ են նպաստում։

Ֆրանսիան Միջին Եւրոպայի ամենատաք երկիրն է, որովհետև շատ մօտ է Գոլֆշտրոմ կոչած տաք հոսանքին։

Հիւսիս-արևմտեան Ֆրանսիայի կլիման ընդհանրապէս բարեխառն և ծովային է, որովհետև Ատլանտեան ովկիանոսի և հարաւ-արևմտեան հողմերի ազդեցութեան տակ է գտնւում, այն ինչ հարաւ-արևելեան Ֆրանսիան ունի աւելի ցուրտ և ցամաքային կլիմա։

Ֆրանսիայի ազգաբնակութիւնը, որի թիւը հասնում է 38 միլիոնի, գլխաւորապէս բաղկացած է ֆրանսիացիներից, որոնք կազմում են գալլերի, հռոմէացիների և ֆրանկների խառնուրդը։ Ֆրանսիացիները խօսում են ֆրանսերէն լեզուով, որ շատ նմանութիւն ունի լատինական լեզուի հետ. բացի տիրող տարրից Ֆրանսիայում ապրում են նաև սակաւաթիւ *բրետոններ* (Բրետայն թերակղզու վրայ) և *բասկեր* (Պիրինեան լեռների վրայ)։ Երկրի տիրապետող դաւանութիւնը

կաթոլիկութիւնն է։ Ֆրանսիայի ազգաբնակութիւնը շատ դանդաղ կերպով է աճում, որ մեծ հոգս է պատճառում տէրութեան։

Ժողովրդական տարրական կրթութեան կողմից Ֆրանսիան Եւրոպայի գերմանական երկիրներից յետամնաց է. սակայն նա ունի մի շարք բարձրագոյն մասնագիտական դպրոցներ և համալսարաններ, որոնք բաւական մեծ հռչակ ունին ամբողջ Եւրոպայում։ Ֆրանսիացիները ընդհանրապէս մարդկութեանը մեծ ծառայութիւններ են մատուցել գիտութիւնների և գեղարուեստների շրջանում։

Ֆրանսիայի բնակիչները պարապում են այգեգործութեամբ, անասնապահութեամբ, հողագործութեամբ, արդիւնագործութեամբ և վաճառականութեամբ։

Ֆրանսիացիները այնքան ուշադրութիւն չեն դարձնում հացաբոյսերի, որքան արժէքաւոր. օր. գործարանական բոյսերի մշակութեան վրայ։ Պղպատու և գործարանական բոյսերի աճեցողութեան շատ է նպաստում Ֆրանսիայի մեղմ կլիման։ Դրա համար էլ այդ երկիրը ամենայն իրաւամբ կոչւում է Եւրոպայի պարտէզը։ Եւրոպայի ոչ մի երկրում այնքան խաղող չէ բուսնում, որքան Ֆրանսիայում։ Պղպատու ծառերից յայտնի են խնձորենին, տանձենին, կեռասենին, սալորենին, դեղձենին, ընկուզենին, իսկ գործարանական բոյսերից վուշ, կանեփ, շաքարեղէգն և թութ։ Հացաբոյսերից գլխաւորապէս մշակում է ցորեն, որ գրեթէ բաւականաւէ տալիս երկրի ազգաբնակութեան։

Անասնապահութիւնը այնքան էլ զարգացած չէ. դրա գլխաւոր պատճառը արօտատեղերի քչութիւնն է։ Անասուններից յայտնի են ֆրանսիական ձիերը ու ոչխարները։

Արդիւնագործութիւնը բաւական զարգացած է Ֆրանսիայում, որին նպաստում է երկրի բարձխի և երկաթի հարստութիւնը։ Ֆրանսիական գործարանների ապրանքները աչքի են ընկնում իրանց ճաշակով, նրբութեամբ և չքեղութեամբ։ Յայտնի են մանաւանդ Լիլ, Պարիզ և Լիոն քաղաքների գործարանները։ Ֆրանսիայում շատ զարգացած է նաև շերամապահութիւնը և մետաքսագործութիւնը։

Ֆրանսիայի վաճառականութեան զարգացմանը շատ նպաստում է երկրի աշխարհագրական նախանձելի դրութիւնը։ Նա գտնւում է Ատլանտեան օվկիանոսի և Միջերկրական ծովի մէջ, որոնք ունին շատ յարմար նաւահանգիստներ, բացի դրանից Ֆրանսիայի գետերը միացած են իրար հետ ջրանցքներով, որոնք բնակիչների հաղորդակցութեան և առևտրի զարգացմանը զգալի կերպով նպաստում են։ Այդ տեսակէտից շատ է օգնում նաև երկրի երկաթուղիների խիտ ցանցը։ Ֆրանսիան արտահանում է բրդէ և մետաքսէ գործուածքներ, գինի, կաշուէ և Պարիզեան ապրանքներ և ներմուծում է բուրդ, մետաքս, փայտ, բամբակ և այլն։ Ֆրանսիական առևտրական նաւատորմը աշխարհումս հինգերորդ տեղն է բռնում։

Ֆրանսիան հանրապետական տէրութիւն է, որի օրէնսդրական իշխանութիւնը պատկանում է ազգային ժողովին, իսկ գործադիր իշխանութիւնը հանրապետութեան նախագահին, որ ընտրւում է 7 տարի ժամանակով. աշխարհիս և ոչ մի երկիր կարճ ժամանակի ընթացքում. (այսինքն 1789 թուից ի վեր) իր կառավարութեան ձևը և երկրի սահմանադրութիւնը այնքան շատ չէ փոխել, որքան Ֆրանսիան։ 1870 թուին Ֆրանսիան երրորդ անգամ հանրապետութիւն դարձաւ, իսկ 1790 թուից մինչև այժմ նա բաժանւում է 86 մասերի, որոնք կոչւում են դեպարտամենտներ։

Ֆրանսիայի նահանգներից և քաղաքներից նշանաւոր են։

Ռը-դը-Փրանս — գլխաւոր քաղաքն է *Պարիզ* ($2^1/_2$ միլիոն բնակիչ), որ գտնւում է Սենա գետի ափին։ Պարիզը ամբողջ Ֆրանսիայի մայրաքաղաքը, նախագահի ամրոցանիստը և երկրի մտաւոր ու առևտրական կենտրոնն է։ Այս քաղաքը ոչ միայն Ֆրանսիայի, այլ և ամբողջ Եւրոպայի

առևտրական և գործարանական նշանաւոր քաղաքներից մէկն է։ Պարիզը ցամաքային Եւրոպայի ամենաբազմամարդ քաղաքն է, որի հին համալսարանը, ճեմարանը, նշանաւոր գրադարանները և գիտութիւնների ու գեղարուեստի գանազան ճիւղերին պատկանող յիշատակարանները մեծ հրաշակ են վայելում։ Պարիզը որ պատմական տեսակէտից Եւրոպայի նշանաւոր քաղաքներից մէկն է, բաղկացած է մի քանի մասերից. Սենա գետի երկու կղզիների վրայ գտնուում է հին քաղաքը, որ կոչուում է Cite և նշանաւոր է Նոտր-դամ գոթական ճարտարապետութեամբ եկեղեցիով. գետի աջ ափին գտնուում է իսկական քաղաքը։ Յետոյ աջի է ընկնում մայրաքաղաքի այն մասը, որտեղ գտնուում է Ծիւլիւրիի պալատը իր փառաւոր պարտէզներով։ Դրա մօտ է գրտնուում և Լուվրը, որտեղ առաջներում ապրում էին Ֆրանսիական թագաւորները և որը այժմ գիտութիւններին և գեղարուեստներին վերաբերող ժողովածուների թանգարան է։ Գետի ձախ ափումն են գտնուում համալսարանը, գանազան բարձրագոյն դպրոցներ և Լատինական թաղը։ Պարիզը շատ յայտնի է նաև իբրև բերդաքաղաք։ Մայրաքաղաքի մօտն է գտնուում և Վերսալը՝ Լուդովիկոս ԺԴ.-ի պալատը, որտեղ այժմ ամփոփուած են Ֆրանսիական պատմութեան վերաբերող նշանաւոր յիշատակարանները։ Մայրաքաղաքի և Վերսալի մէջն է գտնուում Սեվը կոչուած տեղը, որ յայտնի է իր յախճապակէ գործարանով։

Նորմանդիա—գլխաւոր քաղաքն է Ռուան, որ Պարիզի նաւահանգիստն է։ Հավր, որ Ֆրանսիայի երկրորդ նաւահանգիստն է։ Շերբուրգ պատերազմական նաւահանգիստ է՝ որտեղ կանգնում է պատերազմական նաւատորմը։

Պիկարդիա—գլխաւոր քաղաքն է Ամիեն, որ յայտնի է մետաքսէ գործարաններով։

Փլանդրիա—գլխաւոր քաղաքներն են Լիլ և Դիւնկիրքէն։ Առաջինը յայտնի է իբրև ամրոց, իսկ երկրորդը՝ նաւահանգիստ։

Արտուա—գլխաւոր քաղաքն է Կալէ, որ ծովային ամրոց է։

Շամպայն, որ յայտնի է իր աշխարհահռչակ գինիներով։ գլխաւոր քաղաքներն են Սնղան, որ յայտնի է իբրև ամրոց, Շալոն (Մարնի վրայ) և Ռէյմս։ Վերջին երկու քաղաքները շամպանիա գինու ընդարձակ առևտուր ունին։

Օրլեանէ—համանուն գլխաւոր քաղաքով, որ գտնուում Լուարա գետի և այն ջրանցքի ափին, որ միացնում է Սենա և Լուարա գետերը միմեանց հետ։

Բրետայն—գլխաւոր քաղաքն է Բրեստ, որ ամուր նաւահանգիստ և առևտրական նշանաւոր քաղաք է։ Երկրորդ քաղաքն է Նանտ, որը յայտնի է նաւաշինութեան վերաբերեալ իրերի գործարաններով։

Գիեն և Գասկոն Բիարնի հետ որոնց գլխաւոր քաղաքներն են. Բորդո, որ ծովային առևտրի համար երրորդ քաղաքն է. առևտուր է անում գլխաւորապէս համանուն գինիով և ունի մօտ 270,000 բնակիչ։ Բայոնա, առևտուր է անում Իսպանիայի հետ։ Բիարրից, յայտնի է իր ծովային լոգարաններով և մարուր ու մեղմ օդով։ Բոքֆոր, նշանաւոր է համանուն պանրի առևտրով։

Լանգեդոկ—նշանաւոր քաղաքն է Տուլուզա, որ առևտրական նշանաւոր կենտրոն է։ Մոնպէլիէ, նշանաւոր է իր գործարաններով։

Լոթարինգիա—գլխաւոր քաղաքներն են Տուլ, Վերդիւն և Նանսի։ Առաջին երկուսը նշանաւոր բերդաքաղաքներ են։

Բուրգունդիա—գլխաւոր քաղաքն է Դիժոն, որ գտնուում է Սոնա և Սենա գետերը միացնող ջրանցքի ափին։ Առևտուր է անում գինիով և մանանեխով։

Օվերն—գլխաւոր քաղաքն է Կլերմոն, որ երկաթուղիով

միացած է Ֆրանսիայի մի քանի խոշոր քաղաքների հետ։ Այս նահանգի բնակիչները անցեալում յայտնի են եղել իբրև պատերազմասէր բնակիչներ, իսկ ներկայումս հռչակած են իրանց հաւատարմութեամբ ու աշխատասիրութեամբ։

Ֆրանշ-Կոնտէ—գլխաւոր քաղաքներն են *Բեզանսոն* և *Բելֆոր*։ Առաջին քաղաքը նշանաւոր է ժամացոյցի գործարաններով, իսկ երկրորդը, իբրև ամրոց։

Դոֆինէ և *Լիոնէ*—գլխաւոր քաղաքներն են *Գրենոբլ*, *Լիոն* և *Էտիեն*։ Առաջինը յայտնի է իբրև բերդաքաղաք և ամրոց, երկրորդը իբրև Ֆրանսիայի առևտրական և արդիւնաբերական երկրորդ գլխաւոր կենտրոնը, որ ունի մօտ 470,000 բնակիչ, իսկ երրորդը՝ բարձրի առևտրով։

Սավոյա, որ Եւրոպայի ամենաբարձր Ալպիական երկիրն է և ունի դաժան ու աղքատ բնութիւն։ Գլխաւոր քաղաքն է *Շամբէրի*։

Պրովանս, *Օրանժ* և *Նիցցա*—գլխաւոր քաղաքներն են, *Մարսել*, որ Եւրոպայի ծովափեայ առևտրական նշանաւոր քաղաքներից մէկն, իսկ Ֆրանսիայում առաջինը։ Նշանաւոր է օջառի, անուշահոտ իւղերի, շաքարի և կաշիների առևտրով։ Մարսէլը Ֆրանսիայի երրորդ բազմամարդ քաղաքն է (450,000 բնակ)., որտեղ կան և բաւականաչափ հայկական առևտրական տներ։ *Տուլոն*, որ Ֆրանսիայի ամենամեծ պատերազմական նաւահանգիստն է Միջերկրական ծովի ափին։ *Նիցցա* քաղաքը յայտնի է իր մեղմ և առողջարար կլիմայով և ամեն տարի ահագին բանակութեամբ թոռախտաւորներ է գրաւում դէպի իրեն։

Ֆրանսիայի հանրապետութեան քաղաքական գերիշխանութեան տակ է գտնւում և *Մոնակոյի* անկախ և փոքրիկ իշխանութիւնը, որի գլխաւոր քաղաքն է *Մոնտէ-Կարլո*։ Վերջինս յայտնի է իր աշխարհահռչակ խաղարանով։

Ֆրանսիայի հանրապետութեան է պատկանում և *Կորսիկա* կղզին՝ Նապոլիոնի I-ի հայրենիքը, որի գլխաւոր քաղաքն է *Այաչիո*, որ նշանաւոր նաւահանգիստ է և Մարսէլից 17 ժամուայ ճանապարհի հեռաւորութեան վրայ է գտնւում։

Եւրոպայից դուրս Ֆրանսիայի հանրապետութեան պատկանում են հետեւեալ երկիրները և գաղութները։

Աֆրիկայում—*Ալժիր*, *Գամբիայի* մի մասը, *Թունիս*, *Մադակասգար* և *Բուրբոն* կղզիները, *Տիմբուկտու* և *Սուդանի* ու *Վերին*—*Գվինէայի* մի մասը։

Ասիայում—Արևելեան Հնդկաստանի *Պոնտիշէրի* քաղաքը և Հնդկա-Չինի *Սայգոնը*։

Ամերիկայում—*Գվիանայի* մի մասը, *Նիւֆաունդլէնդի* մօտ մի քանի կղզիներ և *Մարտինիկ* ու *Գվադելուպ* կղզիները։

Աւստրալիայում—*Թայիդի*, *Նոր-Գալեդոնիա* և *Մարկիզեան* կղզիները։

Վերոյիշեալ բոլոր գաղութների ազգաբնակութեան ընդհանուր թիւը հասնում է մօտ 47 միլիոնի։

ՀԻՍԻՍ-ԱՐԵՄՏԵԱՆ ԵՎՐՈՊԱ

ԱՆԳԼԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Անգլիայի թագաւորութիւնը իր բոլոր գաղութներով կազմում է աշխարհիս ամենամեծ պետութիւնը։ Այդ թագաւորութիւնը Եւրոպայում բաղկացած է Մեծ Բրիտանիա, Իրլանդիա և մի շարք մեծ ու փոքր կղզիներից, որոնք գտնւում են դրանց չորս կողմերում։ Վերջին կղզիներից նշանաւոր են Շոտլանդեան, Օրկաղեան, Հեբրիդեան և Նորմանդեան խմբերը։ Այդ թագաւորութեան ամբողջ տարածութիւնն է մօտ 6000 քառ. մղոն, որի վրայ ապրում են մօտ 39 միլիոն բնակիչ։

Անգլիան իրեն պատկանող բոլոր կղզիներով շրջապատւած է Ատլանտեան ովկիանոսի մասերով և հետևապէս ներկայացնում է Եւրոպայի միակ կղզիական պետութիւնը։

Շրջապատող ովկիանոսը չորս կողմից կտրատել է Անգլիայի ափերը և առաջացրել է մի շարք նշանաւոր ծովեր, որոնք հարուստ են յայտնի նաւահանգիստներով։ Անգլիայի նոյն իսկ կենտրոնական մասերը բաւական մօտ են գտնւում շրջապատող ովկիանոսից։

Սակայն անգլիական թագաւորութեան գլխաւոր մասերը կազմում են Մեծ-Բրիտանիա և Իրլանդիա բաւական խոշոր կղզիները, որոնք միմեանցից բաժանւում են Իրլանդական ծո-

վով։ Մեծ-Բրիտանիայի հարաւային մասը կազմում է իսկական Անգլիան, իսկ հիւսիսայինը՝ Շոտլանդիա կամ Սկոտիա երկիրը։

Ամենից շատ կտրատւած է և ամենից լաւ նաւահանգիստներ ունի Մեծ-Բրիտանիայի արևմտեան ափը։ Այդպէս է նաև Իրլանդիա կղզին, որի արևելեան ափը անհամեմատ աւելի քիչ է կտրատւած և քիչ էլ յարմար նաւահանգիստներ ունի։ Այդ հանգամանքը մի լաւ ապացոյց է այն բանի համար, որ երկու կղզիներն էլ հաւանօրէն երբեմն Եւրոպական մայր ցամաքի հետ միացած են եղել և յետոյ ծովային ալիքների ազդեցութեան ներքոյ ժամանակի ընթացքում կտրւել են մայր ցամաքից և կղզիներ են դառել։ Մեծ-Բրիտանիայի երկարութիւնը մօտ 120 մղոն է, իսկ լայնութիւնը դէպի հիւսիս աստիճանաբար փոքրանում է։

Մեծ-Բրիտանիան իր մակերևոյթի կազմութեամբ բաժանւում է հիւսիս-արևմտեան բարձր և հարաւ-արևելեան ցածր մասերի։ Կղզու բոլոր լեռնաշղթաները տարածւում են նրա հիւսիսային արևմտեան մասերում, որոնցից սկիզբն են առնում երկրի քիչ շատ աչքի ընկնող գետերը. օր. Թայմզը և ուրիշները։ Այդ լեռներից նշանաւոր են Կորնուէլսի, Ուէլսի և Պիպինեան սարերը, որոնց արանքներում գտնւում են բաւական ընդարձակ հովիտներ։ Շոտլանդիայի մակերևոյթը ամբողջապէս լեռնոտ է։ Ինչվերաբերում է Իրլանդիային, նա ընդհակառակը, շատ լեռնոտ չէ։ Եղած լեռները տարածւում են նրա ծայրերով, դրա համար էլ Իրլանդիայի կենտրոնական մասը անհամեմատ աւելի ցածր է։

Վերոյիշեալ երկու կղզիների կլիման բոլորովին ծովային է. նրանք ունին բարեխառն ձմեռ և ոչ այնքան տաք ամառ։ Այդ բանին շատ նպաստում է հարաւ-արևմտեան տաք հոսանքների և Գոլֆշտրոմի ազդեցութիւնը։ Երկու կղզիներում էլ առատութեամբ անձրևներ են թափւում, մանաւանդ Իր-

լանդիայում։ Կլիմայի այդօրինակ մեղմութիւնն է գլխաւոր պատճառը, որ Անգլիայում աճում են նաև Միջերկրական ափերի մօտ գտնուող երկիրների մի քանի բոյսերը. օր. խաղող, դափնի, օլեանդր և այլն։ Թէ Անգլիայի և թէ Իրլանդիայի մարգագետինները գրեթէ ամբողջ տարին կանաչով են ծածկուած, որին բաւական նպաստում է երկրի բաւարար ոռոգումը։

Անգլիայի գետերը կարճ, դանդաղահոս, ջրառատ և նաւարկելի են։ Մեծ-Բրիտանիայի գետերից աչքի են ընկնում Թայմզ, Հիւսիսային և Հարաւային Ուզ, Մերսի և այլն, իսկ Իրլանդիայում յայտնի է միայն Շանոն։ Այդ գետերի մեծ մասը իրար հետ միացած են ջրանցքներով։

Անգլիայի ազգաբնակութիւնը գլխաւորապէս բաղկացած գերմանական ցեղին պատկանող անգլիացիներից։ Բացի անգլիացիներից Շոտլանդիայի հիւսիսային կողմերում և Իրլանդիայիմի քանի մասերում-մինչև այսօր էլ ապրում են հին կելտերի մնացորդները։ Ազգաբնակութեան խտութեան կողմից աչքի է ընկնում իսկական Անգլիան, որտեղ մէկ քառ. կիլոմետրի վրայ ապրում են մօտ 200 հոգի։ Տիրապետող եկեղեցին անգլիականն է, որ կոչւում է նաև թագաւորական կամ եպիսկոպոսական եկեղեցի։ Շոտլանդիան ունի իր առանձին եկեղեցին, որ կոչւում է պրեսբիտերիան եկեղեցի, իսկ Իրլանդիայի ազգաբնակութեան $^3/_4$ մասը պատկանում է կաթոլիկ դաւանութեան։ Բացի վերոյիշեալ եկեղեցիներից և դաւանութիւնից Անգլիայում գոյութիւն ունին կրօնական մի քանի աղանդներ, որոնք կրօնական ազատութիւն են վայելում։

Ժողովրդական տարրական կրթութիւնը Անգլիական թագաւորութեան բոլոր մասերում հաւասարաչափ կերպով չէ զարգացած։ Այդ տեսակէտից շատ յետամնաց վիճակի մէջ է գտնւում Իրլանդիան, որի ազգաբնակութեան ընդհանուր կրթութեան համար տէրութիւնը ցանկալի կերպով հոգ չէ տանում։ Սակայն չնայելով այդ բացասական հանգամանքին, Անգլիայի գործնական ընակիչները կեանքի մէջ կարողանում են հարթել իրանց ընդհանուր կրթութեան մակերեսոյթը։ Անգլիան յայտնի է իր միջնակարգ և բարձրագոյն մասնագիտական դպրոցներով։ Կան 12 համալսարաններ, որոնցից շատերը մասնագիտական բարձր դպրոցներ են։ Ժողովրդական ընդհանուր և պարտադիր կրթութիւնը լաւ է դրուած Շոտլանդիայում։

Անգլիայի ազգաբնակութիւնը պարապում է հողագործութեամբ, անասնապահութեամբ, արդիւնագործութեամբ, հանրագործութեամբ, ծովագնացութեամբ, ձկնորսութեամբ և առևտրով։ Հողագործութիւնը բաւական զարգացած է, որովհետև հողը մշակւում է վերին աստիճանի կատարելագործուած ձևով։ Սակայն, որովհետև մշակելի հողի տարածութիւնը ազգաբնակութեան խտութեան պատճառով փոքր է Անգլիայում, դրա համար տարեկան ահագին քանակութեամբ հացահատիկներ են ներմուծւում օտար երկիրներից։ Արդիւնագործութիւնը շատ զարգացած է երկրի բնական հարստութիւնների շնորհիւ, որոնք բանական կերպով մշակւում են անգլիական բազմազան գործարաններում։ Հարուստ և զարգացած արդիւնագործութեան շնորհիւ Անգլիան ունի արտաքին ընդարձակ առևտուր և այն էլ գլխաւորապէս իր բազմաթիւ կօլոնիաների հետ։

Ահագին տարածութիւն են կազմում անգլիական արօտատեղիները, որոնք բաւական նպաստում են նաև անասնապահութեան զարգացմանը։ Անգլիացիները ոչ միայն մտածում են ընտանի կենդանիների բազմացնելու, այլ և նրանց օգտակար յատկութիւնները զարգացնելու մասին։ Շատ հրաշակաւոր են անգլիական ձիերը, եղները, խոզերը, ոչխարները և այլն։

Անգլիայի լեռները հարուստ են հանքերով և մետաղներով, որոնցից նշանաւոր են քարածուխ, երկաթ, պղինձ, կապար, արճիճ և այլն։ Աշխարհիս և ոչ մի երկիրը Անգլիայի չափ քարածուխ և երկաթ չէ տալիս։ Միայն վերջերս Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ-Նահանգները սկսել են իրանց երկաթի արդիւնագործութեամբ լուրջ կերպով մրցել անգլիացիների հետ։ Անգլիական գործարանների ապրանքները օտար երկիրների ապրանքների հետ մրցում են իրանց լաւ յատկութեամբ և էժանութեամբ։ Աչքի են ընկնում մանաւանդ անգլիական մահուդի, երկաթէ և պողպատէ ապրանքները։ Արտաքին ընդարձակ առևտրի կողմից Անգլիան աշխարհիս առաջին երկիրն է, որ գրեթէ մրցակից չունի։ Երկրի առևտրի զարգացմանը շատ են նպաստում բազմաթիւ գաղութները, երկրի զարգացած արդիւնագործութիւնը, ճանապարհների կանոնաւոր հաղորդակցութիւնը և այլն։ Անգլիական առևտրական նաւատորմը աշխարհիս ամենաառաջինն է։ Անգլիան արտահանում է բրդէ և բամբակեայ ապրանքներ, քարածուխ, երկաթ ու մեքենաներ և ներմուծում է հայցահատիկներ, փայտ, բուրդ, թէյ և այլն։

Անգլիան սահմանադրական պետութիւն է։ Թագաւորի իրաւունքները սահմանափակում է երկի պարլամենտը, որ բաղկացած է վերին և ստորին պալատներից։ Գործադիր իշխանութիւնը պատկանում է թագաւորին, իսկ օրէնսդրականը՝ պարլամենտին։ Վարչական տեսակէտից Անգլիայի թագաւորութիւնը բաժանւում է 117 գրաֆութիւնների։ Թագաւորութեան նահանգներից և քաղաքներից նշանաւոր են.

Ամբողջ թագաւորութեան մայրաքաղաքը և թագաւորի աթոռանիստն է Լօնդօն, Թայմզ գետի ափին, որ աշխարհիս ամենամեծ քաղաքն է (մօտ 4 միլիոն բնակ.) թէ իր ընդարձակութեամբ և թէ բազմամարդութեան կողմից։ Բացի դրանից նա

աշխարհիս առաջին առևտրական քաղաքն է, որի նաւահանգիստը տասնեակ հազարաւոր նաւեր են մտնում։ Լօնդօնը միևնոյն ժամանակ ամբողջ երկրի քաղաքական և մտաւոր կենդրոնն է, ունի երկու համալսարան և գիտական ու գեղարուեստական բազմաթիւ հաստատութիւններ։ Լօնդօնի արուարձաններից նշանաւոր են *Վինդզոր* (թագաւորների ամառանոցը), *Գրինիչի*—աստղաբաշխական հռչակաւոր դիտարանով, *Վուլիչ* և *Ջատամ*։

Քենտրբերի—անգլիական առաջին արքեպիսկոպոսի աթոռանիստը։ *Պորտսմուտ*-նշանաւոր նաւահանգիստ է, որ յայտնի է նաւաշինութեան վերաբերող իրերի գործարաններով։ *Սաութհեմբտոն*, առևտրական նշանաւոր նաւահանգիստ և կենտրոն է։ *Պլիմուտ* նշանաւոր նաւահանգիստներից մէկն է, որտեղ կանգնում է անգլիական պատերազմական նաւատորմի մի մասը։ *Բրիստոլ*-առևտրական մեծ քաղաք է, որ ունի մօտ 320,000 բնակիչ. *Օկսֆորտ* և *Քեմբրիջ*, որոնք յայտնի են իրանց համալսարաններով։ *Բերմինհամ*—յայտնի է դանակի, մկրատի, ասեղների և մեքենաների բազմաթիւ գործարաններով և ունի $^1/_2$ միլիոնի բնակիչ։ *Շեֆֆիլդ*, *Մանչեստր* և *Լիվերպուլ*, որոնք առևտրական և գործարանական նշանաւոր քաղաքներ են։ *Լիվերպուլը* իր բնակիչների թւով ամբողջ թագաւորութեան երրորդ քաղաքն է (535,000 բն.), իսկ *Մանչեստր* չորրորդ քաղաքը (545,000). *Նիուկէսլ*—քարածխի մեծ առևտուր ունի։

Ուէլս—գլխաւոր քաղաքներն են *Մերտիր*—*Տրիդֆիլ* և *Կարդիֆ*, որոնք երկաթի և քարածխի ընդարձակ առևտուր ունին։

Շոտլանդիայի գլխաւոր քաղաքն է *Էդինբուրգ*, սա Անգլիայի ամենագեղեցիկ քաղաքներից մէկն է, ունի նշանաւոր համալսարան, մօտ 300,000 բնակիչ և ընդարձակ առևտուր մի քանի երկիրների հետ։ Երկրորդ նշանաւոր քաղաքն

է Գլազգօ, որ իր բնակիչների թիւով (725,000) Անգլիայի թագաւորութեան երկրորդ քաղաքն է, զարգացած առևտրով և արդիւնագործութեամբ։

Իրլանդիա—գլխաւոր քաղաքն է Դուբլին, որ առևտրական և արդիւնաբերական նշանաւոր քաղաք է։ Երկրորդ քաղաքն է Բելֆաստ, նշանաւոր է մահուդի գործարաններով։

Անգլիան իր գաղութների մեծութեամբ և բազմութեամբ աշխարհիս առաջին տէրութիւնն է. նրան պատկանում է։

Եւրոպայում—Մալտա կղզին և Ջիբրալտարի ամրոցը Իսպանիայում։

Ասիայում—Աղէն Արաբիայում, Հնդկաստան Ցէյլօն կղզով, Հնդկաչինի արևմտեան մասը, Սինգապուր կղզին, Մալակկայի մի մասը, Հոնգկոնգ Չինաստանում և Կիպրոս կղզին։

Ամերիկայում—Կվեբէգ, Օնտարիо, Նոր-Բրաունշվայգ, Նոր-Շոտլանդիա, Հուդսօնի երկիր, Բրիտանական Կոլումբիա և Նիւֆաունդլէնդ, Բահամեան, Եամայկա և Փալկլանդեան կղզիները և Գվիանայի մի մասը։

Աստրիայում—Նոր-Հոլլանդիա, Վանդիմինի երկիր, Նոր-Զելանդիա, Փիջի և ուրիշ կղզիները։

Աֆրիկայում—Ս. Հելենան, Ս. Հելինէ, Մաւրիկիա, Ամիրանթեան, Սէյշէլեան և Սոկոտրա կղզիները. Կապի երկիր, Նատալի գաղութ, Գվինէի ծոցի ափերում մի քանի կալուածներ, Տրանսվալ ինքնավար երկիրը և այլն։

Անգլիական բոլոր գաղութների ազգաբնակութեան ընդհանուր թիւը հասնում է 370 միլիոնի։

ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Դանիայի թագաւորութիւնը բռնում է Իւթլանդիա թերակղզու հիւսիսային մասը և այն բոլոր կղզիները, որոնք

գտնւում են նրա և Սկանդինավիա թերակղզիների մէջ՝ Բալթիկ ծովում։ Այդ թագաւորութեան ամբողջ տարածութիւնն է 700 քառ. մղոն, որի վրայ ապրում են $2^1/_4$ միլիոն բնակիչ։ Դանիային պատկանող կղզիներից նշանաւոր են. Իսլանդիա, Զելանդիա, Փիոնիա, Լանգելանդ, Լալանդ, Փալստէր, Բորնհոլմ, Մէն և այլն։

Բալթիկ ծովը բաւականաչափ կտրատել է դանիական արշիպելագին պատկանող կղզիների ափերը և կազմել մի շարք յարմար նաւահանգիստներ, որոնցից ամենանշանաւորը երկրի մայրաքաղաքի նաւահանգիստն է։ Վերոյիշեալ բոլոր կղզիների մակերևոյթի կազմութիւնը գրեթէ միատեսակ հարթ է. մասնաւորապէս Իւթլանդիա թերակղզին կազմում է հիւսիսային Գերմանիայի ցածր հարթութեան շարունակութիւնը։ Դանիական Արշիպելագին պատկանող կղզիները, բացառութեամբ Բորնհոլմի, շատ քիչ են բարձր շրջապատող ծովի մակերևոյթից։

Դանիայի ոռոգումը բաւարար է. երկիրը զուրկ է խոշոր գետերից, եղածները կարճ և ոչ այնքան էլ ջրառատ են։ Կլիման ծովային է, որովհետև երկրի մակերևոյթը բաւական ցածր է և այն էլ շրջապատուած ծովերով։

Դանիայի թագաւորութեան ազգաբնակութիւնը բաղկացած է դանիացիներից, որոնք պատկանում են Գերմանական ցեղին և բողոքական դաւանութեան։ Ժողովրդական տարրական կրթութիւնը պարտադիր է և դրա համար էլ երկրի գրեթէ բոլոր բնակիչներն էլ գրել ու կարդալ գիտեն։ Դանիան շատ յայտնի է իր ժողովրդական կամ գիւղական համալսարաններով, որոնց շնորհիւ գիտութեան զանազան ճիւղերը ժողովրդականացւում են երկրի ազգաբնակութեան ըստորին խաւերին համար։ Նրա պետական միակ համալսարանը գտնւում է Կոպենհագէն մայրաքաղաքում։

Դանիայի բնակիչները պարապում են հողագործութեամբ,

ձկնորսութեամբ և վաճառականութեամբ։ Հողագործութեան համար Դանիայի տարածութեան մեծ մասը շատ նպաստաւոր հող ունի, որ առատ հացահատիկներ է տալիս. հողագործութիւնը շատ զարգացած է մանաւանդ Իւթլանդիա թերակղզու արևելեան մասում և արշիպելագի կղզիների մեծ մասի վրայ։ Երկրի արդիւնագործութիւնը քարածխի և երկաթի բացակայութեան շնորհիւ անախանձելի վիճակի մէջ է գտնւում, այն ինչ վաճառականութիւնը շատ զարգացած է, որովհետև Դանիան իր աշխարհագրական նպաստաւոր դիրքի շնորհիւ հեշտութեամբ առևտրական հաղորդակցութեան մէջ է մտնում հարևան երկիրների և ուրիշ մայր ցամաքների հետ։

Դանիան սահմանադրական միապետութիւն է, թագաւորի իրաւունքները սահմանափակում է *ընդհանրաժողովը*։

Տէրութեան մայրաքաղաքն և ամենամեծն է *Կոպենհագէն*, որ միևնոյն ժամանակ ամբողջ երկրի առևտրական, արդիւնաբերական և հասարակական կենտրոնն է։ Կոպէնհագէնը ունի մօտ 450,000 բնակիչ և բաւական յայտնի համալսարան։

Դանիային Եւրոպայում պատկանում է *Փար-Էր* և *Իսլանդիա* կղզիներր։ Առաջինը գրեթէ մի անհայտ կղզի է Անգլիայի հիւսիս-արևմտեան կողմում, իսկ երկրորդը երեք անգամ աւելի մեծ է Դանիայից և ունի մօտ 75,000 բնակիչ։ Իսլանդիա կղզին յայտնի է իր գործող հրաբուղխներով և տաք աղբիւրներով, որոնք կոչւում են *հայզէրներ*։ Հրաբուղխներից նշանաւոր են *Հեկլա* և *Գրաբլա*, իսկ տաք աղբիւրներից՝ *Մեծ-Հայզէրը*։ Կղզու բնակիչները մեծ մասամբ զբաղւում են անասնապահութեամբ և ձկնորսութեամբ. գլխաւոր քաղաքն է *Ռէյկիավիկ*։

Դանիային Ամերիկայում պատկանում է *Գրենլանդիա* կղզին։

ՍԿԱՆԴԻՆԱՎԻԱ

Եւրոպայի ամենամեծ թերակղզի Սկանդինավիայի տարածութիւնն է 14,000 քառ. մղոն, որի վրայ ապրում են 7 միլիոն բնակիչ։ Այդ թերակղզին երեք կողմից շրջապատած է *Հիւսիսային* ցուրտ կամ *Սառուցեալ* օվկիանոսով Գերմանական և *Բալթիկ* ծովերով ու նրանց մասերով, իսկ չորրորդ կողմից միացած է Ռուսաստանի հետ. թեթերակղզու ամբողջ արևմտեան մասում տարածւած է Սկանդինավիական լեռնաշղթան։ Սկանդինավիայի հիւսիսային և արևմտեան ափերը շրջապատող ջրերով չափազանց շատ են կտրատւած։ Այդ ափերը յայտնի են բազմաթիւ նեղ, երկար և խոր ծոցերով, որոնք կոչւում են *Ֆիոռդներ*։ Դրանց մուտքի մօտ գտնւում են բազմաթիւ ժայռոտ կղզիներ, որոնք նկարչական տեսարան ունին, թերակղզու հիւսիս-արևմտեան կողմում ձգւած են *Լաֆոդենեան* կղզիները, որոնց մակերևոյթի կազմութիւնը լեռնոտ է։

Սկանդինավիա թերակղզու արևմտեան ափը լեռնոտ և բարձր է, իսկ արևելեանը հարթ և ցածր։ Ռուսման կողմից թերակղզին շատ նպաստաւոր պայմանների մէջ է գտնւում։ Սկանդինավիան հարուստ է մի շարք գետերով, լճերով և ճահիճներով. գետերից նշանաւոր են *Մօրնէօ*, *Դալէլվ*, *Գոթա*, *Կլարա*, *Գլոմմէն* և *Թարա*, իսկ լճերից՝ *Մելար*, *Վետտէրն* և *Վենէրն*։ Վերջին երկու լճերը միացած են իրար հետ *Գոթայի* ջրանցքով։

Թերակղզու արևմտեան մասի՝ Նորվեգիայի կլիման ծովային է, որովհետև օվկիանոսին շատ մօտ է. հարաւ-արևմտեան հողմերը և *Գոլֆշտրոմը* սաստիկ մեղմացնում են ձմեռը, այն ինչ արևելեան մասում՝ Շվեդիայում, որ օվկիանոսից բաւական հեռու է, կլիման աւելի ցամաքային է. ձմեռը Նորվեգիականից աւելի տաք։

Սկանդինավիայի բուսական և կենդանական աշխարհը

բոլոր մասերում միատեսակ չէ. թերակղզու հարաւային մասի փլօրան և ֆաունան յիշեցնում է գերմանականը, այն ինչ հիւսիսայինը զգալի կերպով ազդած է և ոչ բազմազան։ Սկանդինավիա թերակղզին բաղկացած է երկու՝ միմիանցից անկախ պետութիւններից. Նորվեգիայից և Շվեդիայից։

ՇՎԵԴԻԱ ԵՒ ՆՈՐՎԵԳԻԱ

Այս երկու երկիրներն ունին շատ նօսր ազգաբնակութիւն չնայելով որ բաւական մեծ տարածութիւն են ներկայացնում, դրա գլխաւոր պատճառը երկրի լեռնոտ դիրքը, լճերը, դետերը, ճահիճները և խիտ անտառներն են։ Ամբողջ թերակղզու ազգաբնակութիւնը բաղկացած է Նորվեգիացիներից, շվեդներից և ֆիններից։ Առաջին երկուսը պատկանում են գերմանական ցեղին և դաւանութեամբ բողոքական են։

Տարրական կրթութիւնը պարտադիր է երկու երկիրների ամբողջ ազգաբնակութեան համար. իւրաքանչիւր երկիր ունի իր տարրական, միջնակարգ և բարձրագոյն դպրոցները, որոնք բաւական ծաղկած վիճակի մէջ են գտնւում։

Շվեդիայի և Նորվեգիայի բնակիչները պարապում են անասնապահութեամբ, հողագործութեամբ, ձկնորսութեամբ, արդիւնագործութեամբ և վաճառականութեամբ։ Մշակելի հողի քանակութիւնը չնչին տարածութիւն է կազմում և դրա համար էլ հողագործութեան արդիւնքները բաւականութիւն չեն տալիս թերակղզու ամբողջ ազգաբնակութեան. ամենից շատ Նորվեգիան ստիպած է օտար երկիրներից հացահատիկներ ներմուծել։ Հողագործութիւնը շատ զարգացած է Շվեդիայի հարաւային մասում։ Անասնապահութիւնը զարգացած է առատ արօտատեղիների շնորհիւ։ Արդիւնագործութիւնը համեստ չափով զարգացած է Սկանդինավիայի

երկու երկրներում. այդ բանին նպաստում են երկաթի և պղնձի հանքերը, որոնցով բաւական հարուստ են Սկանդինավիայի լեռները։ Սկանդինավիան ներմուծում է քարածուխ, հացահատիկներ, մեքենաներ, սուրճ և այլն և արտահանում է փայտ, երկաթ, իւղ, ձկներ, լուցկի և այլն. նրա առևտրական նաւատորմը աշխարհումս իններորդ տեղն է բռնում։

Սկանդինավիայի երկու երկիրները անկախ թագաւորութիւններ են. կառավարութեան կազմը սահմանադրական միապետութիւն է։ Շվեդիայի թագաւորի իրաւունքները սահմանափակում է շվեդական բայխստագը, իսկ Նորվեգիայի թագաւորը՝ ստորտինգը։

Շվեդիայի քաղաքներից նշանաւոր են.

Ստոկհոլմ, երկրի մայրաքաղաքը և տէրութեան ամրոցանիստն է, ունի մօտ 300,000 բնակիչ և նշանաւոր հանանիստն է, ունի մօտ 300,000 բնակիչ և նշանաւոր հանանիստ է։ Ստոկհոլմը ամբողջ երկրի մտաւոր կենտրոնը և մայրարան։ Ստոկհոլմը գեղեցկութեամբ առաջին գործարանական քաղաքն է։ Դիրքի գեղեցկութեամբ նրա հետ կարող են մրցել միայն Լիսսաբոն, Նիապոլ և Կ. Պոլիս քաղաքները։ Երկրորդ քաղաքն է Ուպսալա, որ նշանաւոր է իր համալսարանով։ Կարլսկրոնա—Շվեդիայի պաշտպերազմական նաւահանգիստն է։ Գոթենբուրգ—Շվեդիայի երկրորդ նշանաւոր առևտրական քաղաքն է։

Նորվեգիայի քաղաքներից նշանաւոր են.

Խրիստիանիա - տէրութեան մայրաքաղաքը և թագաւորի ամրոցանիստը. ունի մօտ 200,000 բնակիչ և յայտնի համալսարան. բնակիչները առևտուր են անում փայտով և երկաթով։ Բերգէն—առևտրական նշանաւոր քաղաք է։ Համմերֆեստ—աշխարհիս ամենահիւսիսային առևտրական նաւահանգիստն է։ Դրոնտհայմ—պղնձի և ձկների մեծ առևտուր ունի։

. . . . . .

ՎԵՐՋ

ՅԱՆԿ

Յառաջաբան 4

ԵՒՐՕՊԱ

Եւրոպայի դիրքն ու մեծութիւնը 5
Եւրոպայի ափերի դծագրութիւնը 6
Եւրոպայի մակերևոյթի կազմութիւնը 7
Եւրոպայի ռոդումը 8
Եւրոպայի կլիման 10
Եւրոպայի բուսականութիւնը 12
Եւրոպայի կենդանիները 13
Եւրոպայի ազգաբնակութիւնը 14
Բալկանեան թերակղզու պետութիւններ և ազգերը . . . 17
Ռումինիայի թագաւորութիւն 21
Չերնոգորիայի իշխանութիւն 22
Յունաստանի թագաւորութիւն 23
Բուլղարիայի իշխանութիւն 25
Սերբիայի թագաւորութիւն 27
Եւրոպական Թիւրքիա 28
Ապենինեան թերակղզի 32
Իտալիայի թագաւորութիւն 34
Պիրինեան թերակղզի 40
Պորտուգալիայի թագաւորութիւն 42
Իսպանիայի թագաւորութիւն 44
Զվէյցարիայի հանրապետութիւն 51
Գերմանիայի կայսերութիւն 55
Պրուսիայի թագաւորութիւն 61
Սաքսոնիայի թագաւորութիւն 63
Բաւարիայի թագաւորութիւն 64
Վիւրթենբէրգի թագաւորութիւն 65
Աւստրօ-Ունգարիայի կայսերութիւն 66
Հոլանդիայի թագաւորութիւն 74
Բելգիայի թագաւորութիւն 77
Ֆրանսիայի հանրապետութիւն 80
Անգլիայի թագաւորութիւն 87
Դանիայի թագաւորութիւն 94
Սկանդինաւիա 97
Զվեդիա և Նորվեգիա 98

Հայաստանի Ազգային գրադարան
NL0429622

22930
20530
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ-«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ»-Ի։

1. Պօմպէյի վերջին օրերը, Թ. Ց. Միրզայեանի .	1—50 կ.
2. Աապետ, Վ. Փափազեանի . . .	15 կ.
3. Կեանքը ծովերի խորքում, Լունկեվիչի, թարգմ. Ստ. Մալխասեանի	30 կ.
4. Տրիլբի, դրամա 4 արար. Թ Լ. Մելիք-Ադամ.	25 կ.
5. Նաղ-ասա, վոդ. 1 արար. Ցակ. Ղազարեանի .	25 կ.
6. Դարվինիզմ, Ս. Բալաղեանի. . . .	50 կ.
7. Աղնիւ զոդ, Ֆ. Մ. Դօստոեվսկու, Թ. Ն. Զ.	10 կ.
8. Ինքնավարութիւն և Զեմստվո, Բէլօկոնսկու. թարգմ. Կ. Ջալալեանի	15 կ.
9. Տնտեսագիտական զրոյցներ, Կարիշևի, թարգմ. Կ. Ջալալեանի	40 կ.
10. Къ введенію на Кавказѣ Земскаго Самоуправленія, Кн. Г. М. Туманова. . . .	20 к.
11. Քերականութիւն մայրենի լեզուի, Ա. Բ. և Գ. մաս. Ստ. Պալասանեանի	75 կ.
12. Ընդհանուր, պատմ. Հին-Դար, Վինագրադովի թարգմ. Խաչակի	1 ր.
13. Եւրոպա և Հայաստան, Ամֆիտեատրովի, թարգմ. Ա. Մխիթարեանցի.	10 կ.
14. Փուչ զաւակ, դրամա 5 գործ. Գ. Ղարաջեանի.	50 կ.
15. Արիւնի աւետարանը, թարգմ. Տ. Զաւէնի .	25 կ.
16. Գծագրութեան օրինակներ, Լեոնեան Ա. մաս .	20 կ.
17. Բ մաս » » » » .	20 կ.
18. Գ մաս » » » » .	35 կ.
19. Դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան քաղաքական մաս կազմից Լ. Բաբալեան . .	65 կ.
20. Начальная книжка для армян. школъ С. М. .	55 к.
21 Կառապան Հենչէլ, դերմ. թարգմ. Լ. Բաբալեան	50 կ.
22. Հող և նրա մշակութիւն, Գ. Ղազարեանի .	20 կ.
23. Դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան, Գ. մաս, կազմից Լ. Բաբալեան . . .	50 կ.
24. Սերմ և ցանք, Գ. Ղազարեանի . . .	25 կ.
25. Դիքորը, Յովհաննէս Թումանեանցի . .	20 կ.

Գրախանութը վերոգիր վճարով ուղարկում է նրանց, որոնք ուղարկում են կանխավճար։ Դիմել.—Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“ Г. И. Галустяну.

Մամուլի տակ է և շուտով լոյս կտեսնի Ընդհանուր աշխարհագրութիւն Ա. Բնական մաս (պատկերազարդ)։